ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՔԱՐՅԱՆ
ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 7

Սփյուռքի դպրոցների համար
(արևելահայերեն ուսուցմամբ)

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 373:811.19
ԳՄԴ 81.2Հ g72
Զ 431

Զաքարյան Հ., Ավետիսյան Յ.
Զ 431 Հայոց լեզու 7: Սփյուռքի դպրոցների համար/Հ. Զաքարյան, Յ. Ավետիսյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2019.— 144 էջ:

Սույն դասագիրքը նախատեսված է Սփյուռքի հայկական այն դպրոցների համար, որոնցում ուսուցումն իրականացվում է արևելահայերենով: Սա «Հայոց լեզու 6» դասագրքի շարունակությունն է: Սիրով կընդունենք դասագրքի կատարելագործմանն ուղղված դիտողություններն ու առաջարկությունները: Մեզ կարող եք գրել հետևյալ հասցեներով.

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
info@zangak.am

ՀՏԴ 373:811.19
ԳՄԴ 81.2Հ g72

ISBN 978–9939–68–755–1

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2019

ԿԱՊ

ԴԱՍ 1

ԿԱՊՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Որևէ բառ բային կապող և նրա հետ միասին բայական անդամի լրացում դարձող բառը կոչվում է կապ:

Օրինակ՝ *(գնացին) դեպի կենտրոն, սեղանի շուրջը (նստած), (զոհվեց) հանուն հայրենիքի, քո փոխարեն (կաշխատեմ):*

Ինքնուրույն գործածություն չունի և առանձին վերցրած՝ նախադասության անդամ չի լինում:

Որևէ հարց չի ստանում: Խոսքիմասային հատուկ ձև չունի:

Որպես կանոն՝ չի ձևափոխվում: Միայն գոյականներից առաջացած և տարածական հարաբերություն արտահայտող մի քանի կապեր (*մոտ, վրա, տակ, մեջ, առաջ, առջև, դիմաց, դեմ և այլն*) ունեն նաև հոլովված, հոգնակի, հոդով ձևեր (*մոտից, մոտով, մոտները, մոտդ, վրայի, վրայից, առջևի, առջևով, առջևում և այլն*), որոնք նույնպես կապի դեր են կատարում:

Կապվող բառի հետ միասին արտասանական ամբողջություն է կազմում և ունենում է մեկ շեշտ: Կապվող բառից առաջ դրվելիս սովորաբար անշեշտ է մնում (*առանց քեզ*): Կապվող բառից հետո դրվելիս սովորաբար շեշտվում է (*ափսեի մեջ*), իսկ կապվող բառը մնում է անշեշտ:

Նյութական իմաստ չունի: Ունի միայն քերականական իմաստ՝ արտահայտելով տրամաբանական, տարածական կամ ժամանակային հարաբերություն: Այդ իմաստը նման է հոլովական իմաստին: Ուստի կապն ունի մոտավորապես այն նշանակությունը, ինչ հոլովական վերջավորությունը, բայց, ի տարբերություն դրա, առանձին բառ է, գրվում է կապվող բառից անջատ՝ իբրև **սպասարկու** բառ:

Կապը նախադասության անդամ կարող է դառնալ միայն ստացական հոդով (փոխանվանաբար) գործածվելիս, քանի որ այդ դեպքում հոդը փոխարինում է անձնական դերանվամբ արտահայտված կապի խնդրին (կապվող բառին). **Մոտս** (= ինձ մոտ) փող չկար:

Կապը կարող է դրվել կապվող բառից առաջ կամ հետո: Ըստ այդմ լինում են երեք տեսակի կապեր.

1. **Նախադրություններ՝** *առ, առանց, դեպի, զերդ, ընդ, ըստ, ի, ի դեմս, ի հաշիվ, ի հեճուկս, ի փառս, իբր(և), որպես, հանձին(ս), հանուն, հօգուտ, մինչ(և), նախքան, փոխանակ:*

Դրվում են կապվող բառից առաջ՝ *առանց ինձ, դեպի տուն, իբրև ուսանող, փոխանակ սովորելու, հօգուտ մեզ:*

2. **Հետադրություններ՝** *անց, առթիվ, առջև, դեմ, դիմաց, զատ, ի վար, ի վեր, համար, հանդերձ, հետ, մասին, մեջ, միջև, ներքո, նման, շուրջ(ը), պես, վերաբերմամբ, վերաբերյալ, վրա, տակ, փոխարեն, օգտին, օրոք* և այլն:

Դրվում են կապվող բառից հետո՝ *տոնի առթիվ, քեզնից զատ, սովորելու փոխարեն, մեր օգտին, գալուց առաջ:*

3. **Երկդրություններ՝** *բացի, ընդդեմ, հանդեպ, շնորհիվ:*

Կարող են դրվել կապվող բառից թե՛ առաջ, թե՛ հետո՝ *դրանից բացի, բացի դրանից, նրա շնորհիվ, շնորհիվ նրա:*

ԿԱՊԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Կապերը մեծ մասամբ առաջացել են տարբեր բառերից ու բառաձևերից՝ գոյականներից (չափ, համար, շնորհիվ, մասին), ածականներից (առընթեր, զատ), դերբայներից (վերաբերյալ), մակբայներից (հետ, պես, ընդդեմ), նախդիրներից (առ, ըստ, ի), կապակցություններից (առ անց, դեպ ի, բաց ի, նախ քան, ի վեր, ի հաշիվ)՝ հաճախ նրանց իմաստի մթագնմամբ: Դրանք ըստ կազմության լինում են՝

- **պարզ՝** առ, դեմ, զատ, ըստ, ի, համար, հետ, չափ, պես,
- **բաղադրյալ,** այդ թվում՝
  1. **ածանցավոր՝** վերաբերյալ, նկատմամբ, իբրև, միջև,
  2. **բարդ,** որոնք լինում են՝
     * **կցական՝** առանց, ընդդեմ, դեպի, բացի, նախքան,
     * **հարադրավոր՝** ի վեր, ի հաշիվ, ի պատիվ, ի փառս:

Վարժություններ

1. Ընդգծեք 5 կապ.

ա. դեպի, երբեք, քանի, զերդ, ընդ, կամաց, հազիվ, դեմ, զատ, երիցս

բ. դեռ, առ, մասամբ, ուր, ի փառս, իբրև, դարձյալ, հետ, ձեռաց, մասին

գ. շնորհիվ, կրկին, հօգուտ, միշտ, երբ, մինչև, գրեթե, առթիվ, նման, միասին

2. Ընդգծեք կապերը.

1. Դու անհոգ նայեցիր ինձ վրա Ու անցար քո խաղով կանացի...
2. Հուսաբեկ մութ ու մեգ թող լինի, Իմ վերև թող արև չխնդա. Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի, Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա...
3. Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
4. Այնպե՛ս անխինդ են և նման լացին Երգերն իմ երկրի, այնպե՛ս տխրագին...

ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Կան գոյականներ (ժամանակ, կողմ, չափ, տեղ, անունից, գծով, բացառությամբ, դեպքում), ածականներ (անկախ, զուգընթաց, կից, հակառակ, համընթաց, հավասար, նման, պակաս, տարբեր), դերբայներ (անցած, նայած, չհաշված, սկսած), մակբայներ (առաջ, դուրս, հետո, հեռու, մոտ, ներս, ներքև, շուրջը), կապակցություններ (հիման վրա), որոնք հաճախ գործածվում են նաև որպես կապ: Այսինքն՝ մի դեպքում դրանք կապ են (**Համաձայն** քո խնդրանքի՝ եկա), մի այլ դեպքում՝ այլ խոսքի մաս (Ես քեզ հետ **համաձայն** չեմ):

Կապական բառերից հետադրություններ են՝ *անունից, անունով, առաջ, առթիվ, գծով, դեպքում, դուրս, երեսից, զուգընթաց, ընթացքում, ժամանակ, կից, կողմ, կողմից, համեմատ, հանդիման, հավասար, հետո, հետևանքով, հիման վրա, ձեռքով, միջոցին, միջոցով, մեկ, մոտ, ներս, ներքև, նկատմամբ, նպատակով, շուրջը, չափ, պատճառով, վար, վեր(և), տարբեր, տեղ, ուղղությամբ, ցած* և այլն:

Նախադրություններ են՝ *նայած, չնայած:*

Երկդրություններ են՝ *անկախ, անցած, բացառյալ, բացառությամբ, հակառակ, համաձայն, համապատասխան, հեռու, ներառյալ, չանցած, չհաշված, սկսած:*

Վարժություններ

3. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը կապական բառ.

ա.

1. Դուրսն արդեն ցուրտ է, և զգացվում է ձմռան շունչը:
2. Իսկ ես կարծում էի, թե դուք ձեր գյուղից դուրս աշխարհ չեք ճանաչում:

Բ.

1. Իրենց դիմումի համաձայն՝ նրանք ճանաչվեցին ՀՀ քաղաքացի:
2. Շատերը լռում էին, որովհետև մեզ հետ համաձայն էին:

Գ.

1. Խնջույքի ժամանակ Սամվելը չէր կարողանում լիասիրտ ուրախանալ:
2. Ես ժամանակ չունեմ քեզ հետ վիճելու անմիտ բանի շուրջ:

Դ.

1. Արարքի արժեքը չափվում է նպատակով:
2. Քաղաք մեկնեց՝ որդուն տեսնելու նպատակով:

Ե.

1. Երկուսն էլ հավասար ուժեր են. դժվար է ասել՝ ով կհաղթի:
2. Մեր դպրոցում Գարեգինին հավասար սովորող չկա:

Զ.

1. Մարդու վերքը, մարդու ցավը ո՛չ տակ ունի, ո՛չ չափ ունի:
2. Սևուկը կուչ եկավ սեղանի տակ՝ սպասելով տիրոջ նշանին:

Է.

1. Անծայր, անորոշ, անձև տենչերով ձգտում է հոգիս հեռու, շատ հեռու:
2. Գյուղից հեռու մի կիսավեր վանք կա, գնա՞նք տեսնենք:

Ը.

1. Աղջիկը լաց լինելու չափ հուզվել էր:
2. Բանաստեղծությունը կարող է և չափ չունենալ, եթե արձակ է:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

XX դ. խոշորագույն երգահաններից է: Մեծ ազդեցություն է թողել հայ և Արևելքի ժողովուրդների երաժշտության զարգացման վրա, համաշխարհային ասպարեզ դուրս բերել հայ ազգային երաժշտարվեստը:

Ծնվել է 1903 թ. հունիսի 6–ին Թիֆլիսում: Ծնողները հինավուրց Գողթան գավառից էին, որը պատմահայր Մովսես Խորենացին գովերգել է որպես շնորհալի երգիչ–երաժիշտների հայրենիք:

Ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանը և Պ. Զայկովսկու անվան պետական երաժշտանոցը: 1957–ից ԽՍՀՄ երգահանների միության քարտուղարն էր:

Նրա ստեղծագործությունները նշանավորել են հայկական երաժշտարվեստի պատմական զարգացման նոր շրջանը: Նրա ստեղծագործական ոճը ձևավորվել է համաշխարհային երաժշտարվեստի փորձի հիման վրա և բխում է հայ երաժշտական մշակույթից: Իր երկերում լայնորեն օգտագործել է հայկական ժողովրդական մեղեդիներ ու ռիթմեր:

Հայ երաժշտությունը հարստացրել է նոր կերպարներով, ձևերով ու արտահայտչամիջոցներով: Ազգային առաջին բալետի՝ «Գայանե»–ի, ՀԽՍՀ օրհներգի հեղինակն է, հայկական կինոերաժշտության հիմնադիրը («Պեպո», «Զանգեզուր»): Գրել է նաև երաժշտություն թատերական ներկայացումների համար («Պաղտասար աղբար», «Ատամնաբույժն արևելյան», «Խաթաբալա», «Մակբեթ», «Լիր արքա», «Վալենսիայի այրին», «Դիմակահանդես»): Նշանավոր երկերից են 3 համանվագները (սիմֆոնիա), համերգները և համերգ–ռապսոդիաները ջութակի, թավջութակի, դաշնամուրի և նվագախմբի համար, դաշնամուրային տոկատան, «Սպարտակ» բալետը և այլն:

1950–ից, որպես նվագավար, հեղինակային համերգներով շրջագայել է բազմաթիվ երկրներում:

Վախճանվել է 1978 թ. մայիսի 1–ին Մոսկվայում: Թաղված է Երևանում՝ Կոմիտասի անվան պանթեոնում:

Երևանում նրա անունով են կոչվել համերգասրահ (որի առջև տեղադրված է նրա արձանը), լարային քառյակ, երաժշտական դպրոց և փողոց: 1984–ին Երևանում բացվել է նրա տուն–թանգարանը, 2003–ից կազմակերպվում է երաժիշտ կատարողների՝ Արամ Խաչատրյանի անվան ամենամյա միջազգային մրցույթը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Արամ Խաչատրյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Արամ Խաչատրյան» գրվածքում գտի՛ր կապերը և որոշի՛ր դրանց կազմությունը:

ԴԱՍ 2

ԿԱՊԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ իրենց արտահայտած քերականական իմաստների՝ կապերը և կապական բառերը սովորաբար բաժանվում են ինը խմբի.

1. **տեղի՝** *առաջ, առջև, դեմ, դեմ դիմաց, դեմ հանդիման, դեպի, դիմաց, դուրս, եփ, ի վա(յ)ր, ի վեր, (ընդ)դեմ, կից, հանդեպ, հեռու, հետև, մեկ, մեջ, միջև, մոտ, ներս, ներքո, ներքև, շուրջ(ը), վեր, վերև, վրա, փակ, ցած,*
2. **ժամանակի՝** *անց, անցած, առ, առաջ, ընթացքում, ժամանակ, հետո, մինչև, միջոցին, նախքան, պահին, սկսած, օրով, օրոք,*
3. **ձևի՝** *առանց, ասես, զերդ, ի հաշիվ, ի տարբերություն, իբրև, ինչպես, կերպ, համեմատ(ությամբ), հանգույն, նման, ոնց որ, որպես, պես, տարբեր,*
4. **չափի՝** *չափ, ավել(ի), պակաս, հավասար, աստիճան(ի),*
5. **վերաբերության՝** *մասին, նկատմամբ, վերաբերյալ, վերաբերմամբ, հասցեին, շուրջ,*
6. **միասնության՝** *հետ, հանդերձ, ներառյալ, համընթաց, զուգընթաց, ի թիվս, ի շարս,*
7. **նպատակի՝** *ի, ի գիտություն, ի զարմանս, ի լրումն, ի լուր, ի կատարումն, ի խնդիր, ի խրատ, ի հակակշիռ, ի նշան, ի շահ, ի պաշտպանություն, ի պատասխան, ի պատիվ, ի պետս, ի սեր, ի տես, ի տնօրինություն, ի տրիտուր, ի փառս, համար, հանուն, հօգուտ, նպատակով, օգտին,*
8. **պատճառի՝** *հետևանքով, շնորհիվ, պատճառով, երեսից, ձեռքից, կապակցությամբ, առթիվ,*
9. **հիմունքի՝** *ըստ, համաձայն, համապատասխան, նայած, հիման վրա,*
10. **զիջման՝** *անկախ, հակառակ, չնայած, չնայելով, չհաշված, ի հեճուկս, հանդերձ,*
11. **բացառման՝** *առանց, բացառյալ, բացի, բացառությամբ, ի բաց առյալ, դուրս, զատ, փոխարեն, փոխանակ, տեղ(ակ),*
12. **բացահայտման՝** *որպես, իբրև,*

13. **ներգործության՝** *կողմից, ձեռքով,*
14. **դիմառնության՝** *հանձին(ս), ի դեմս,*
15. **պայմանի՝** *դեպքում:*

Որոշ կապեր բազմիմաստ են, օրինակ՝ **առաջ, մեջ, մինչև, մոտ** (տեղի և ժամանակի), **համար** (նպատակի և պատճառի), **պես** (ձևի և ժամանակի), **առթիվ** (պատճառի և վերաբերության), **առանց** (ձևի և բացառման), **շուրջ** (տեղի և վերաբերության), **որպես, իբրև** (ձևի և բացահայտման), **հանդերձ** (միասնության և զիջման):

ԿԱՊԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կապը նախադասության մեջ օժանդակ (սպասարկու) բառ է, որի հիմնական դերը որևէ բառ բային կապելն է և այդ բառի հետ միասին բայի լրացում դառնալը. *Նա համաժողովին կմասնակցի* ***որպես դիտորդ****: Այդ* ***գործի վերաբերյալ*** *ես դեռ մտածում եմ: Եկավ իր* ***եղբոր հետ****:*

Առանց, բացառյալ, բացի, զատ, իբրև, որպես, հանդերձ, հակառակ, մասին, ներառյալ, նման, չնայած, չափ, պես, վերաբերյալ, փոխանակ և մի քանի այլ կապեր որևէ բառ կարող են կապել ոչ միայն բային, այլև նախադասության ոչ բայական որևէ անդամի. *Բացի ինձնից՝* ***բոլորը*** *ներկա են եղել:* ***Ես՝*** *որպես պարտաճանաչ մարդ, մնացի սենյակում: Քեզ երեկ ուղարկել եմ 2* ***նամակ*** *այդ ծրագրի վերաբերյալ: Քեզ նման* ***խելոք*** *երեխա ես չեմ տեսել:*

ԿԱՊԻ ՏՐՈՀՈՒՄԸ

Կապերի մեծ մասը տրոհում չի պահանջում. ***Ինձ համար*** *մի՛ անհանգստացիր: Ես* ***մինչև վերջ*** *կպայքարեմ* ***հանուն այդ նպատակի****:*

Հիմունքի և զիջման կապերով *(ըստ, համաձայն, նայած, չնայած, հակառակ, փոխանակ)* ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից սովորաբար տրոհվում են միջադաս դիրքում ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բութով: Այդպես կարող են տրոհվել նաև բացառման որոշ կապերով *(բացառյալ, բացառությամբ, բացի, չհաշված, անկախ, զատ)*, ինչպես նաև *ներառյալ* կապով ձևավորված անդամները. *Բոլոր տասներորդցիները,* ***բացի ինձնից****, շահեցին մրցանակներ: Իսկ միջնադարյան Եվրոպայի քաղաք-*

ներն ընդհանրապես, ***բացառյալ Հռոմը և Փարիզը****, Անից շատ ավելի փոքր են եղել: Բաժինը կազմված է յոթ հոգուց՝* ***ներառյալ վարիչը****:*

Բացահայտման և դիմառնության կապերով *(իբրև, որպես, հանձինս, ի դեմս)* ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից սովորաբար տրոհվում են հետադաս դիրքում բութ–ստորակետով, նախադաս դիրքում՝ ստորակետ–բութով. *Եկեք խմենք,* ***հանձին մեր պանծալի գեներալի****՝ հաղթական Ռուսիայի կենացը:*

Վարժություններ

1. Փակագծերում տրված բառերից ընդգծեք տվյալ նախադասությանը համապատասխանողը.

ա. Հրացաններ որոտացին, և շողացին սրեր, ամպերի *(փոխարեն, փոխանակ)* քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը:

բ. Մենք այսօր առաջատար ենք *(ի շնորհիվ, շնորհիվ)* քո ձեռներեցության:

գ. Գետն անցնելիս *(փոխանակ, փոխարեն)* ծանծաղուտ գտնելու՝ ընկել էր հորձանուտը և հազիվ էր փրկվել խեղդվելուց:

դ. Գործը սկսելուց առաջ պետք է մի քանի օր ծանոթանամ *(նյութերին, նյութերի հետ)*:

ե. Եղանակային անբարենպաստ պայմանների *(հետևանքով, շնորհիվ)* այս տարի պտղատու այգիները բերք չտվեցին:

զ. Ջանասիրության *(շնորհիվ, պատճառով)* քույրս միշտ եղել է գերազանցիկ:

է. Ամեն ինչ հասկացա՝ բացառությամբ Ձեր ասած վերջին *(նախադասությունից, նախադասության)*:

ը. Դպրոցականների կյանքի անվտանգությունն ապահովելու *(կապակցությամբ, համար)* կառուցվեց ստորգետնյա անցում:

թ. Մենք կանգնած էինք իրար *(դեմ դիմաց, դեմ–դիմաց)* և լուռ նայում էինք մեկմեկու:

ԼՈՌՈՒ ԴԱՇՏ

Հայաստանի Հանրապետության համեմատաբար ընդարձակ հարթավայրերից է Լոռու սարավանդը, որ երկրի հյուսիսում է: Դա եռանկյունաձև միջլեռնային տափաստանային հարթավայր է, Ջորագետի ավազանի հովտային շրջանը: Երկարությունը 50 կմ է, լայնությունը՝ 20: Ձգվում է հյուսիս–արևմուտքից հարավ–արևելք՝ Ջորագետի հոսանքի ուղղությամբ՝ 1300–1600 մ բարձրության վրա: Հարավից եզերված է Բազումի լեռնաշղթայով, որ ջրբաժան է Ջորագետի և Փամբակի միջև: Նրանում փորված գետնուղիով Լոռվա սարահարթը կապվում է Փամբակի հովտին:

Լոռու դաշտը հարթ ալիքավոր է: Նրա հարավարևելյան մասում գետերի հունը գնալով խորանում է (մինչև 250 մ)՝ վերածվելով կիրճերի: Ջրային հիմնական բազուկը Ջորագետն է՝ Տաշիր, Հերհեր, Ուռուտ, Սևգետ, Ձքնաղ, Լոռիգետ, Հովանաջուր և այլ վտակներով:

Լոռու դաշտում են միջնադարյան ճարտարապետության մի շարք հուշարձաններ՝ Խուճապի վանքը (13–րդ դ.), Ս. Գևորգ եկեղեցին (6–17–րդ դդ.), Մեծավանի եկեղեցին (5–6–րդ դդ.), Տուտիկ իշխանի մահարձանը (1241 թ.), Լոռե բերդաքաղաքի ավերակները և այլն:

Լոռու սարահարթի գլխավոր բնակավայրը՝ Ստեփանավանը, Ջորագետի աջ ափին է՝ անտառապատ Արջասարի ստորոտին՝ 1400 մ բարձրության վրա: Ամբողջապես կանաչի և այգիների մեջ թաղված այս քաղաքը Հայաստանի առողջարանային գեղեցիկ վայրերից է:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Լոռու դաշտի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Լոռու դաշտ» գրվածքում գտի՛ր կապերը և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 3

ԿԱՊԻ ՀՈԼՈՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Կապվող բառը յուրաքանչյուր կապի կամ կապական բառի հետ լինում է որոշակի հոլովով: Կապի՝ որոշակի հոլով պահանջելու այս հատկությունը կոչվում է **կապի հոլովառություն** կամ **կապական խնդրառություն**, օրինակ՝ *սարերի միջև, դրանով հանդերձ, ինձնից բացի, ինձ համար:*

1. Ուղղականաձև կապվող բառ են պահանջում՝

- **առ, բացառյալ, դեպի, զերդ, ի, ի վար, մինչ(և), նախքան, ներառյալ, չանցած, չհաշված** կապերն ու կապական բառերը՝ *դեպի փուն, նախքան մեկնելը, ներառյալ վերջինը:*

Սրանցից մի քանիսը (**առ, դեպի, մինչ(և), նախքան**) տրական հոլով են պահանջում առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններից *(առ մեզ, դեպի ինձ, մինչև քեզ, նախքան ձեզ)*, իսկ **չհաշված**–ը՝ նաև երրորդ դեմքի դերանունից և անձնանիշ գոյականներից *(չհաշված ինձ, նրան և աղջիկներին)*:

2. Սեռական–տրականաձև անորոշ առմամբ կապվող բառ են պահանջում՝

- **առթիվ, առջև, դեմ, դիմաց, երեսից, ընթացքում, ժամանակ, կողմից, համար, հասցեին, հետ, հետևանքով, հիման վրա, հօգուտ, ձեռքից, մասին, մեջ, միջև, միջոցով, մոտ, ներքո, նկատմամբ, նպատակով, շուրջ(ը), չափ, պատճառով, պես** (ձևի), **վերաբերմամբ, վերաբերյալ, վրա, տեղ, փոխարեն, քով, օգտին, օրոք** հետադրությունները՝ *երգելու ընթացքում, բոլորի չափ, տղայի փոխարեն, ինչի՞* վերաբերյալ,
- **առանց, բացառությամբ, ընդդեմ, ըստ, ի դեմս, ի հաշիվ, ի թիվս, ի լրումն, ի հեճուկս, ի նպաստ, ի պատիվ, ի տարբերություն, ի փառս, հանձին(ս), հանուն, փոխանակ** նախադրությունները՝ *առանց կնոջ, ըստ սովորության, հանուն արդարության, առանց գլխարկի, ի հեճուկս ծնողների,*
- **համեմատ, հանդեպ, շնորհիվ** երկդրությունները՝ *տարիքի համեմատ, ապագայի հանդեպ, շնորհիվ խելքի:*

Սեռական–տրականաձև կապվող բառը նաև կամ միայն որոշյալ առմամբ կարող է լինել **առընթեր, զուգընթաց, ընդառաջ, կից, հակառակ, համաձայն, համապատասխան, հավասար, նայած, նման, չնայած, չնայելով, պես** (ժամանակի) կապերի կամ կապական բառերի հետ՝ *դպրոցին կից, չնայած հանգամանքներին, ասածին հակառակ, մտնելուն պես:*

Անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերը՝

- տրական հոլովով են լինում **համար, հետ, մոտ, նման, պես, վրա** հետադրությունների և **առ, առանց, դեպի, ընդդեմ, հօգուտ, ըստ, ի դեմս, հակառակ, համաձայն, հանձին(ս), հանուն, մինչ(և), նախքան, նայած, չնայած** նախադրությունների հետ *(ինձ մոտ, քեզ վրա, մեզ պես, ձեզ հետ, ինձ համար, քեզ նման, առանց մեզ, ըստ ձեզ, հանուն ինձ, հակառակ քեզ, համաձայն մեզ),*
- սեռական հոլովով են լինում սեռական–տրականաձև գոյական վերցնող մյուս հետադրությունների հետ *(իմ առջև, քո դիմաց, ձեր ժամանակ, մեր միջև, ձեր մասին, իմ նկատմամբ, քո շնորհիվ, նրա շուրջը, մեր պատճառով, ձեր փոխարեն, քո մեջ, իմ չափ, ձեր առթիվ),*
- **համեմատ, շնորհիվ** երկդրությունների հետ սեռական հոլովով են լինում նախադաս դիրքում *(ձեր շնորհիվ, մեր հանդեպ)* և տրական հոլովով՝ հետադաս դիրքում *(շնորհիվ ձեզ, հանդեպ մեզ):*

Նայած, չնայած կապական բառերը տրական հոլով են պահանջում նաև **սա, դա, նա** ցուցական դերանուններից *(չնայած դրան):*

Մոտ, վրա հետադրությունների թեք ձևերի հետ անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերը լինում են սեռական հոլովով՝ *իմ մոտից, քո մոտով, մեր վրայի, ձեր վրայից:*

3. Բացառական հոլովով կապվող բառ են պահանջում՝

- **անց, առաջ, ավել(ի), դուրս, զատ, հետո, ներս, ներքև, պակաս, վար, վեր(և), տարբեր, ցած** հետադրությունները՝ *ինձնից զատ, քեզնից հետո, խելքից դուրս, չափից ավելի,*
- **անկախ, բացի, հեռու, սկսած** երկդրությունները՝ *դրանից բացի, երկրորդից սկսած, անկախ քեզնից:*

Ներքև, վերև հետադրությունների թեք ձևերը պահանջում են սեռական–տրականաձև անորոշ առմամբ կապվող բառ՝ *սեղանի ներքևում, շենքի վերևից, իմ վերևից, քո վերևով, մեր ներքևում, ձեր ներքևի:*

4. Գործիական հոլովով կապվող բառ են պահանջում՝

- **հանդերձ, մեկտեղ, մեկ**, երբեմն՝ **չափ** հետադրություններ՝ *ընտանիքով հանդերձ, բոլորով մեկտեղ, գյուղով մեկ, քաշով մեկ, կիսով չափ:*

5. Տարբեր հոլովներով կապվող բառ են պահանջում՝

- **առաջ, ի վեր, ինչպես (որ), ոնց (որ), որպես, իբրև, ասես, հետո, անց** կապերն ու կապական բառերը՝ *տան առաջ, օրեր առաջ, քնելուց առաջ, իբրև ուսուցիչ, իբրև մարդու, իբրև քրոջից, սարն ի վեր, անկախանալուց ի վեր, երեք օր հետո, քեզնից հետո, տարիներ անց, հիսունից անց* և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կապերը ներգոյական հոլովով կապվող բառ սովորաբար չեն պահանջում: Միայն ***որպես, իբրև*** կապերը մասնական բացահայտիչ ձևավորելիս, ի թիվս մյուս բոլոր հոլովների, կարող են պահանջել նաև ներգոյական հոլովով կապվող բառ: Օրինակ. *Կենդանիների և բույսերի կյանքի պայմանները Հայաստանում՝* ***որպես*** *լեռնային* ***երկրում****, կախված են տեղի բարձրությունից:*

Թեք հոլովներով կապվող բառ պահանջող **առ, առանց, բացի, առթիվ, պատճառով, չափ, ընթացքում, ժամանակ, մասին, մինչև, դեպի, իբրև, նախքան, ինչպես, որպես, չհաշված** կապերի հետ գործածվում են նաև **այս, այդ, այն** չթեքվող ցուցական դերանունները *(առանց այդ, բացի այդ, նախքան այն, այս մասին):*

Հանձինս կապը պահանջում է հոգնակի թվով կամ բազմակի կապի խնդիր *(հանձինս հաղթողների, հանձինս Կարենի և Հարությունի)*, իսկ **հանձին** կապը՝ եզակի թվով կապի խնդիր *(հանձին տնօրենի):*

Հանձին(ս) և **ի դեմս** կապերը պահանջում են միայն անձնանիշ (կամ անձի առումով) կապի խնդիր՝ *ի դեմս գործարար(ներ)ի, հանձին ընկերոջ:*

Ի թիվս կապը պահանջում է հոգնակի թվով կապի խնդիր՝ *ի թիվս այլոց, ի թիվս դասալիքների:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ի դեմս, ի փառս, ի հեճուկս, ի թիվս կապերը չունեն առանց **–ս** վերջնամասնիկի ձև:

Վարժություններ

1. Փակագծերում տրված բառերից ընդգծեք տվյալ նախադասությանը համապատասխանողը.

ա. Վարչապետը երեկ ելույթ է ունեցել, *(ըստ որում, ըստ որի)*՝ տնտեսական ճգնաժամը դեռ երկար կշարունակվի:

բ. Այս հրաշալի հանդիպման հիշողությունները միշտ կմնան *(մեր, մեզ)* հետ:

գ. Մեր ընկերությունը, *(հանձին, հանձինս)* տիկին Վանցյանի՝ ունի ազնիվ, բարեկիրթ և ձեռներեց ղեկավար:

դ. Ծննդյանս տարեդարձին նա եկել էր առանց *(ծաղիկ, ծաղկի)*, բայց իր ներկայությամբ հիրավի զարդարեց երեկոն:

ե. Որքան հիշում եմ, *(մեզ, մեր)* մոտով նման անձնավորություն չի անցել:

զ. Աշակերտներս օրիորդ Հասմիկին սիրում ենք՝ որպես հմայիչ *(ուսուցչուհու, ուսուցչուհի)*:

է. Բացի հիմնական *(կանոնը, կանոնից)*՝ կան մի շարք շեղումներ և բացառություններ:

ը. Ի լրումն նշված *(դեպքերի, դեպքերին)*՝ պետք է հիշել ևս մի քանի հանգամանք:

թ. Տիկի՛ն, այս ձայնագրիչը *(ձեզ, ձեր)* մոտից եմ գնել. չի աշխատում, հետ կվերցնեք:

ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ

Կոչվել է նաև Երևանդաշատ, Մարմետ: Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքն է: Հիմնադրել է Երվանդ Դ Վերջին թագավորը (մ. թ. ա. 220–201 թթ.) Այրարատ նահանգի Երասխաձոր (Արշարունիք) գավառում՝ Երասխ գետի ձախ ափին՝ Ախուրյանի հետ միախառնման տեղում:

Երվանդը արքունի շինությունները կառուցել է միակտուր ապառաժ բլուրի վրա, որը շրջապատված է Երասխի ջրերով: Դրա շուրջը ծավալվել է նոր մայրաքաղաքը: Երվանդը բլուրը պարսպապատել է, պատերի մեջ դրել է պղնձյա դռներ, ներքևից մինչև դռները կառուցել երկաթե սանդուղքներ և դրանց մեջ՝ որոգայթ-

ներ՝ դավադիրներին բռնելու նպատակով: Քաղաքին ջուր մատակարարելու համար պարիսպների տակ՝ մինչև գետի մակերևույթը, տեղ–տեղ փորված են անցքեր: Քաղաքից դուրս՝ նրա դիմաց՝ Արաքսի աջ բարձրադիր ափին, արքան կառուցել է Երվանդակերտ բերդը, որն աչքի էր ընկնում իր անառիկությամբ և շքեղ հորինվածքով: Քաղաքին մոտիկ՝ Արշարունյաց ձորում, հիմնել է «Ծննդոց» անտառը, որ նաև արքունի որսատեղի էր: Իսկ Երասխաձորում տնկեց պտղատու այգիներ:

Երվանդաշատի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Մովսես Խորենացին: Ըստ նրա՝ մայրաքաղաքը տեղափոխվել է բնակլիմայական պայմանների պատճառով: Սակայն կարևոր դեր են կատարել նաև քաղաքական անցքերը. Արմավիրին տիրել է Արտաշեսը, ուստի Երվանդը հարկադրված էր նոր մայրաքաղաք հիմնադրել: Մ.թ.ա. 189–ին Արտաշես Ա–ն Մեծ Հայքում իրեն թագավոր հռչակելուց հետո հիմնադրել է երկրի նոր՝ Արտաշատ մայրաքաղաքը:

Դադարելով մայրաքաղաք լինելուց՝ Երվանդաշատը այնուամենայնիվ շարունակել է մնալ հին Հայաստանի խոշոր քաղաքներից մեկը:

Երվանդաշատը 360–ական թթ. կործանել են պարսից Շապուհ II արքայի զորքերը: Բնակչության մեծ մասը գերեվարվել է Պարսկաստան: Դրանից հետո քաղաքն աստիճանաբար անշուքացել է՝ վերածվելով ավատական բերդաքաղաքի, իսկ հետագայում լքվել է ու ավերվել:

Պահպանվել են քաղաքի ավերակները՝ պարիսպների հետքեր, փողոցների ու շենքերի փլատակներ, վիմագիր արձանագրություններ: Այդ ավերակները այժմյան Արմավիր մարզկենտրոնից հարավ–արևմուտք՝ Բագարան և Երվանդաշատ գյուղերի միջակայքում են:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Երվանդաշատի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Երվանդաշատ» գրվածքում գտի՛ր կապերը և որոշի՛ր դրանց հոլովառությունը:

ՇԱՂԿԱՊ

ԴԱՍ 4

ՇԱՂԿԱՊՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Նախադասություններ կամ նախադասության անդամներ իրար կապող բառը կոչվում է շաղկապ։

Օրինակ. *Ես* ***ու*** *դու մրցելու ենք: Ես կգնամ,* ***իսկ*** *դու կմնաս: Կասեի,* ***եթե*** *իմանայի: Ջերմություն ունես,* ***ուրեմն*** *հիվանդ ես:*

Շաղկապն ինքնուրույն գործածություն չունի:

Նախադասության անդամ չի լինում:

Որևէ հարց չի ստանում:

Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունի:

Չի ձևափոխվում:

Նյութական իմաստ չունի: Ունի միայն քերականական իմաստ. արտահայտում է որևէ կարգի հարաբերություն: Այս իմաստը հաճախ համընկնում է որևէ կապի արտահայտած իմաստի հետ՝ *որովհետև — պատճառով, որպեսզի — նպատակով, եթե — պայմանով:*

Շաղկապը, ինչպես և կապը, օժանդակ՝ **սպասարկու** բառ է:

Շաղկապվող միավորները (նախադասություններ, դրանց անդամներ) կարող են լինել համադասական կամ ստորադասական հարաբերությամբ: Ըստ այդմ՝ շաղկապները լինում են երկու տեսակի՝ **համադասական** և **ստորադասական**:

Շաղկապը սովորաբար լինում է կապակցվող անդամների կամ նախադասությունների միջև՝ դրանցից երկրորդի սկզբում:

Երբ ստորադասական նախադասությունը առաջադաս է լինում, շաղկապը հայտնվում է բարդ նախադասության սկզբում. ***Եթե*** *տեսնեմ, կասեմ:*

Շաղկապը երբեմն կարող է լինել կապակցվող անդամների կամ նախադասության վերջում. *Փնտրել եմ նրան,*

*չեմ գտել **սակայն**: Լույսը բացվեց **թե չէ**, ճանապարհ ընկանք: Աշակերտները գնացին տուն, ուսուցիչները՝ **ևս**: Նունիկը անմիջապես քնեց, Լալան **էլ**:*

Ստորադասական շաղկապը երբեմն կարող է միջադասվել երկրորդական նախադասությանը՝ առանց տրոհվելու. *Այդպիսի լուր **եթե** լսեմ, կերջանկանամ: Այդ խոսքերը **որ** լսեցի, զայրույթից կարմրեցի:*

Շաղկապները (հատկապես համադասականները) կարող են մտքով կապակցել նաև ինքնուրույն նախադասություններ. *Լույսը վերջապես բացվեց: **Եվ** ահա նշմարվեց վեհաշուք լեռան ուրվագիծը: Հայտնվեց մի մեղու, ապա՝ երկրորդը, երրորդը. **բայց** ո՞ւր են թռչում մեղուներն այս ուշ ժամին:*

ՇԱՂԿԱՊԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Որպես շաղկապ գործածվող բառերն ըստ կազմության լինում են՝

- **պարզ**՝ *և, ու, թե, որ, եթե, այլ, էլ, բայց, իսկ, մինչ, քան, կամ, ապա,*
- **բաղադրյալ**, այդ թվում՝
  * **ածանցավոր**՝ *այլապես, միայն, սակայն, քանի, ուրեմն,*
  * **բարդ**՝ *որովհետև, որպեսզի, մինչև, թեպետ, այլև, նաև, այնքան, թեև, մինչդեռ, թեկուզ, ուստի և, բայց և այնպես, հենց որ, քան թե, թե՛... թե՛,*
  * **բարդ ածանցավոր**՝ *հետևաբար, այսուամենայնիվ, այնուամենայնիվ:*

Բաղադրյալ շաղկապներն ըստ բաղադրիչների դիրքի լինում են՝

- **համադրական**՝ *որպեսզի, հետևաբար,*
- **հարադրական**՝ *ուստի և, քանի որ,*
- **հեռադրական**, որի տեսակներն են՝
  * **կրկնադիր** կազմություններ՝ *թե՛... թե՛, ո՛չ... ո՛չ,*
  * **զուգադիր** կազմություններ՝ *ոչ թե... այլ, եթե... ապա:*

Հարադրական շաղկապների մի մասը կազմված է որևէ բառի, մասնիկի կամ շաղկապի և **որ, թե, և** կամ **էլ** շաղկապի հարադրությամբ՝ *այնպես որ, քանի որ, թե որ, հենց որ, կամ թե, ոչ թե, միայն թե, որպես թե, քան թե, իբրև թե, բայց և, ուստի և, թեպետ և, ինչպես և, այն էլ, կամ էլ, ոչ էլ:*

Եվ–ով կազմված բաղադրյալ շաղկապների մի մասը դարձել է կցական բարդություն՝ *թեև, այլև, նաև, մինչև:*

Հեռադրական շաղկապների բաղադրիչները միմյանցից բաժանված են լինում կապակցվող միավորներով (Կգնանք **և**՛ դու, **և**՛ ես: Չեմ սիրում **ո՛չ** տանձ, **ո՛չ** խնձոր: **Կա՛մ** ես կգնամ թատրոն, **կա՛մ** մենք միասին կմնանք տանը: **Եթե** գամ, **ապա** կասեմ): Սրանք, ինչպես նշվեց, լինում են երկու տեսակի.

1. **Կրկնադիր** շաղկապները կազմված են այնքան անգամ կրկնվող միևնույն շաղկապից կամ այլ բառից, որքան համադաս անդամներ են միմյանց կապակցվում՝ *թե՛... թե՛, կա՛մ... կա՛մ, ո՛չ... ո՛չ, և՛... և՛, է՛լ... է՛լ:*

Դրվում են կապակցվող միավորներից առաջ և շեշտ ստանում: Միայն **էլ**–ից կազմված կրկնադիր շաղկապն է, որ կարող է լինել նաև հետադաս. *Եկել էին հարսնացուի հայրն է՛լ, մայրն է՛լ, քույրն է՛լ, եղբայրն է՛լ:* Հետադաս **էլ... էլ**–ը կարող է նաև անշեշտ լինել. *Հայրը ոտքով դեն հրեց որդուն էլ, դատարկ փուփերն էլ:*

Կրկնադիր շաղկապներով կապակցված համազոր անդամներն իրարից անջատվում են ստորակետով, բացի այն դեպքից, երբ կապված են նաև **և** կամ **ու** շաղկապով. *Այդ մասին չգիտեն **ո՛չ** ուսուցիչները, **ո՛չ** տնօրենը և **ո՛չ** էլ ծնողները:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կրկնադիր շաղկապների հետ չպետք է շփոթել շաղկապի սովորական կրկնությունը նախադասության մեջ: Օրինակ՝ կրկնվող շաղկապներ են առկա հետևյալ նախադասություններում. *Պատուհանի ապակին կոտրել է Գուրգենը **կամ** Հակոբը **կամ** գուցե և Սարգիսը: Ես սիրում եմ տանձ **ու** խնձոր, դեղձ **ու** ծիրան, սեխ **ու** ձմերուկ...*

2. **Զուգադիր** շաղկապները կազմված են երկու տարբեր բաղադրիչներից, որոնք դրվում են կապակցվող անդամներից առաջ: Լինում են թե՛ համադասական *(ոչ թե... այլ, ոչ միայն... այլև, ինչպես... այնպես էլ)*, թե՛ ստորադասական *(եթե... ապա, եթե... ուրեմն, չնայած... սակայն, քանի որ... ուստի, թեև... բայց, թեև... այնուամենայնիվ):*

Երկրորդ բաղադրիչից առաջ դրվում է ստորակետ. *Սա **ոչ թե** սալոր է, **այլ** շլոր:*

Դրանց բաղադրիչները կարող են լինել երկուսն էլ ստորադասական շաղկապ *(քանի որ... ուրեմն)*, մեկը՝ ստորադասական, մյուսը՝ համադասական շաղկապ *(թեև... բայց)*: Դրանց կազմում կարող է լինել շաղկապի դեր կատարող մակբայ, դերանուն կամ վերաբերական *(եթե... **ապա**, ոչ այնքան... **որքան**, թեպետ... **այնուամենայնիվ**)*:

Մյուս (ոչ հեռադրական կամ **մենադիր**) շաղկապներով կապակցվող անդամների միջև նույնպես դրվում է ստորակետ:

Բացառություն են **և, ու, կամ** շաղկապները, որոնցից առաջ ստորակետ չի դրվում, եթե դրանցով կապակցվում են համազոր անդամներ կամ ընդհանուր ենթակայով համադաս նախադասություններ. *Ես **ու** եղբայրս առավոտյան սկսեցինք այդ գործը **և** միայն երեկոյան կարողացանք ավարտել: Առավոտյան արի՛ իմ աշխատավայրը **կամ** երեկոյան կարող ես այցելել մեր տուն:*

Տարբեր կամ կրկնվող ենթականերով համադաս նախադասությունների դեպքում այդ շաղկապներից առաջ նույնպես ստորակետ է դրվում. *Մենք առավոտյան սկսեցինք այդ գործը, **և** միայն երեկոյան մեզ հաջողվեց ավարտել այն: Ես եմ քո հայրը, **ու** ես էլ կտնօրինեմ քո ճակատագիրը: Կհանդիպենք ժողովից հետո, **կամ** ես քեզ կգտնեմ հեռախոսով: Դու ձեռնարկել ես գործը, **և** դու էլ կղեկավարես:*

Վարժություններ

1. Ընդգծե՛ք 3 շաղկապ.

ա. էլ, համեմատ, ուրեմն, հանդեպ, մինչդեռ, տեղ
բ. թեկուզ, քով, շնորհիվ, ու, փոխարեն, ո՛չ... ո՛չ
գ. փոխանակ, և, հանուն, թե՛... թե՛, քան, պես

2. Ընդգծե՛ք 3 պարզ շաղկապ.

ա. բայց, ընդսմին, մինչ, նաև, իսկ, թեկուզ
բ. մինչդեռ, քան, ապա, թեև, որպեսզի, կամ
գ. եթե, այնքան, այլ, թեպետև, որ, մինչև

3. Ընդգծե՛ք 3 բարդ շաղկապ.

ա. այնուամենայնիվ, մինչև, որպեսզի, ինչու, հետևաբար, այնինչ
բ. որովհետև, հետևապես, այլապես, այլև, մինչդեռ, այսուամենայնիվ

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ

Իսկական անուն–ազգանունը՝ Ոստանիկ Ադոյան:

Արևմտյան գեղանկարչության խոշոր վարպետներից է: Նա է ամերիկյան գեղանկարչությունը բարձրացրել եվրոպական մակարդակի: Գեղարվեստական ձևամտածողությամբ արևմտյան ժամանակակից արվեստից սերող նրա ստեղծագործությունն ամբողջովին ներթափանցված է հայկական ոգով: Նրա արվեստի վերացարկված ձևերի գունային խարիսխը նրա մանկության պայծառ հիշատակների՝ Վանա լճի կապույտի, դեղնավուն ավազի, ծիրանի արևախանձ գույնի արձագանքն է:

Ծնվել է 1904 թ. ապրիլի 15–ին Արևմտյան Հայաստանի Խորգոմ գյուղում (Վանից ոչ հեռու): 1915–ին մասնակցել է Վանի ինքնապաշտպանական մարտերին, ապա մոր և քույրերի հետ գաղթել է Երևան, զբաղվել ատաղձագործությամբ և տպագրական գործով: 1919–ին տեղափոխվել է Թիֆլիս, ապա՝ ԱՄՆ:

1925–ին որպես կեղծանուն վերցրել է ռուս գրող Մաքսիմ Գորկու ազգանունը: Ավարտել է Փրովիդենսի և Բոստոնի դիզայնի դպրոցները, Նյու Յորքի արվեստի կենտրոնական դպրոցը: Աստիճանաբար մշակել է իր ուրույն ոճը և ստեղծել դպրոց:

1930–ականների կեսից հակվել է դեպի վերացապաշտական նկարչությունը: Կյանքի վերջին տասնամյակում ստեղծել է վառ գույներով ինքնատիպ կտավներ, որոնցով հետագայում արժանացել է համաշխարհային հռչակի:

1948–ին ավտովթարի հետևանքով կորցրել է աջ ձեռքի աշխատունակությունը և որոշ ժամանակ անց՝ հուլիսի 21–ին, ինքնասպան է եղել:

Նրա կտավները պահվում են ԱՄՆ–ի ու Եվրոպայի մի շարք նշանավոր պատկերասրահներում ու թանգարաններում, ցուցադրվել են աշխարհի բազմաթիվ քաղաքներում, այդ թվում՝ Երևանում: 2004–ից Երևանում գործում է «Արշիլ Գորկի» հիմնադրամը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Արշիլ Գորկիի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Արշիլ Գորկի» գրվածքում գտի՛ր շաղկապները և որոշի՛ր դրանց կազմությունը:

ԴԱՍ 5

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Սրանք կապակցում են նախադասության բազմակի անդամներ կամ համադաս նախադասություններ:

Ըստ նշանակության՝ լինում են հետևյալ տեսակների.

- **միավորիչ–հավելական՝** *և, ու, էլ, ևս, նաև, այլև, ինչպես և, ինչպես նաև, նույնպես և, նմանապես և, ընդ որում, ըստ որում, ընդսմին, այդ թվում, և՛... և՛, թե՛... թե՛, ո՛չ... ո՛չ, էլ... էլ, ոչ միայն... այլև, ինչպես... այնպես էլ, ոչ այնքան... որքան,*
- **ներհակական (հակադրական)՝** *(հ)ապա, իսկ, բայց, սակայն, մինչդեռ, այնինչ, այլ, ոչ թե... այլ, այլ ոչ թե, թե չէ, (և) ոչ թե, (և) ոչ էլ, ապա թե ոչ, այլապես, բայց և այնպես, միայն (թե), բայց ոչ (թե),*
- **տրոհական՝** *կամ, կամ թե, կամ էլ, և կամ, կա՛մ... կա՛մ, կամ թե չէ, թե:*

Համադասական շաղկապների մի մասը կապում է թե՛ նախադասության համադաս անդամներ, թե՛ համադաս նախադասություններ (**և, ու, կամ, թե, նաև, այլ, կամ թե չէ, ոչ միայն... այլև, ոչ թե... այլ, և՛... և՛, թե՛... թե՛, ո՛չ... ո՛չ** և այլն):

Համադասական շաղկապների մյուս մասը կապակցում է առավելապես կամ միայն համադաս նախադասություններ (**իսկ, այնինչ, բայց, սակայն, բայց և այնպես** և այլն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Չպետք է շփոթել **թե** ստորադասական մեկնական շաղկապը *(Չգիտեր, թե ինչ ասի)* **թե** համադասական տրոհական շաղկապի հետ, որ գործածվում է երկընտրական կապակցություններում. *Լինել, թե չլինել, այս է խնդիրը: Չգիտեր՝ ծիծաղի, թե լաց լինի: Ուզո՞ւմ ես, թե՞ ոչ: Ուզի, թե չուզի՝ պիտի գա:*

Կա նաև համադասական **թե**–ի միավորիչ–հավելական տարատեսակը, որից առաջ ստորակետ չի դրվում. *Մեծ թե փոքր դուրս էին եկել փողոց: Պարում են աղջիկ թե տղա:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Ինչպես... այնպես էլ համադասական շաղկապը չպետք է շփոթել ստորադասական **այնպես... ինչպես** շաղկապական բառազույգի հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3

Էլ հավելական շաղկապը, որ հոմանիշ է **ևս–ին** *(Քարերն էլ էին շնչում գարնան բույրը)*, տարբեր է **էլ** ներհակականից, որ հոմանիշ է **իսկ–ին** *(Տարօրինակ տեսք ունի նա. նիհար, կարճահասակ, վիզն էլ ծուռ)*: **Ներհակական էլ–ը**, ի տարբերություն **իսկ–ի**, լինում է ոչ թե համադաս նախադասությունների միջև, այլ դրանցից երկրորդի մեջ *(Ես քաղհան կանեմ, դու էլ մարգերը կջրես)*: **Էլ** համադասական (հավելական և ներհակական) շաղկապները չպետք է շփոթել համանուն սաստկական վերաբերականի, ժամանակի մակբայի և անորոշ դերանվան հետ: Դրանք տարբերելու համար պետք է նկատի ունենալ, որ **էլ** վերաբերականը կարող է փոխարինվել **հենց–ով** *(Հավաքվում էինք դռան մոտ և խմբովին էլ ներս էինք մտնում)* կամ **նույնիսկ–ով** *(Նորոգած մարագը մատնաչափ չէր էլ փոխել գյուղի ընդհանուր տեսքը)*, ժամանակի մակբայը կարող է փոխարինվել **այլևս–ով** կամ **այնուհետ–ով** *(Դիլանը գնաց, և այգում էլ ոչ ոք չմնաց)*, իսկ դերանունը կարող է փոխարինվել **ուրիշ–ով** *(Կան և հոլանի բազուկներ, և էլ ինչեր չկան ու ինչ ձևեր)*:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Սրանք բարդ ստորադասական նախադասության ստորադաս (երկրորդական) նախադասությունը կապակցում են գերադաս (գլխավոր) նախադասությանը:

Ըստ նշանակության լինում են հետևյալ տեսակների.

- **մեկնական՝** *որ, թե,*
- **ժամանակի՝** *մինչ(և), մինչև որ, մինչդեռ, հենց (որ), նախքան, թե չէ, քանի (դեռ), ինչ,*
- **պայմանի՝** *եթե, թե (որ), միայն (թե), եթե միայն, նայած (թե), եթե... ապա, եթե... ուրեմն,*
- **պատճառի և հիմունքի՝** *որովհետև, քանի որ, թե որ, (նա)մանավանդ որ, քանի որ... ուրեմն, որովհետև... ուստի, քանի որ... հետևաբար,*
- **նպատակի՝** *որպեսզի, որ, ինչ է թե, թե ինչ է,*
- **զիջման և հակասման՝** *թեև, թեկուզ(և), թեպետ(և), չնայած (որ), փոխանակ, թեև... բայց, թեպետ... սակայն, թեպետ(և)... այնուամենայնիվ, չնայած... այնուհանդերձ, չնայած... սակայն, չնայած որ... բայց, թեկուզ... բայց (և այնպես), նույնիսկ եթե,*
- **հետևանքի՝** *հետևաբար, հետևապես, ուստի (և), ուրեմն (և), և ուրեմն, այնպես որ, այդ պատճառով,*
- **համեմատության՝** *քան (թե):*

Գրավոր խոսքում երբեմն գործածվում է **քանզի** ստորադասական շաղկապը, որ հնաբանություն է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Թե և **որ** հոմանիշ շաղկապներից **որ**–ը հաստատական նշանակություն ունի, **թե**–ն՝ առավելապես կասկածական, ենթադրական *(Չէր հավատում, թե իրեն կաջակցենք: Կարծում էր, թե իրեն զանգողը ես եմ եղել)*:
Հարցական (հարաբերական) դերանուն պարունակող երկրորդական նախադասությունը գլխավորին սովորաբար կապվում է **թե** շաղկապով *(Հասկանալ գիտեմ, թե նա որտեղ է: Հարցրու՛, թե ով է մեզ զանգել)*:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Որ շաղկապը բազմիմաստ է. բացի մեկնական և նպատակի նշանակություններից՝ կարող է գործածվել նաև ժամանակի *(Մութը որ ընկնի, խարույկ կվառենք)*, պայմանի *(Որ անձրև գա, կտեղափոխվենք քարայր)*, պատճառի *(Շատ ուրախացա, որ բոլորին ողջ–առողջ տեսա)* և այլ նշանակություններով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3

Որ, ինչ շաղկապները համանուն շաղկապական բառերից (հարաբերական դերանուններից) տարբերակվում են հետևյալ կերպ.

- **որ**–ը պետք է փորձել համաձայնեցնել երկրորդական նախադասության ստորոգյալի հետ: Եթե համաձայնեց՝ ստացավ հոդ կամ հոգնակի դարձավ, ուրեմն հարաբերական դերանուն (շաղկապական բառ) է: Օրինակ. *Այո՛, սկսվեց մեծ ու ահռելի պատերազմ, որ ընդգրկել է գրեթե ողջ հողագունդը: > ....որն ընդգրկել է....: Շուտով վերադարձան այն պատվիրակները, որ գնացել էին բանակցելու թշնամի զորապետի հետ: > ....որոնք գնացել էին....:* Հակառակ դեպքում (երբ չհամաձայնեց ստորոգյալի հետ՝ հոդ չստացավ, հոգնակի չդարձավ) այդ **որ**–ը շաղկապ է: Օրինակ. *Այդ դիպվածը խանգարեց, որ նա սրընթաց գրոհ սկսի:*
- **ինչ**–ը եթե նախադասության անդամ չէ, ապա ժամանակի շաղկապ է, այլ ոչ թե դերանուն: Օրինակ. *Այն օրվանից, ինչ աղջիկը հիվանդացել էր, նրա մոտ էր գալիս դայակը:* Բացի այդ, **ինչ** դերանվանը կարող է հարադրվել **որ** թարմատար (ինքնուրույն նշանակությունից զրկված) շաղկապը: Օրինակ. *Այո՛, դա հենց այն է, ինչ (որ) արքան է կամեցել:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4

Մեկնական **թե**–ն պետք է տարբերել պայմանի **թե**–ից (որ կարող է ստանալ թարմատար **որ** և փոխարինվել **եթե**–ով) և համադասական **թե**–ից (որը մեծ մասամբ կապակցում է բառերով արտահայտված բազմակի անդամներ). *Դե՛, հիմա ասա՛, թե ով էր նա: Թե (որ) իմանամ, կասեմ: Մեծ թե փոքր սիրով կարդում են Թումանյանի հեքիաթները:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 5

Ի տարբերություն **որպեսզի**–ի՝ **որ** շաղկապով չի կարող սկսվել նպատակի պարագա երկրորդական նախադասությունը, եթե առաջադաս է *(Որպեսզի գամ, պետք է ինձ հրավիրեք)* կամ միջադաս դիրքում հաջորդում է ենթակային կամ խնդրին *(Գաղթականները, որպեսզի չթրջվեին, մտան քարանձավ)*: Երկրորդական նախադասության վերջադաս դիրքերում **որ**–ն ու **որպեսզի**–ն իրար ազատ փոխարինում են. *Գալու է, որ(պեսզի) մեզ օգնի:* Միջադաս դիրքում նույնպես փոխարինում են իրար, եթե հաջորդում են պարագային. *Արամը շշուկով, որ(պեսզի) չզարթնեցնի քնածներին, հարցրեց ժամը:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 6

Թե չէ ժամանակի շաղկապը լինում է երկրորդական նախադասության վերջում: Այդ պատճառով էլ **թե չէ**–ով երկրորդականները գլխավորի նկատմամբ լինում են առաջադաս, երբեմն էլ՝ միջադաս (*Հրացան արձակես* ***թե չէ****, իսկույն կհարձակվեն: Ես ու Մնացը, զանգը տվեց* ***թե չէ****, վազեցինք ճաշարան*): Հենց իր դիրքով էլ ստորադասական **թե չէ** ժամանակի շաղկապը տարբերվում է համադասական **թե չէ** ներհակական շաղկապից, որը լինում է երկրորդ բաղադրիչ նախադասության սկզբում. *Կարգի՛ն սովորիր,* ***թե չէ*** *դուրս կմնաս համալսարանից:* Սրանց հետ կարող է շփոթվել նաև ***թե չէ*** նախադասությունը, որը երկու կողմից տրոհվում է. *Չգիտեմ՝ աղջիկը ժպտաց,* ***թե չէ****, բայց ինձ այդպես թվաց:*

Ստորադասական շաղկապները կարող են զեղչվել: **Որ, թե, եթե, ինչ** շաղկապների զեղչման դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև բութ է դրվում՝ անկախ դրանց շարադասությունից: Օրինակ. *Չգիտեմ՝ ինչ ասեմ: Որևէ պայման խախտես՝ պայմանագիրը կդադարեցվի:* (Շաղկապի զեղչման մասին տե՛ս նաև սույն *գրքում՝ էջ 149–150*):

Վարժություններ

1. Ընդգծե՛ք համադասական 3 շաղկապ.

ա. եթե ոչ, սակայն, քան թե, իսկ, այլ, որ
բ. նաև, թե որ, կամ, քանի դեռ, մինչև, բայց
գ. ապա, չնայած, հենց, այնինչ, այլև, քանի որ

2. Ընդգծե՛ք ստորադասական 3 շաղկապ.

ա. թեև, ու, այլև, որպեսզի, թեկուզ, կամ թե
բ. ո՛չ… ո՛չ, մինչ, քան, էլ, ապա թե ոչ, թեպետ
գ. մինչև իսկ, որովհետև, այն էլ, մինչդեռ, և, եթե

3. Ո՞ր նախադասության մեջ է թե–ն համադասական շաղկապ.

ա.
1. Որսորդը սիրտ էր տալիս, թե առաջին անգամ դա էլ շատ է:
2. Հողեմ գլուխդ, թե քո մարդը քեզ Շուշի կուղարկի…
3. Մենակությունից թե ձանձրույթից բաց էր անում գիրքը:
4. Ուզում է տեսնել, թե որտեղ է վերջը մացառուտի:

բ.
1. Որսորդն իմ հետևից կանչեց, թե ճանապարհն աջ է ծռվում:
2. Ճգնարան էր թե հին եկեղեցի, գուցե և մնացորդ մի բերդի…
3. Ինքս էլ չիմացա, թե ինչու պատճառ բռնեցի գիրքը:
4. Թե սենյակում մարդ չէր լինում, նա երբեմն սուլում էր:

ՍԻՓԱՆ ԼԵՌ

Հնում նաև կոչվել է Նեխ Մասիք, Ծիփան, Սուփխան: Հանգած հրաբուխ է Հայկական լեռնաշխարհում՝ Ծաղկանց լեռներից հարավ–արևմուտք՝ Վանա լճի հյուսիսային ափին: Լճի կողմից երևում է սլացիկ կոնի տեսքով, որ լճից բարձր է 2714 մ (լիճը ծովից բարձր է 1720 մ):

Ունի 3 խոշոր գագաթ, որոնցից ամենաբարձրը 4434 մ է: Հայկական լեռնաշխարհի երրորդ բարձր գագաթն է Արարատից ու Սեբելանից հետո: Սիփանից արևմուտք է Նեմրութ հրաբուխը (Սարակն):

Սիփանը վերջին անգամ ժայթքել է մոտ 10 հազար տարի առաջ:

Շառավղաձև մասնատված է կատարից իջնող գետահովիտներով ու ձորակներով: Անտառազուրկ է: Լանջերը ծածկված են ալպիական կանաչությամբ և գույնզգույն ծաղիկներով:

Սիփանի բարձունքներին ձնհալից գոյացել են երկու լճակներ, որոնց ջրերը Ծաղկանց լեռներից հոսող գետակների հետ սնում են Վանա լիճը:

Հայ նշանավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը Մեծ եղեռնից առաջ այցելել է իր ծննդավայրը՝ Արևմտյան Հայաստանի Վան քաղաքը: Նա հիացել է Սիփան սարի գեղեցկությամբ և նկարել է՝ դիտելով Վանա լճի Կտուց կղզուց:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Սիփան լեռան մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Սիփան լեռ» գրվածքում գտի՛ր շաղկապները և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 6

ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Հաճախ ստորադասական շաղկապի դեր են կատարում այլ խոսքի մասերի պատկանող մի շարք բառեր:

Դրանք նախ՝ հարաբերական դերանուններն են **(ով, ինչ, որ, քանի, որքան, ինչքան, որչափ, որերորդ, քանիերորդ, ինչպիսի, որպիսի, որտեղ, ուր, երբ, ինչպես)**՝ ուղիղ և թեք ձևերով, երբեմն **որ** կամ **էլ** թարմատար (հավելադիր) բառի հարադրությամբ *(ով որ, ինչ որ, ինչպես որ, երբ որ, ով էլ, ինչ էլ, երբ էլ, որքան էլ* և այլն) և հաճախ՝ հարաբերյալի զուգադրությամբ. *Գնա՛ այնտեղ, ուր սիրտդ ուզում է: Այնքան կերա, ինչքան կարող էի: Ինչին էլ ձեռք տար, կանաչում էր:*

Ի տարբերություն շաղկապի՝ հարաբերական դերանունը սպասարկու բառ չէ և լինում է նախադասության անդամ:

Հարաբերական դերանունները, ինչպես նշվեց, կարող են զուգադրական կապակցություններ կազմել գլխավոր նախադասության այն ցուցական դերանունների հետ *(նա, այն, այնպիսի, այնքան, այնպես, այնչափ, այնտեղ և այլն)*, որոնք ձևականորեն կատարում են նույն պաշտոնը, ինչ ունի երկրորդական նախադասությունը. ***Որքան*** *մութը՝ սև, այնքան ես՝ համառ: Ես որոնում եմ* ***նրանց****, որ զրկված, թշվառ են ու խենթ:*

Ստորադասական շաղկապի դեր կարող են կատարել նաև **ասես, կարծես** երկբայական վերաբերականները՝ երբեմն **թե** շաղկապի հարադրությամբ *(ասես թե, կարծես թե)*, եթե երկրորդական նախադասության սկզբում են: Սրանք կատարում են ձևի և նմանության շաղկապի դեր. *Կեսօրին երկինքը մթագնեց, ասես երեկոյան աղջամուղջն էր սկսվում:* **Ասես, կարծես** շաղկապական բառերը գլխավոր նախադասության մեջ ունենում են (կամ կարելի է վերականգնել) **այնպես** կամ **այնքան** հարաբերյալը. *Լուսնյակի փակ ձյունը փայլփլում էր (այնպես), ասես սպիտակ մարմար էր:*

Հաճախ ստորադասական շաղկապի դեր են կատարում զիջական **այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, համենայն դեպս** վերաբերականները՝ **թեև** (երբեմն էլ՝ **թեպետ, չնայած, որքան էլ**) շաղկապի զուգադ-

ությամբ. *Թեև հույս չունեի, համենայն դեպս նորից փորձեցի: Այնուամենայնիվ համաձայնեցի, թեև կասկածում էի:*

Որպես ստորադասական շաղկապ երբեմն գործածվում է **չէ՞ որ** գնահատողական վերաբերականը. *Նա մեզ կօգնի, չէ՞ որ մեր բարեկամն է:*

Վերաբերականով արտահայտված շաղկապական բառը նախադասության անդամ չի լինում և միաժամանակ կատարում է վերաբերականի դեր:

Շաղկապական բառերից առաջ նույնպես դրվում է ստորակետ:

Շաղկապական բառերից զեղչվել կարող է միայն **երբ**–ը առաջադաս դիրքում. *(Երբ) Մեծ դասամիջոցը սկսվի՝ քո բոլոր հարցերով կմոտենաս ինձ:*

ՇԱՂԿԱՊԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երբեմն **սակայն, ուրեմն** շաղկապները վերաբերականի նշանակություն են ստանում, երբ լինում են միջադաս դիրքում և ստորակետերով տրոհվում են որպես միջանկյալ բառ. *Բոլորին հրավիրատոմս էր ուղարկվել: Խնամիներից ոչ ոք, սակայն, հրավերքին չմասնակցեց: Մեր գերազանցիկներն, ուրեմն, կմասնակցեն այդ մրցույթին:*

Ընդ որում, ըստ որում, այդ թվում հավելական շաղկապները միաժամանակ ունեն սաստկական վերաբերականի արժեք *(Շատ բան եմ լուսանկարել, **ընդ որում**՝ ոչ միայն հուշարձաններ):*

(Հ)ապա բառը մերթ մակբայ է *(Եկավ Արամը, ապա ժամանեցին մյուսները)*, մերթ՝ շաղկապ *(Դու կփրկվես, ապա ե՞ս ինչ ճար գտնեմ)*, մերթ՝ վերաբերական *(Ապա, քեզ տեսնեմ, տղա՛ս):*

Որ շաղկապը չպետք է շփոթել **որ** չտրոհվող վերաբերականի հետ *(Դու այս գիրքը չէիր կարդացե՞լ որ):*

Շաղկապի հետ չպետք է շփոթել **որ, էլ, թե** թարմատար (հավելադիր) բառերը, որոնք կարող են կցվել զանազան շաղկապական բառերի *(ով որ, ուր որ, ինչ էլ, երբ էլ, կարծես թե, ասես թե)*, շաղկապների *(նայած թե, միայն թե, քան թե, ապա թե, հենց որ, մինչև որ, մանավանդ որ)*, չափի մակբայների *(համարյա թե, էլի թե)*, վերաբերականների (*գուցե թե, երևի թե, իբրև թե, չլինի՞ թե, երանի թե, ահա թե, այ՛ թե* և այլն)՝ առանց որևէ իմաստ ավելացնելու: Թարմատար բառերը համանուն շաղկապներից տարբերվում են նրանով, որ ազատ և անկորուստ կարող են վերանալ:

Հենց այս հանգամանքն էլ օգնում է մի շարք շաղկապներ տարբերակելու համանուն այլ խոսքի մասերից. շաղկապին (շաղկապական բառին) կարելի է ավելացնել թարմատար բառ: Օրինակ. ***Հենց (որ)*** *դու գաս, հանդեսը կսկսենք* [շաղկապ]: ***Հենց*** *դու ես նա, ով մեզ պետք է* [վերաբերական]: *Մենք էլ,* ***ինչպես (որ)*** *մեր դասղեկը, խոնարհվեցինք և ծաղիկներ դրեցինք հուշաքարի առջև* [շաղկապական բառ]: *Ծերունին հրճվում էր* ***ինչպես*** *երեխա* [կապ]:

Վարժություններ

1. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը շաղկապական բառ.

ա.

1. *Ինչպե՞ս* կարելի է լռել՝ տեսնելով այդ ամենը:
2. *Ինչպես* անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

բ.

1. Արեցին այնպես, *ինչպես* պատվիրված էր:
2. Վիրահատությունից հետո *ինչպե՞ս* է զգում իրեն հիվանդը:

գ.

1. *Այլ* էին Վահանի ծրագրերը:
2. Մեր փնտրածը դա չէր, *այլ* այն, ինչի մասին ոչ ոք մտածել անգամ չէր կարող:

2. Փակագծերում տրված բառերից ընդգծե՛ք տվյալ նախադասությանը համապատասխանողը.

ա. Ես պնդում եմ, (որ, թե) նախագիծը պատրաստ է քննարկման:

բ. Դասասենյակում անտանելի շոգ էր, (կարծես, կարծեմ) շոգեբաղնիքում էինք:

գ. Դա ոչ թե պայքար էր իշխանության համար, (այլև, այլ) խաբված ժողովրդի զայրալից ընդվզում:

դ. Միամիտս կարծում էի, (որ, թե) պատրաստ եմ քննությանը, բայց չարաչար սխալվեցի:

ե. Կարդացել եմ Բակունցի ոչ միայն պատմվածքները, *(այլև, այլ)* նաև անավարտ վեպերը:

զ. Մաղթում եմ, *(որ, որպեսզի)* շուտ ապաքինվեք և այսուհետ միշտ առողջ լինեք:

է. *(Որպեսզի, որ)* նա մեզ հովանավորի, մենք շատ պետք է սիրաշահենք ու գովերգենք նրան:

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՏԱՃԱՐԸ

Զվարթնոցի տաճարը Արարատյան դաշտում է՝ Վաղարշապատից 3 կմ հարավ՝ Երևանից 15 կմ արևմուտք:

643–652 թթ. կառուցել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը: Օծվել է 652–ին:

Կանգուն է եղել մինչև 10–րդ դ. վերջը: Ավերվել է հավանաբար երկրաշարժից: 20–րդ դ. սկզբին ավերակը տակավին ծածկված էր հողի հաստ շերտով: Ենթադրաբար Զվարթնոցի տարածքում է եղել Տիր աստծու մեհյանը:

Հնավայրի պեղումներից հայտնաբերվել են 0,63մ x 2,7մ չափերի կոթող՝ Ռուսա II բիայնական արքայի 47–տողանոց սեպագիր արձանագրությամբ, Զվարթնոցի ավերակ տաճարը, նրանից հարավ–արևմուտք՝ կաթողիկոսական պալատը՝ օժանդակ շինություններով (բաղնիք, սեղանատուն, բնակելի խուցեր), մեկ այլ եկեղեցու ավերակներ, խաղողի քարաշեն հնձան և այլն:

Զվարթնոցը արտաքուստ եռաստիճան, հետզհետե նվազող տրամագծերով երեք գլանային ծավալների ներդաշնակ ամբողջություն է: Ունի կենտրոնակազմ գմբեթավոր հորինվածք: Ունեցել է 5 շքամուտք: Աչքի է ընկել մեծարվեստ բարձրաքանդակներով ու որմնանկարներով: Տաճարի բարձրությունը եղել է մոտ 50 մ:

Հայկական ճարտարապետության մեջ Զվարթնոցը նորատիպ կառույց էր: Հետագա դարերում մեր ճարտարապետությունը մեծապես կրել է նրա ազդեցությունը: Նա հայկական շինարվեստի, քանդակագործության, զարդարվեստի յուրօրինակ հանրագումարն էր, Հայաստանի քաղաքակրթական ընդհանուր զարգացման արդասիքը, հայկական վերածննդի առաջին նախանշանը:

Յուրատեսակ հայկական խորհրդանշան են դարձել Զվարթնոցի արծվաքանդակ և զամբյուղահյուս խոյակները:

1937–ին Զվարթնոցի ավերակներից ոչ հեռու կառուցվել է թանգարան, որտեղ ցուցադրվում են պեղված նյութերը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Զվարթնոցի տաճարի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Զվարթնոցի տաճարը» գրվածքում գտի՛ր շաղկապներն ու շաղկապական բառերը և որոշի՛ր դրանց կիրառությունը:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

ԴԱՍ 7

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Խոսողի դատողական վերաբերմունքն արտահայտող և նախադասությունը կամ նրա որևէ անդամը երանգավորող կամ շեշտող բառը կոչվում է վերաբերական:

Օրինակ՝ *հենց, անշուշտ, գուցե, նամանավանդ:*
Որևէ հարցի չի պատասխանում:
Նախադասության անդամ սովորաբար չի լինում:
Չի ձևափոխվում:
Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունի:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Որպես վերաբերական գործածվող բառերն ըստ կազմության լինում են՝

- **պարզ**՝ *այո՛, ոչ՛, հո, իբր, անգամ, հենց, դե, ապա, ահա,*
- **բաղադրյալ**:

Բաղադրյալ վերաբերականները լինում են՝

* **ածանցավոր**՝ *անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, արդարև, միայն, իսկապես, հավանաբար, իրավ, հարկավ,*
* **բարդ**՝ *թեկուզ, թերևս, միգուցե, մի՞թե, ինչևէ, նույնիսկ, չէ՞ որ,*
* **բարդ ածանցավոր**՝ *միմիայն, ըստ երևույթին, այնուամենայնիվ, բարեբախտաբար:*

Վերաբերականների մի մասը նախկին անվանական կամ բայական կապակցություններ են՝ *մինչև իսկ, իրոք որ, մինչև անգամ, ինչ խոսք, ինչ է թե, կարծես թե, ինչպե՞ս չէ, ճիշտ է, ուր է թե, ինչ էլ լինի, ինչպես երևում է, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ ասել կուզի, քա՛վ լիցի, այսպես կոչված, ճիշտն ասած* և այլն:

Մի շարք վերաբերականներ գրաբարյան կամ ժամանակակից հայերեն հոլովաձևեր կամ ժամանակաձևեր են՝ *իհարկե,*

արդարև, հարկավ, իրավ, իրոք, կարծեմ, կարծես, ասես, գուցե, չլինի՞, երևի, ցավոք, արդյոք, դիցուք, թող, արի, եկ, եկեք, տեսնես, ասես:

Վարժություններ

1. Ընդգծեք 3 պարզ վերաբերական.

ա. հենց, նույնիսկ, հիրավի, սոսկ, հավաստյավ, ասես
բ. արդարև, գուցե, իրավամբ, արդ, գեթ, ինչևէ

2. Ընդգծեք 3 ածանցավոր վերաբերական.

ա. անշուշտ, այնուհանդերձ, անգամ, բնականաբար, իսկապես, այսպիսով
բ. ահա, միայն, այսուհանդերձ, անպայման, դժբախտաբար, ավաղ

3. Ընդգծեք 3 բարդ վերաբերական.

ա. թերևս, անկասկած, չէ՞ որ, բնավ, միգուցե, ասենք
բ. ինչևիցե, հարկավ, գոնե, թեկուզ, անպատճառ, մի՞թե

4. Ընդգծեք 3 բարդ ածանցավոր վերաբերական.

ա. բարեբախտաբար, տարաբախտաբար, արդյոք, այսուամենայնիվ, ինչու չէ, նամանավանդ
բ. միմիայն, մանավանդ, անտարակույս, այնուամենայնիվ, ըստ երևույթին, ցավոք

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ըստ իրենց արտահայտած վերաբերմունքի բնույթի՝ վերաբերականները լինում են.

1. **հաստատական**. **արտահայտում են հաստատական, դրական վերաբերմունք**՝ *այո՛, անխոս, անկասկած, անշուշտ, անպայման, անպատճառ, անտարակույս, առանց այլևայլության, արդարև, բնականաբար, ըհը՛, իհարկե, ինչ ասել կուզի, ինչ խոսք (որ), ինչպես չէ, ինչու չէ, իսկապես (որ), իրավ (որ), իրավամբ, իրոք (որ), հաստատ, հավաստյավ, հարկավ, հիրավի, միանշանակ(որեն), ճիշտ որ, ճշմարիտ (որ), շատ լավ էլ, վստահաբար,*
2. **ժխտական**. **գործածվում են առավելապես ժխտական նախադասության մեջ և շեշտում ժխտական, բացասական վերաբերմունքը**՝ *ո՛չ, չէ՛, հը–ը՛, բնավ, ամենևին, քա՛վ լիցի,*

3. **երկբայական**. **արտահայտում են ենթադրություն, կասկած կամ թերահավատ հարցում գործողության կամ եղելության հավանական լինելու վերաբերյալ՝** *ասես, արդյոք, գուցե, դժվար թե, երևի (թե), ըստ երևույթին, թերևս, իբր (թե), իբրև (թե), (ինչպես) երևում է, կարծեմ (թե), կարծես (թե), կարծեք (թե), կարող է պատահել (որ), հազիվ թե, հավանաբար, հնարավոր է, հո, միգուցե, միթե, ով գիտի, ով իմանա, որ, չգիտես (թե), չլինի՞ (թե), վայ թե, տեսնես,*
4. **գնահատողական**. **արտահայտում են կարեկցական վերաբերմունք, ափսոսանք, զղջում կամ ուրախություն, հավանություն՝** *ախր, ավա՜ղ, ափսո՜ս, բարեբախտաբար, դժբախտաբար, ի՞նչ արած, չէ՞ որ, տարաբախտաբար, ցավոք, ցավոք սրտի,*
5. **սաստկական**. **ընդգծում, շեշտում են նախադասության որևէ անդամի արտահայտած տեղեկույթը, նշանակությունը՝** *այն էլ, անգամ, ևեթ, էլ, իսկ, իսկ և իսկ, հենց, մանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նամանավանդ, նույնիսկ, հատկապես, մասնավորապես, առանձնապես, գլխավորապես, գերազանցապես, առավելապես, առավել ևս,*
6. **սահմանափակման**. **մասնավորում, առանձնացնում, սահմանագծում են նախադասության որևէ անդամի արտահայտած տեղեկույթը, նշանակությունը՝** *գեթ, գոնե, թեկուզ, լոկ, միայն, միմիայն, ոչ միայն, սոսկ,*
7. **կամային. արտահայտում են խրախուսական, հորդորական վերաբերմունք կամ խնդրանք՝** *արի, դե, եկ, եկեք, թող, (հ)ապա, մի, դե՛հ,*
8. **բաղձանքի**. **արտահայտում են ըղձական վերաբերմունք՝** *երանի՜ (թե), երնեկ (թե), ուր է(ր) թե,*
9. **զիջական**. **արտահայտում են վերապահումով համաձայնություն՝** *այնուամենայնիվ, այնուհանդերձ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, թեկուզ, ինչ որ է, ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, ճիշտ է, մեկ է, միևնույնն է, սակայն,*
10. **անջատական**. **առանձնացնում կամ հակադրում են խոսքի որևէ հատված՝ իբրև նախորդի լրացում՝** *ընդհակառակն, հակառակը, ի դեպ, ի միջի այլոց,*
11. **բացահայտման**. **մատնանշում են, թե խոսքի տվյալ հատվածը նախորդի բացատրությունն է, լուսաբա-**

նումը, ճշգրտումը կամ ամփոփումը՝ *արդ, այսպիսով, մի խոսքով, այսինքն, այն է, նույնն է թե, ավելի ճիշտ, ասենք, ենթադրենք, դիցուք, այսպես, օրինակ, այսպես ասած, այսպես կոչված, պարզ ասած, կարճ ասած, այլ կերպ ասած, ճիշտն ասած, մեղմ ասած, ավելին,*

12. **ցուցական. ուշադրություն են հրավիրում նախադասության կամ նրա որևէ անդամի վրա՝** *ահա, ահավասիկ, այ:*

Հաճախ որպես վերաբերական գործածվում են նաև մի շարք այլ բառաձևեր ու կապակցություններ՝ *արի ու տես (որ), բայց և այնպես, էլ դու սուս, ինչ ուզում եք ասեք, ինչքան չլինի, կհավատամ (որ), հասկանալի է (որ), հարց չկա, ոչ մի խնդիր, որպես կանոն, չի կարող պատահել (որ), չգիտես ինչու, պատկերացնում եք* և այլն:

Վերաբերականի արժեքով կարող են հանդես գալ **սակայն, ուրեմն** շաղկապները, երբ միջադաս դիրքում են *(Ինձնից, **սակայն**, ավելին էին սպասում: Դե, **ուրեմն**, կգաս ինձ հետ):*

Ընդ որում, ըստ որում, այդ թվում հավելական շաղկապները ունեն նաև սաստկական վերաբերականի արժեք՝ շեշտելով նախադասության որևէ անդամի նշանակությունը *(Ամբողջ օրը զրուցում էին, **ընդ որում**՝ ոչ միայն քաղաքականությունից):*

Վարժություններ

5. Ընդգծեք վերաբերմունք նշանակող 3 բառ.

ա. հանդերձ, հարկավ, ներքո, միգուցե, նման, իբր
բ. շուրջը, ցավոք, ինչպես, նույնիսկ, հենց, առայժմ

6. Ընդգծեք 5 վերաբերական.

ա. առջև, իսկապես որ, փոխարեն, իբր թե, ինչպիսի, թերևս, միմյանց, ասես, առթիվ, հապա
բ. չլինի՞, զատ, օգտին, դժվար թե, ամբողջ, բնավ, գուցե, դիմաց, մանավանդ, թեկուզ, մեկմեկու
գ. համար, իրոք որ, յուրաքանչյուր, երևի թե, անպատճառ, մասին, իրար, նույնիսկ, գոնե, հետ

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Զորահրամանատար, ռազմական գործիչ, Խորհրդային Միության մարշալ և կրկնակի հերոս:

Ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2–ին Գանձակ քաղաքում (այժմ՝ Ադրբեջան): Ծնողները նշանավոր Զարդախլու (Խաչիսար) գյուղից էին: Ստացել է զինվորական ծանրակշիռ կրթություն Թիֆլիսում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում:

Առաջին աշխարհամարտի (1914–1918 թթ.) տարիներին ծառայել է Կովկասյան ռազմաճակատի ռուսական էքսպեդիցիոն 2–րդ սահմանապահ գնդում: 1918–ի մայիսի 22–26–ին նա՝ որպես Հայկական 1–ին հատուկ հեծելազորային գնդի դասակի հրամանատար, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո եղել է Հայկական հրաձգային դիվիզիայի գնդացրային էսկադրոնի, ապա՝ հեծելագնդի հրամանատար, հետո՝ 5–րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում ստանձնել է զինվորական պատասխանատու պաշտոններ, վարել վճռական ճակատամարտեր: 1944–ի սեպտեմբերին, որպես 1–ին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, դուրս գալով Բալթիկ ծովի ափ, հնարամիտ գործողությամբ ջախջախել է թշնամու մեծ խմբավորումը (38 հետևակային և տանկային դիվիզիաներ): Նրա ղեկավարած այդ ռազմագործողությունն ուսուցանվում է զինվորական ակադեմիաներում՝ որպես ռազմաճակատի զորքերը մի ուղղությունից մեկ այլ ուղղություն անցկացնելիս վերախմբավորելու և հաղթանակ ապահովելու օրինակ:

1954–ից վարել է ռազմական կարևոր պաշտոններ: Վախճանվել է 1982–ի սեպտեմբերի 21–ին Մոսկվայում: Աճյունասափորն ամփոփված է Կրեմլի պատի մեջ:

Գրել է ռազմագիտական աշխատություններ, հուշագրություններ ու հոդվածներ: Նրա գործունեության մասին գրվել են գրքեր:

Նրա անունով կոչվել են փողոցներ Բելառուսի Գորոդոկ և Պոլոցկ քաղաքներում, Մոսկվայում, իսկ Երևանում՝ մետրոպոլիտենի կայարան, պողոտա, որտեղ կանգնեցված է նրա ձիարձանը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Հովհաննես Բաղրամյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Հովհաննես Բաղրամյան» գրվածքում գտի՛ր վերաբերականները և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 8

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ՏՐՈՀՈՒՄԸ

Վերաբերականները լինում են տրոհվող և չտրոհվող:

Նախադասության մեկ անդամի նշանակությունը եղանակավորող վերաբերականները չեն տրոհվում. **Գոնե** դո՛ւ ասա: **Երանի՜** ամեն ինչ իմանայի: **Հենց** դա էի ուզում:

Ամբողջ նախադասության և հետևաբար առաջին հերթին նրա միջուկի՝ ստորոգյալի իմաստը եղանակավորող վերաբերականները նախադասությունից մեծ մասամբ անջատվում են ստորակետ(եր)ով. Նա, **անշուշտ**, կկատարի խոստումը: **Դե**, գնացինք: **Ի դեպ**, ես այդ մասին գիտեի:

Սովորաբար տրոհվում են նախադասությունը երանգավորող հետևյալ վերաբերականները.

- ***հաստատական***՝ *այո՛, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, առանց այլևայլության, արդարև, բնականաբար, իհարկե, ինչ ասել կուզի, ինչ խոսք, ինչպես չէ, ինչու չէ, իսկապես (որ), իրավ որ, իրավամբ, իրոք (որ), հավաստյավ, հարկավ, հիրավի* (երբեմն էլ՝ *անպայման),*
- *ժխտական՝ ո՛չ, չէ՛, բնավ, ամենևին, քա՛վ լիցի,*
- *երկբայական* (ենթադրություն արտահայտող)՝ *ըստ երևույթին, ինչպես երևում է,*
- *գնահատողական* (ափսոսանք, ուրախություն արտահայտող)՝ *ափսո՜ս, ավա՜ղ, ի՞նչ արած, ցավոք, ցավոք սրտի* (երբեմն էլ՝ *ախր, բարեբախտաբար, դժբախտաբար, տարաբախտաբար),*
- *կամային՝ դե, դե՛հ, (հ)ապա,*
- *զիջական՝ այնուամենայնիվ, այնուհանդերձ, այսուամենայնիվ, այսուհանդերձ, ինչ որ է, ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, ճիշտ է, մեկ է, միևնույնն է,*
- *անջատական՝ ընդհակառակն, ի դեպ, ի միջի այլոց:*

Բացահայտման վերաբերականները (բացի **արդ**–ից) բացահայտյալի ու բացահայտիչի, համազոր անդամների կամ բաղադրիչ նախադասությունների միջև տրոհվում են սկզբից ստորակետով, վերջից՝ բութով, նախադասության սկզբում՝

բութով, իսկ միջանկյալ գործածվելիս՝ երկու ստորակետով: Օրինակ. *Կվերադառնամ մի քանի օրից,* ***ավելի ճիշտ****՝ մեկ շաբաթից:* ***Դիցուք****՝ գնդի շառավիղը մեկ մետր է: Մեր ընկերները,* ***մի խոսքով****, մեզ լքել են:*

Գնահատողական ***չէ՞ որ*** վերաբերականը տրոհվում է միայն սկզբից ստորակետով, միջակետով կամ վերջակետով, երբեմն՝ կախման կետերով:

Մյուս վերաբերականները, երանգավորելով նախադասության մեկ անդամի, չեն տրոհվում: Դրանք են՝

- հաստատական՝ *անպայման* (երբեմն էլ՝ *անշուշտ, անկասկած, անտարակույս, արդարև, իհարկե, իսկապես, իրավամբ, իրոք, հարկավ, հիրավի),*
- երկբայական՝ *ասես, արդյոք, գուցե, դժվար թե, երևի (թե), թերևս, իբր (թե), իբրև (թե), կարծեմ (թե), կարծես (թե), կարող է պատահել (որ), հազիվ թե, հավանաբար, հնարավոր է, հո, միգուցե, մի՞թե, չլինի՞ (թե),*
- սաստկական՝ *անգամ, եթե, իսկ, իսկ և իսկ, հենց, մանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ, նամանավանդ, նույնիսկ,*
- սահմանափակման՝ *գեթ, գոնե, թեկուզ, լոկ, միայն, միմիայն, սոսկ,*
- կամային՝ *արի, եկ, եկեք, թող, մի,*
- բաղձանքի՝ *երանի՜ (թե), երնեկ (թե), ուր է թե,*
- ցուցական՝ *ահա, ահավասիկ, այ՛:*

Վարժություններ

1. Ո՞ր նախադասություններում տրոհվող վերաբերական կա (նախադասությունները կետադրված չեն).

ա. Այսօրվա մեր հյուրը **անշուշտ** բոլորիդ քաջ ծանոթ է:
բ. Տանը **երևի** արդեն ինձ են սպասում:
գ. Ես քեզ ցավոք սրտի ոչնչով օգնել չեմ կարող:
դ. Նա ծանր էր և **կարծես** ձուլված էր ծանր մետաղից:
ե. Ժամին մի՛ նայիր մենք միևնույնն է մեկնելու ենք:
զ. Ցուցարարներն **իրոք** կողոպտել էին մի նպարավաճառի կրպակ:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի՞թե, չլինի՞ (թե), չէ՞ որ, ի՞նչ արած, ինչպե՞ս չէ վերաբերականները միշտ գրվում են հարցական նշանով, իսկ **այո՛, ա՛յ, դե՛հ** վերաբերականները՝ շեշտով: Հարցական նշան կարող են ունենալ նաև **ինչպես չէ, արդյոք** և այլ վերաբերականներ: Սովորաբար բացականչական նշանով են կիրառվում **երանի՜ (թե), երնե՛կ (թե), ափսո՜ս, ավա՜ղ, քա՜վ լիցի** վերաբերականները:

Ժխտական **ոչ, չէ** վերաբերականները շեշտվում են որպես պատասխանական բառ *(**Ո՛չ**, չեմ տեսել)* կամ նախադասության գերադաս անդամ գործածվելիս (տե՛ս ստորև) և չեն շեշտվում զեղչված ստորոգյալին փոխարինելիս *(Բոլորը պաղպաղակ սիրում են, ես՝ **ոչ**)* և հարադրական շաղկապների կազմում *(այլ **ոչ** թե, ապա թե **ոչ**, թե **չէ** և այլն)*:

Երանի՜ (երնե՛կ), ափսո՜ս, ավա՜ղ, ահա, ահավասիկ, ա՛յ, ո՛չ վերաբերականները կարող են լինել միակազմ նախադասության գերադաս անդամ. *Երանի՜ մեր միամիտ պապերին: Ավա՜ղ անցած փառքիս: Ափսո՜ս էդ ծով աչքերին: Ահա քո տոմսը: Ահավասիկ իմ տունը: Ա՛յ քեզ փորձանք: Ո՛չ բռնությանը:*

Որոշ վերաբերականներ կարող են հանդես գալ որպես բարդ ստորադասական նախադասության գերադաս բաղադրիչ. *Ա՜խ, **երանի՜**, ով մարդ կգա Ու մարդ կերթա անարատ:*

Քանի որ մի շարք վերաբերականներ իմաստափոխությամբ առաջացել են այլ խոսքի մասերից, հետևաբար որոշ բառեր խոսքում հանդիպում են մերթ որպես վերաբերական, մերթ որպես՝

- մակբայ՝ *առանձնապես, մասնավորապես, հատկապես, գլխավորապես, գերազանցապես, առավելապես, դժբախտաբար, հավանաբար, ամենևին, ապա,*
- գոյական՝ *անգամ, օրինակ,*
- շաղկապ՝ *իսկ, հենց, (հ)ապա, որ, թեկուզ,*
- թվական կամ դերանուն՝ *մի, էլ,*
- դիմավոր բայ՝ *թող, ասես, կարծես, կարծեմ, չլինի՞:*

Դրանք վերաբերական են, եթե նախադասության անդամ չեն, մեկ այլ խոսքի մասին բնորոշ պաշտոն չեն կատարում, հարց չեն ստանում: Օրինակ. ***Հենց** դո՞ւ պիտի սխալվեիր: **Մասնավորապես**, ես առաջին անգամ եմ լսում դրա մասին: Դու **կարծես** նրան ճանաչեցիր: **Մի** դե՛սն արի, որ քեզ լավ տեսնեմ: **Ապա** մի կրկնի՛ր, տեսնեմ՝ հասկացե՞լ ես: **Չլինի՞** նա հիվանդ է: Դրա մասին չգիտեի՞ր **որ**: Խոսենք **թեկուզ** եղանակից: Դահճին*

անգամ *դուք կդյութեք: Ես,* ***օրինակ****, այդպես չէի վարվի:*

Նույն բառերը հետևյալ դեպքերում այլ խոսքի մաս են. ***Հենց*** *դու գաս, ես կգնամ* (շաղկապ): *Այդ հարցը մենք կքննարկենք* ***մասնավորապես*** (ձևի մակբայ): *Ինչ էլ որ* ***կարծես****, սխալված կլինես* (դիմավոր բայ): ***Մի*** *բան ասեմ, չզարմանաք* (անորոշ դերանուն): ***Ապա*** *եկավ ձմեռը* (մակբայ): *Հանկարծ նա հիվանդ* ***չլինի՞*** (դիմավոր բայ): ***Որ*** *հանդիպեմ, կհաղորդեմ ասածներդ* (շաղկապ): *Չեմ ներելու,* ***թեկուզ*** *ոտքերս ընկնի* (շաղկապ): *Միայն մեկ* ***անգամ*** *կարող եք փորձել* (գոյական): *Գոնե մեկ* ***օրինակ*** *ասա՛, որ համոզվենք* (գոյական):

Վարժություններ

2. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը վերաբերական.

ա.

1. Հանդեսին թող մասնակցեն բոլորը և, ցանկալի է, դիմակներով:
2. Փոքրիկի ձեռքը *թո՛ղ*, որ նա սովորի ինքնուրույն քայլել:

բ.

1. *Հաստատ* նա խնամիական կապեր ունի գործարանի տնօրենի հետ:
2. Աշխարհում *հաստատ* ոչինչ չկա, այս տիեզերքն անգամ անցողիկ է:

գ.

1. Ամենասառնարյուն մարդն *իսկ* չէր դիմանա այդ ցնցող տեսարանին:
2. *Իսկ* ես, ի տարբերություն քեզ, գիտեմ, թե ինչպես են պատրաստում այդ աղցանը:

դ.

1. Իմ ու քո ասածները վերջին հաշվով *միևնույնն են:*
2. Որքան էլ բացատրեմ, *միևնույնն է*, չես հասկանա:

ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

ԵՐԱԶԳԱՎՈՐՍ

Կոչվել է նաև Շիրակավան: Մեծ Հայքի Շիրակ նահանգում էր՝ Ախուրյան ու Կարս գետերի միացման անկյունում՝ Անիից ոչ

հեռու՝ Ախուրյանի աջ ափին՝ մի ջրառատ հարթավայրում: Շրջապատված էր արգավանդ դաշտերով: Եղել է բերդ, ավան, գյուղաքաղաք, քաղաք: Շիրակ գավառի հետ Երազգավորսը 3–8–րդ դարերում պատկանում էր Կամսարական նախարարական տանը, այնուհետև՝ Բագրատունիներին:

Սմբատ Ա Բագրատունի թագավորը (890–914), որ հաջորդել էր Աշոտ Ա Մեծին, արքայական աթոռը 890–ին տեղափոխել է Երազգավորս, որը Բագրատունիների թագավորության մայրաքաղաք մնաց նաև Աշոտ Բ Երկաթի օրոք: Հաջորդ թագավորը՝ Աբասը, արքայական աթոռը 929–ին տեղափոխեց Կարս:

Երազգավորսն ունեցել է իր հաստապարիսպ միջնաբերդը: Նրանից 3 կմ հեռավորության վրա էր Տիգնիս նշանավոր ամրոցը:

11–րդ դարում սելջուկների կողմից ենթարկվել է ավերման: Վերականգնվել է 12–րդ դարի վերջերին և Զաքարյանների օրոք բավական առաջադիմել է: Սակայն 13–րդ դարի երկրորդ կեսից վերածվել է սովորական գյուղի, որը հիմնականում հայաբնակ էր և 1914–ի նախօրեին ուներ 1220 բնակիչ: 1920 թ.՝ Կարսի մարզը Թուրքիային անցնելուց հետո, գյուղի հայ բնակչությունը գաղթել է Հայաստանի Հանրապետություն:

Գյուղում պահպանվել են 897–ին կառուցված Ամենափրկիչ եկեղեցու ավերակները: Այդ եկեղեցում է Սմբատ Ա–ն Գևորգ կաթողիկոսի ձեռքով օծվել հայոց թագավոր: Եկեղեցին ունեցել է բարձր գմբեթ և կառուցված է եղել սրբատաշ քարով:

Երազգավորս–Շիրակավանում է ծնվել մեծանուն մտածող Անանիա Շիրակացին (610 թ.): Ըստ ավանդության՝ Շիրակավանի մոտակա քարայրերում են եղել շատակեր Շարայի ամբարները:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Երազգավորսի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Երազգավորս» գրվածքում գտի՛ր վերաբերականները և որոշի՛ր դրանց կիրառությունը:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 9

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Զգացմունք, կոչ կամ նմանաձայնություն արտահայտող բառը կոչվում է ձայնարկություն:

Օրինակ՝ *վա՜հ, էհե՛յ, ծուղրուղո՛ւ:*

Սովորաբար արտահայտում է խոսողի կամային կամ հուզազգացական անմիջական վերաբերմունքը:

Որևէ հարցի չի պատասխանում:

Նախադասության անդամ սովորաբար չի լինում:

Չի ձևափոխվում:

Արտաքին յուրահատկությունն այն է, որ լինում է բացականչական հատուկ առոգանությամբ, որը գրավոր խոսքում արտահայտվում է բացականչական նշանով կամ շեշտով:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնարկություններն ըստ կազմության լինում են՝

- **պարզ** (արմատական)՝ *օ՜, ա՜խ, վա՜յ, ջա՛ն, հե՛յ, բը՛զզ, փո՛, է՛յ, քշա՛, թրը՛խկ,*
- **բարդ**, որոնք լինում են՝
  1. **կցական**՝ *հայհարա՛յ,*
  2. **հարադրավոր**, որոնք գրվում են՝
     * **միության գծիկով** (մեծ մասամբ կրկնավորներ)՝ *հա՛ֆ–հա՛ֆ, է–հե–հե՛յ, հայ–հո՛ւյ, փա՛շի–փո՛ւշի, ճը՛զ–վը՛զ,*
     * **առանց միության գծիկի**՝ *հեյ վա՛խ, վույ քա՛, դե հա՛, զը՛նգ հա զը՛նգ:*

Եթե ձայնարկության միակ ձայնավորը **ը**–ն է, ապա գրվում է և ստանում շեշտ կամ բացականչական նշան: Եթե երկվանկ ձայնարկության երկու ձայնավորն էլ **ը** է, ապա գրվում է վերջինը՝ **չրը՛խկ, թրը՛մփ:**

Տևական արտասանվող ձայնարկության երկարացվող հնչյունը կարող է գրվել երկու կամ ավելի տառերով՝ **ճը՛ռռ, էհեեե՛յ:**

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սովորաբար բաժանվում են երեք խմբի:

1. **Զգացական ձայնարկություն**. **արտահայտում է զգացմունք, հույզ,** մասնավորապես՝ վիշտ, ցավ, կարեկցանք, զայրույթ, դժգոհություն, ձանձրույթ, զզվանք, տհաճություն, վախ, զարմանք, ուրախություն, հիացմունք կամ բավականություն՝ *ա՛, ա՛խ, ա՛հ, ամա՛ն, ա՛յ, բա՛, է՛, է՛հ, էհե՛, ը՛, ը՛հ, ըհը՛, թյո՛ւ(հ), թո՛ւ(հ), ի՛, ի՛հ, հա՛, հա՛յ, հայ–հա՛յ, հը՛մ, յա՛, յա՛խկ, պա՛, պա՛հ, պա՛հո՛, ջա՛ն, վա՛, վա՛խ, վա՛հ, վա՛յ, վա՛շ, վո՛ւյ, վո՛ւշ, ո՛ւ, ո՛ւխ, ուխա՛յ, ո՛ւհ, ուռա՛, ո՛ւֆ, փա՛հ, փո՛ւ(հ), օ՛, օխա՛յ, օ՛հ, օհօ՛, օ՛յ, օ՛ֆ, ֆո՛ւ(հ)* և այլն:

Ճշգրիտ նշանակությունը դրսևորվում է միայն խոսքաշարում: Օրինակ՝ **վա՛յ** ձայնարկությունը կարող է արտահայտել մերթ **ցավ** (Վա՛յ, ցավում է, ինչո՞ւ ես խփում), մերթ **վախ** (Վա՛յ, չբարձրանա՛ս, հանկարծ կընկնես), մերթ **զարմանք** (Վա՛յ, դու այստե՞ղ ես, որտեղի՞ց հայտնվեցիր), մերթ **դժգոհություն** (Վա՛յ, այս ի՞նչ արիր, ամեն ինչ փչացրիր), մերթ **հանդիմանություն** (Վա՛յ խելոք, այսպե՞ս ես սովորել դասդ):

2. **Կոչական ձայնարկություն**. **արտահայտում է կամային մղում,** մասնավորապես՝ կոչ, կանչ, խրախույս, հորդոր, հանդիմանություն, արգելք կամ վանում՝ *աղջի՛, ա՛յ, արա՛, է՛յ, էհե՛յ, ծի՛պո–ծի՛պո, ծո՛, հո՛, հարա՛յ, հե՛յ, հո՛շ, հո՛պ, հո՛պլա, չո՛շ, չո՛ւ, ջո՛ւ–ջո՛ւ, տա՛շ(ի), տո՛, տո՛ւշ(ի), փը՛խկ, փը՛շտ, փիշի՛–փիշի՛, փի՛շտ, փի՛ս–փի՛ս, քը՛խ, քը՛շ, քը՛ս–քը՛ս, քշա՛* և այլն:

Մեծ մասամբ միանշանակ է: Օրինակ՝ **քշա՛** (հավերի համար), **փի՛շտ** (կատվի համար), **հո՛շ, չո՛շ** (էշերի համար), **քը՛ս–քը՛ս** (շան համար), **հե՛յ, տո՛** (մարդու համար):

3. **Նմանաձայնություն**. **վերարտադրում է կյանքում և բնության մեջ հանդիպող որևէ ձայն**՝ *բը՛զզ, բը՛ռռ, թը՛խկ, թը՛շշ, խը՛շշ, ծի՛վ–ծի՛վ, ծուղրուղո՛ւ, հա՛ֆ–հա՛ֆ, ճը՛ռռ, միաո՛ւ, չը՛խկ, չրը՛խկ* և այլն:

Մեծ մասամբ միանշանակ է: Օրինակ՝ **հա՛ֆ–հա՛ֆ** (շան համար), **միաո՛ւ** (կատվի համար), **տը՛զզ** (ճանճի համար), **բը՛զզ** (մեղվի համար), **կը՛ռռ** (ագռավի համար), **ֆը՛շշ** (օձի համար), **ճը՛ռռ** (դռան համար), **չը՛ռռ** (թափվող ջրի համար):

Ձայնարկության արժեք ունեն նաև որոշ կարգի խոսքային բանաձևեր *(ողջո՛ւյն, բարի լո՛ւյս, շնորհակալությո՛ւն, ի զե՛ն, առա՛ջ, լա՛վ)*, հուզական արտահայտություններ *(կեցցե՛ս, Աստվա՛ծ իմ, գրո՛ղը տանի, լավ է՛լի, ա՛յ քեզ բան):*

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄԸ

Ձայնարկությունը սովորաբար ստորակետերով անջատվում է նախադասությունից. *Մեկ էլ, **թրը՛մփ**, ծառից մի խնձոր ընկավ: **Էյ**, փոքրի՛կ, արի՛ այստեղ: **Թո՛ւ**, այս ի՞նչ աղի է ճաշը...*

Եթե ձայնարկությունը կոչականին է վերաբերում, ապա նրանից չի տրոհվում և նրա հետ միասին ստանում է մեկ ընդհանուր առոգանության նշան. ***Ա՛յ** խելոք, այս ի՞նչ ես անում:*

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադասության մեջ սովորաբար լինում է միջանկյալ միավոր, որը նախադասության անդամ չէ. ***Թո՛ւ**, ո՞նց էի մոռացել... **Ա՛խ**, լեզուս չի բռնում ասելու, թե հետո ինչ եղավ:*

Կարող է լինել կոչականի կազմում. *Խելագարվե՞լ ես, **ա՛յ** տղա, ինչե՞ր ես խոսում: **Տո** անիրա՛վ, քեզ ի՞նչն է պակասում:*

Կարող է ունենալ լրացումներ՝ դառնալով յուրատեսակ միջանկյալ բառակապակցության գերադաս անդամը. ***Վա՛յ** մեզ պես տխմարներին, ինչո՞ւ քեզ հավատացինք: Վուշ–վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ–վո՛ւշ, քուրի՛կ, **Վո՛ւշ** քու սերին, քու յարին...*

Միայնակ կարող է լինել նաև բառ–նախադասություն. *«**Էհե՛**», — ծոր տվեց բժիշկը:*

Վարժություններ

1. Ընդգծե՛ք զգացական 3 ձայնարկություն.

ա. վը՛զզ, վա՛հ, փը՛խկ, օ՛ֆ, բա՛, ջո՛ւ–ջո՛ւ
բ. վա՛խ, աղջի՛, ո՛ւֆ, չը՛խկ, օ՛, հայհարա՛յ
գ. վո՛ւյ, փիշի՛–փիշի՛, օհո՛, ծի՛վ–ծի՛վ, տպռո՛ւ, ա՛խ

2. Ընդգծե՛ք կոչական 3 ձայնարկություն.

ա. հե՛յ, վա՛յ, ո՛ւհ, տո՛, չո՛շ, ղա՛–ղա՛
բ. ամա՛ն, հը՛մ, ա՛յ, արա՛, կը՛ռ, քը՛շ
գ. էհե՛յ, ուռա՛, ո՛ւխ, հարա՛յ, փի՛շտ, ֆը՛շ

3. Ընդգծե՛ք նմանաձայնական (բնության ձայներ արտահայտող) 3 ձայնարկություն.

ա. թը՛շշ, թո՛ւհ, բը՛զզ, օ՛յ, միահ՛ու, է՛յ
բ. ճը՛ռռ, պա՛հ, ջա՛ն, թը՛խկ, հա՛ֆ–հա՛ֆ, քշա՛
գ. վո՛ւշ, ը՛հը, խը՛շշ, չը՛խկ, փը՛շտ, ծուղրուղո՛ւ

ԾԻՐԱՆ

Հայաստանի հողը մարդկությանը տվել է աշխարհի համեղ ու օգտակար մրգերից մեկը՝ ծիրանը: Հասած ծիրանը նուրբ ու թավշյա կեղևով, հյութալի պտղամսով առանձնահատուկ միրգ է:

Հին հռոմեացիները ծիրանն անվանում էին «հայկական սալոր» (prunus armeniaca): Մ.թ.ա. 3–րդ հազարամյակում աքքադացիները ծիրանը կոչում էին «արմանու», այսինքն՝ «հայկական»: Միջագետքի հնագույն բնակիչներ արամեացիները (քաղդեացիները) ծիրանի ծառը կոչում էին «խազուրա արմենայա» («հայկական խնձորենի»): Արաբերենում ծիրանի անուններից մեկն է «թուֆահ ալ արմանի», որ նշանակում է «հայկական խնձոր»:

Արագած լեռան հարավային լանջերին՝ Ամբերդ գետի ձորում, պահպանվում են հայկական ծիրանենիների վայրի նախնիները:

Ծիրանը պարունակում է բազմաթիվ օգտակար նյութեր, այդ պատճառով դրան հաճախ անվանում են «առողջության պտուղ»:

Ծիրանի պտուղները օգտագործում են թարմ, չորացրած և պահածոյացված: Ծիրանի որոշ տեսակներ պարունակում են քաղցր կորիզներ, որոնք օգտագործվում են հրուշակեղենի արտադրության մեջ նուշի փոխարեն: Իսկ դառը կորիզներից հանում են յուղ, որն օգտագործվում է բուժիչ քսուքներ պատրաստելու համար:

Ծիրանենու փայտից պատրաստում են հայկական ամենահայտնի նվագարանը՝ դուդուկը (այդ պատճառով դուդուկը կոչվում է նաև ծիրանափող):

Ներկայումս շատ երկրներում են աճեցնում ծիրան, որը, սակայն, չունի Հայաստանում աճեցվածի անկրկնելի համը: Կան բազմաթիվ կարծիքներ և հին գրություններ, որոնց համաձայն՝ նա, ով պարբերաբար օգտագործում է հայոց հողում աճած ծիրան, ունենում է երկար, առողջ և երջանիկ կյանք:

Ծիրանը հայոց երկրի խորհրդանիշերից մեկն է

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ ծիրանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Ծիրան» գրվածքում գտի՛ր ձայնարկությունները և որոշի՛ր դրանց տեսակը:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 10

Շարահյուսությունը բառերը կապակցելու և նախադասություն կազմելու կանոնների ամբողջությունն է:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Խոսքը կազմվում է բառերից: Բառերը, քերականորեն կապակցվելով, կազմում են նախադասություններ, որոնք էլ խոսքի նվազագույն միավորներն են:

Այն բառը կամ բառերի քերականական կապակցությունը, որ արտահայտում է միտք և կամ հույզ, կոչվում է նախադասություն:

Օրինակ. *Լուսացավ: Ծագեց արևը: Վերջ ամենին: Ահա և մենք: Կրակ: Մուտքը՝ բակի կողմից: Ա՛յ–ա՛յ–ա՛յ...*

Միտք արտահայտելու համար նախադասությունը պետք է ունենա դիմավոր բայ (ստորոգյալ) և կամ հատուկ ինչերանգ: Միայն հույզ արտահայտելու համար բավարար է հատուկ ինչերանգը:

Խոսքի մեջ նախադասություններն իրարից բաժանվում են դադարով, որը նշանակվում է վերջակետով, երբեմն՝ կախման կետերով:

Խոսքից դուրս առանձին գործածված նախադասության վերջում վերջակետ չի դրվում: Դա վերաբերում է վերնագրերին, նկարի տակագրերին, գովազդերին, ցուցանակներին, պիտակներին և այլն.

Ղազարը գնում է պատերազմ
Երևանի պետական համալսարան
Մանկական աշխարհ
Տեսարան Երևանից
Գինը՝ 100 դրամ

Նախադասություն կազմող բառերը քերականորեն կապված են իրար և նախադասության մեջ կատարում են որոշակի դեր:

Նախադասություն կազմող և նրա մեջ որոշակի դեր կատարող բառը կամ բառերի կապակցությունը կոչվում է նախադասության անդամ:

Նախադասության անդամի կատարած դերը կոչվում է **պաշտոն:**

Նախադասության անդամներն ըստ իրենց պաշտոնի անվանվում են ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր, որոշիչ և այլն:

Սովորաբար նախադասության անդամ են դառնում նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը (գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, դերանուն) կամ դրանցով ձևավորված գերադաս անդամ ունեցող բառակապակցությունները:

Նախադասության կազմի մեջ կարող են լինել նաև նախադասության անդամներին քերականորեն չկապված բառեր կամ բառերի կապակցություններ, որոնք կոչվում են **ներդրյալ միավորներ**: Դրանք նախադասությունից սովորաբար բաժանվում են ստորակետերով կամ փակագծերով:

Նախադասության մեջ լինում են նաև նախադասության անդամները կապակցող սպասարկու բառեր՝ կապեր, շաղկապներ, որոնք նախադասության ինքնուրույն անդամներ չեն համարվում և հաճախ մտնում են որևէ անդամի կազմի մեջ. *Ես* ***ու*** *դու պարտավոր ենք մտածել նրա ապագայի* ***մասին****:*

Նախադասության որևէ անդամի կազմի մեջ կարող են լինել նաև օժանդակ բառեր (օժանդակ բայ, եղանակիչ կամ ժխտական բառ–մասնիկ), որոնք որևէ բառաձևի առանձին գրվող բաղադրիչ են. *Ինձ* ***մի****՛ հիշեցրու, թե մենք ուր* ***ենք*** *գնում:*

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասության անդամները միմյանց հետ կարող են ունենալ **համադասության, ստորադասության** կամ **ստորոգման** հարաբերություն՝ կազմելով համադասական, ստորադասական կամ ստորոգական կապակցություն:

1. **Համադասությունը նույն լրացյալն ունեցող նույնաբնույթ անդամների հարաբերությունն է միմյանց հետ:**

Համադասական հարաբերությամբ են կապված՝

- նույն լրացյալն ունեցող նույնաբնույթ անդամները. *Հանդիպեցի* ***Արմենին, Լևոնին, Կարենին****:*
- մեկից ավելի այն ենթակաները, որոնք ունեն ընդհանուր ստորոգյալ(ներ). *Երեկ* ***Հայկը, Արամը, Լուսինեն*** *մեր տանը երգում էին ու պարում:*

- նույն նախադասության մեջ միավորված մեկից ավելի այն ստորոգյալները, որոնք ունեն ընդհանուր ենթակա(ներ). *Լրագրողը ծավալուն հոդվածը* ***շարադրեց, խմբագրեց և սրբագրեց*** *մեկ ժամում:*
- Համադասական հարաբերությամբ կարող են կապված լինել նաև բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները. *Աշուն է, փչում է մեղմ քամին:*

Համադասական հարաբերությամբ կապված անդամները կարող են միանալ համադասական շաղկապով. *Դա* ***իմ ու քո*** *շնորհիվ եղավ:* ***Ես և դու*** *ընկերներ ենք:*

2. **Ստորադասությունը լրացում–լրացյալի (այդ թվում՝ գլխավոր և երկրորդական անդամների) հարաբերությունն է միմյանց հետ:**

Այդ հարաբերության կողմերից մեկը գերադաս անդամն է, որից քերականորեն կախված է մյուսը՝ ստորադաս անդամը: Այդպիսի միակողմանի կախման հարաբերություն ունեն՝

- որոշիչն ու որոշյալը. ***Թարմ*** **հաց** ունեք:
- հատկացուցիչն ու հատկացյալը. Սա ***Կարինեի*** **եղբայրն** է:
- բացահայտիչն ու բացահայտյալը. Եկել է **եղբայրդ՝** ***Հրայրը****:*
- խնդիրն ու բայով արտահայտված անդամը. Ուզում է ***ծառերը*** **ջրել**:
- պարագան և իր լրացյալը. Մենք **ապրում ենք** ***գյուղում****:*

3. **Ստորոգումը նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի և ստորոգյալի հարաբերությունն է միմյանց հետ:**

Ստորոգական հարաբերության համար պարտադիր է դիմավոր բայի առկայությունը: Ստորոգական հարաբերությամբ առաջանում է ստորոգական կապակցություն, և ձևավորվում է նախադասություն. *Վերջապես* ***եկավ ուսուցիչը****: Քիչ անց* ***դասը կսկսվի****: Հյուրերին* ***մենք*** *երկար* ***սպասեցինք****:*

Ստորոգական հարաբերությամբ ենթակային է վերագրվում ստորոգյալի արտահայտած գործողությունը, հատկանիշը կամ վիճակը:

Դիմավոր բայի միջոցով ենթակային գործողություն, հատկանիշ կամ վիճակ վերագրելը կոչվում է ստորոգում:

Ենթական ու ստորոգյալը, համարվելով նախադասության գլխավոր անդամներ, միմյանց **համազոր** են: Համազոր են նաև նույն որոշյալն ունեցող տարադաս որոշիչները. ***Երկաթե ծանր*** *դուռը բացվեց:*

Պարտադիր չէ, որ միմյանց հետ նշված հարաբերություններ ունեցող անդամները նախադասության մեջ լինեն իրար կողքի. դրանք կարող են ընդմիջվել այլ անդամներով, բառերով, կապակցություններով. ***Կարենի*** *ավագ* ***եղբորը*** *չեմ ճանաչում:* ***Սա****, ինչ խոսք,* ***համեղ է****:*

Նախադասության մեջ իրար կողքի կարող են լինել անդամներ, որոնց միջև քերականական որևէ ուղղակի հարաբերություն չկա: Դրանք միմյանց չհարաբերվող անդամներ են. *Այդ* ***օրվանից Անին*** *տնօրենին* ***տեսնելիս ամեն*** *անգամ շփոթվում է:*

Վարժություններ

1. Ընդգծեք այն բառերը կամ կապակցությունները, որոնք նախադասության անդամ չեն:

1) Սա թիթեռ է, ծաղիկ չէ:
2) — Հը՛մ, — քմծիծաղեց Ադամը:
3) Անո՛ւշ, Անո՛ւշ, այդ դո՞ւ ես:
4) Այո՛, նազելի՛ս, կգամ:
5) — Թո՛ղ, Դիլա՛ն, գնա՛ քեզ համար...

2. Ընդգծեք այն անդամները, որոնց միջև համադասական հարաբերություն կա:

1) Փա՛ռք քեզ անսահման և հավիտյան:
2) Որսի մի շուն հայտնվեց՝ դեղին ու սև պուտերով:
3) Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը:
4) Չորացած ոստերի և ցողունների մի կապ ժողովել էր, դրել մոտը:
5) Պարզ տեսնում էր ծառի բները, եկած ճամփան, ընկած հաստաբուն գերանները:

3. Ընդգծեք այն անդամները, որոնց միջև ստորադասական հարաբերություն կա:

1) Լսում եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվագը:
2) Նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա:
3) Մեղուն նեկտար է հավաքում:
4) Թարմ հետքեր կային ձյան վրա:

ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Բագրատունիների թագավորական տան գլխավոր ճարտարապետը և քանդակագործն էր: Ապրել է 940–1020 թթ.: Կառուցել է Արգինայի կաթողիկոսարանի գլխավոր եկեղեցին, Անիի Մայր տաճարը, Գագիկաշեն Ս. Գրիգոր եկեղեցին: Ենթադրաբար Տրդատին են վերագրվել նաև Հաղբատի վանքի Ս. Նշան, Սանահինի վանքի Ս. Ամենափրկիչ, Մարմաշենի վանքի գլխավոր, Անիի Ս. Փրկիչ եկեղեցիները, Արգինայի կաթողիկոսարանի համալիրը, Անիի Սմբատաշեն պարիսպը և այլն: 980–ական թթ. արդեն նշանավոր, Հայաստանի սահմաններից դուրս ճանաչված ճարտարապետ էր: Նա է վերականգնել Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի (6–րդ դ.)՝ երկրաշարժից ավերված գմբեթը՝ ավելի քան 31 մ տրամագծով: Վերջում կամարի վրա հայերեն տառերով գրել է իր անունը: 994 թ. Տրդատի կառուցած գմբեթը կանգուն է արդեն ավելի քան հազար տարի:

Տրդատի ստեղծագործությունների գլուխգործոցը Անիի Մայր տաճարն է, որ կառուցվել է հայոց թագուհի Կատրանիդեի պատվերով: Գագիկ Ա Բագրատունի թագավորի հանձնարարությամբ Անիում կառուցել է նաև Ս. Գրիգոր (Գագիկաշեն) եկեղեցին՝ նախօրինակ ունենալով Զվարթնոց տաճարի հորինվածքը: Հիշարժան է եկեղեցու պատին Գագիկ արքայի քանդակը՝ կառույցի մանրակերտը ձեռքին: Գրեթե բոլորաքանդակ այս արձանում դրսևորվել է Տրդատի քանդակագործական տաղանդը:

Տրդատը մեծ ազդեցություն է ունեցել հայկական և եվրոպական ճարտարապետության հետագա զարգացման, ոճական նոր ուղղությունների և հորինվածքային սկզբունքների ձևավորման գործում: Եվրոպացի գիտնականները նշել են, որ ավելի ուշ կազմավորված ռոմանական և գոթական ճարտարապետությանը բնորոշ հիմնական սկզբունքներն առկա են հայկական միջնադարյան ճարտարապետության, մասնավորապես Անիի Մայր տաճարի կառուցվածքային ու զարդարական ձևերում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Տրդատ ճարտարապետի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Տրդատ ճարտարապետ» գրվածքում գտի՛ր նախադասության՝ համադասական հարաբերությամբ կապված անդամներ:

ԴԱՍ 11

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք, նախադասությունը կարող է լինել **պարզ** կամ **բարդ**:

Պարզ է կոչվում մեկ ամփոփ միտք արտահայտող նախադասությունը:

Օրինակ. *Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս:*

Ավարտուն միտք արտահայտող նախադասությունն ավարտվում է վերջակետով. *Մարգագետինները ծխում էին դաղձի բույր:*

Ոչ ավարտուն, առկախ միտք կամ հույզ արտահայտող նախադասությունն ավարտվում է կախման կետերով. *Ինչքա՜ն միանման են հաչում շները...*

Պարզ նախադասությունը կարող է ունենալ ստորոգական հարաբերությամբ կապված երկու գլխավոր անդամ՝ ենթակա և ստորոգյալ, կամ էլ դրանցից միայն մեկը: Ըստ այդմ՝ նախադասությունները լինում են **երկկազմ** կամ **միակազմ**:

ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկկազմ է կոչվում երկու գլխավոր անդամ՝ ենթակա և ստորոգյալ պարունակող նախադասությունը:

Դրանցից բացի՝ նախադասության կազմում կարող են լինել նաև երկրորդական անդամներ: Ըստ այդմ՝ պարզ նախադասությունները լինում են **համառոտ** և **ընդարձակ**:

Ծանոթություն: Երկկազմ նախադասության մեջ կարող են զեղչված լինել (առկա չլինել) ենթական և կամ ստորոգյալը (տե՛ս «Զեղչում» բաժինը՝ էջ 208–212):

ՊԱՐԶ ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պարզ համառոտ է այն նախադասությունը, որը կազմված է միայն գլխավոր անդամներից:

Պարզ նախադասության ենթական և ստորոգյալը համարվում են գլխավոր անդամներ, քանի որ դրանք՝

- իրենցից գերադաս անդամ չունեն (որևէ այլ անդամի չեն ստորադասվում),

- միմյանց նկատմամբ համազոր են (մեկը մյուսի լրացումը չեն):

Երկկազմ պարզ համառոտ նախադասությունը կազմված է միայն երկու գլխավոր անդամներից՝ **ենթակայից** և **ստորոգյալից** *(Ձյուն է գալիս)*: Վերջիններս կարող են լինել բազմակի *(Արամն ու Հայկը եկան էլ, գնացին էլ)*:

Միջարկությունների (կոչականի, ձայնարկության ու վերաբերականի) առկայությունը նախադասության բնույթը և կազմը չի փոխում, քանի որ դրանք նախադասության անդամներ չեն *(Դե՛, տղանե՛ր, ես գնացի)*:

ԵՆԹԱԿԱ

Ենթական նախադասության այն անդամն է,

- **որը կատարում է գործողությունը.** ***Երեխան*** *վազում է:*
- **որը ենթարկվում է եղելությանը.** ***Տունը*** *փլվեց:* ***Հասածները*** *վերջացան:*
- **որին վերագրվում է ինչ-որ հատկանիշ.** ***Թուղթը*** *սպիտակ է:* ***Ես*** *բժիշկ եմ:*

Պատասխանում է **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ(ը)** կամ **ինչե՞ր(ը)** հարցին:

Արտահայտվում է գոյականով, դերանունով, անորոշ դերբայով, փոխանվանաբար՝ նաև այլ խոսքի մասերով:

Ենթական լինում է՝

- սովորաբար ուղղական հոլովով. ***Մենք*** *հպարտ ենք մեր հայրենիքով: Մի* ***միտք*** *անցավ գլխովս:* ***Վա՛յ, տունս*** *քանդվեց: Աշնան* ***ամիսներն*** *էլ անցան:*
- երբեմն բացառական հոլովով՝ կոչվելով **մասնական ենթակա**. ***Սրանցից*** *չի ճարվում: Համերգում կինչեն նաև Կոմիտասի* ***ստեղծագործություններից****:*

Ենթական, որպես կանոն, չի տրոհվում: Տրոհվել կարող է միայն անորոշ առումով թվարկված վերջադաս բազմակի ենթական. *Աշխարհի մայրցամաքներն են՝ Եվրասիա, Աֆրիկա, Հս. Ամերիկա, Հվ. Ամերիկա, Ավստրալիա, Անտարկտիդա:*

Վարժություններ

1. Նշե՛ք երկկազմ նախադասությունները:

1) Ինչ շատ են արահետները քարափների ու ժայռերի վրա:

2) Վաճառվելուց հետո գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե՞ աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի:
3) Մեր թաղամասն ինչո՞ւ են անվանում Դիմաց:
4) Ծխի ու փոշու կապտագույն շղարշ է փռված քաղաքի վրա:
5) Նույն խոչն ու խութը, նույն քարերը, տաք փոշին, ջարդված հասկերը, չորացած խոտը:

2. Ընդգծե՛ք ենթակաները:

1) Կա այծի արահետ, որը բանուկ է, երբ կանաչում են քարափի ծերպերին բուսած թփերը:
2) Անորոշ է կավի ձևը, բայց ձեռքերը այդ հարափոփոխ զանգվածին կերպարանք են տալիս:
3) Արևը թեքվում էր, ստվեր էր ընկնում գետի վրա, ու սկսվում էր մեղմ քամին:
4) Մենք թեպետ վայելչագրության տետրի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս:
5) Նույնիսկ այդ մութ շղարշի միջից ցոլում էր նրա սպիտակությունը, ինչպես անարատ մարմինը՝ թափանցիկ քողի միջից:

3. Ընդգծե՛ք թավ գրված այն բառերը, որոնք ենթակա չեն:

1) Մութ ձորից բարձրանալով՝ **արև** ենք դուրս գալիս:
2) **Աչքերս** բարձրացնում եմ նրա **կողմը** և չեմ պատասխանում:
3) Նրա տեղը վերի **ձորն** է, ուր միշտ կիսով չափ **խավար** է:
4) **Երկուսով** անիծում էին մեզ, հիշում մեր չարաճճի **արարքները**:
5) Խրճիթից դուրս է գալիս մի կին, **որ** ինչ–որ **բան** է շպրտում շան կողմը:

4. Ընդգծե՛ք թավ գրված այն բառերը, որոնք ենթակա են:

ա.

1) Թա՛խկ, թա՛խկ, հնչում է թիթեղագործի փայտե մուրճի խուլ ձայնը:
2) Փակում եմ աչքերս, և տերևների խշշոցը հիշեցնում է ինձ լուռ ընթերցանության ժամը դասարանում:
3) Դու քեզ լավ չես պահում, Անտո՛ն... Փողոցային երեխայի նման ես:
4) Հորիզոն կոչվում է երկնքի և երկրի միացման գիծը:

Բ.

1) Աշնանը բրուտները կուժ ու կարաս են տանում Գետեր և բերում են բրինձ, բուրդ, ցորեն:
2) Իսկ ուսուցիչը պահանջում է վայելչագրության տետրը:
3) Երբ ավարտվում է աշխատանքը, քաղաքում կամաց–կամաց զարթնում է երեկոյան աղմուկը:
4) Բոլորովին մոտիկ մի դարպաս են կողպում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ԿՈՇԻԿ

Հայաստանում կաշեգործությունը, թաղիքագործությունը և կոշկագործությունը հին և տարածված արհեստներ են: Դրա մի կարևոր վկայությունը եղավ վերջին տարիների մի գտածո: 2008 թ. հնագետները Հայաստանում՝ Վայոց ձորի Թռչնի (Արենի–2) քարանձավում, պեղեցին գտան աշխարհի հնագույն կաշվե կոշիկը, որը կարված է կովի կաշվի մեկ ամբողջական կտորից և միջազգային 4 անկախ փորձագիտական հաստատությունների կողմից թվագրվել է մոտավորապես մ.թ.ա. 3600–3500 թթ.: Դա նշանակում է, որ հայերը կաշվից կոշիկ կարելիս ու հագնելիս են եղել ավելի քան 5500 տարի առաջ:

Ուրեմն կարելի է վարկած առաջադրել, թե կոշիկի գյուտը հայերն են արել: Դա վերջնականապես ապացուցելու համար անհրաժեշտ են լրացուցիչ հիմնավորումներ, այդ թվում՝ լեզվաբանական:

Մինչև վերջերս ենթադրվում էր, թե ***կոշիկ, կաշի, մաշիկ, մաշկ, տրեխ, մույկ, մորթի, կաճ, թաղիք, սեկ, լեկ, փոկ*** *բառերը փոխառություններ են տարբեր լեզուներից: Սակայն նորագույն հետազոտությունները բացահայտում են դրանց բնիկ՝ հնդեվրոպական լինելը:*

Ինչպես հայտնի է, հնդեվրոպացիները հնուց անտի ոտնաման պատրաստում են հիմնականում կաշվից: Սկզբնապես ոտնամանը միայն կաշի էր, որ փաթաթվում էր ոտնաթաթի շուրջը և կաշվե թելերով կապվում ամրացվում, ինչպես, օրինակ՝ տրեխը: Հետո սկսեցին կաշվի կտորները թելերով կարել այնպես, որ ոտնաթաթի ձևն ունենան: Ավելի ուշ հայտնվեցին հաստակաշի ներբաններն ու կրունկները: Սա նշանակում է, որ ոտնամանը փաստորեն կաշի էր, կաշին էլ՝ կոշկացու: Այսինքն՝ ոտնամանն ու կաշին սերտորեն

առնչվող երևույթներ էին և հաճախ անվանվում էին նույն բառով կամ նույն արմատի տարբերակներով:

Այս տեսակետից և այս համաշարում խիստ հատկանշական է «կաշի» և «ոտնաման» նշանակող հայերեն մի քանի համանման, հարանուն կամ համանուն բառազույգերի առկայությունը: ***Կաշի*** *և* ***կոշիկ, կաշի*** *և* ***կաճ, մաշկ*** *և* ***մաշիկ, մորթ*** *և* ***մույկ*** *բառազույգերի դեպքում ունենք իմաստային ու ձևային այնպիսի նմանություն, որ հարկադրված ենք ենթադրելու ծագումնաբանական նույնություն: Եվ իսկապես, ուղղակի անհավանական է թվում, թե, ասենք,* ***մաշկ*** *բառը ասորերենից է,* ***մաշիկ****–ը՝ վրացերենից,* ***կաշի****–ն աքքադերենից է,* ***կոշիկ****–ը՝ պարսկերենից և այլն: Իրականությունն այն է, որ այդ զույգ բառերը նույնարմատ են և բնիկ հայկական:*

Բնիկ հայկական ծագում ունեն նաև ***տրեխ, սեկ, լեկ, փոկ*** *բառերը, որոնք կոշիկի տարբեր տեսակների անվանումներ են տարբեր բարբառներում:*

Բնիկ հայերեն ***կաճ*** *և* ***թաղիք*** *բառերը հոմանիշներ են: Ցույց են տալիս մորթու վերամշակումից ստացված հաստ թաղանթ, որից նույնպես կոշիկ է կարվում (հատկապես ձմեռային):*

Ինչ վերաբերում է փոխառության հանգամանքին, ապա իրականում հայերենն է այլ լեզուների տվել «կաշի» և «ոտնաման» նշանակող բառեր: Հանրահայտ է, որ ***կաճ*** *բառը հայերենից անցել է մի շարք լեզուների (թուրքերեն, վրացերեն, հունգարերեն, լեհերեն, սերբերեն, գնչուերեն և այլն) և դրանցից մեկից նույնիսկ վերադարձել է խոսակցական հայերեն. խոսքը թուրքերենում աղավաղված* ***քեչա*** *(= կաճ) բառի մասին է: Իսկ թուրքերեն* ***չարուխ*** *բառը հայերեն* ***տրեխ****–ի աղավաղումն է:*

Պարսկերենը հայերենից վերցրել է ***քաֆշիկ*** *բառը այն ժամանակ, երբ հայերենում* ***կոշիկ (կօշիկ)*** *բառն ուներ* ***կավշիկ (կաւշիկ)*** *ձևը:*

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ կոշիկի, թաղիքի, կաշեգործության մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Կոշիկ» գրվածքում գտի՛ր նախադասությունների ենթակաները և որոշի՛ր, թե դրանք ինչ խոսքի մասերով են արտահայտված:

ԴԱՍ 12

ՍՏՈՐՈԳՅԱԼ

Ստորոգյալը նախադասության այն անդամն է, որը արտահայտում է՝
• **ենթակայի վիճակը**. *Իմ գիրքը **քրքրված է**: Ամեն ինչ **կա**:*
• **ենթակայի կատարած կամ կրած գործողությունը**. *Քո ուզածը **եղավ**: Մեր խումբը **հաղթեց**: Քանոնը **ջարդվեց**:*
• **ենթակային է վերագրում որևէ հատկանիշ**. *Հայկը շատ **խելոք է**: Նրանք **գերազանցիկ են**:*

Պատասխանում է **ո՞վ է, ի՞նչ է, ո՞րն է, ինչպիսի՞ն է, ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ եղավ, ի՞նչ կլինի, ի՞նչ չի լինի** և նման հարցերից որևէ մեկին:

Ստորոգյալը կազմված է լինում դիմավոր (խոնարհված) բայից կամ պարտադիր պարունակում է դիմավոր բայ: Ըստ այդմ՝ ստորոգյալը լինում է երկու տեսակի՝ **պարզ** և **բաղադրյալ**:

ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Պարզ է այն ստորոգյալը, որը կազմված է միայն դիմավոր բայից (ժամանակաձևից): Ընդ որում՝ դա կարող է լինել՝

• պարզ ժամանակաձև. ***Գնացի**: Ամեն ինչ **կասեմ**: Ես դա **պիտի իմանամ**: Ինձնից **ձեռք քաշեք**: Ձին **ծառս եղավ**: **Հեռացի՛ր**: **Մի՛ արա** այդ բանը: Եթերում «Լրաբեր» ծրագիրն **է**:*

• բաղադրյալ ժամանակաձև, որ կազմված է լինում ձևաբայից և օժանդակ բայից. ***Անձրևում է**: Տնօրենը **չի գա**: Քեզնից այդպիսի բան **չէի ենթադրել**: Առավոտյան **մեկնելու եմ**:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ժամանակաձևերը կարող են արտահայտված լինել՝
• **պարզ կամ ածանցավոր բայով.** *Շա՛տ **կարդա**, որ մարդ **դառնաս**: **Մեծանում է**, բայց **չի խելոքանում**:*
• **բարդ (հարադրական կամ զուգադրական) բայով.** ***Վե՛ր կաց**, հերիք է՝ **գլուխ պահես**: Աշխատելու փոխարեն նա ամբողջ օրը **ուտում-խմում է**:*

Պետք է նկատի ունենալ, որ **եմ** բայը միայնակ նույնպես կարող է լինել պարզ ստորոգյալ. *Համլետի դերում Վահրամ Փափազյանն **էր**: Արշավախմբում Հայաստանից միայն ես **էի**: Հարթակի վրա ընդամենը մի մարդ **է**: Հիմա մարտ ամիսն **է**:*

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ

Բաղադրյալ է այն ստորոգյալը, որը կազմված է դիմավոր բայից և որևէ այլ բառից. *Երկինքը **պարզ է**: Մենք **երկուսով ենք**: Սա **նա չէ**:*

Բաղադրյալ ստորոգյալի՝ դիմավոր բայով արտահայտված բաղադրիչը կոչվում է հանգույց (ստորոգիչ), իսկ այլ խոսքի մասով կամ դերբայով արտահայտված մասը՝ ստորոգելի (ստորոգելիական վերադիր):

ՍՏՈՐՈԳԵԼԻ

Ստորոգելին բաղադրյալ ստորոգյալի այն բաղադրիչն է, որ արտահայտված է ոչ դիմավոր բայով: Ցույց է տալիս այն հատկանիշը, որը վերագրվում, ստորոգվում է ենթակային:

Արտահայտվում է՝

• գոյականով. *Սևանը քաղցրահամ **լիճ** է: Սա **Անդրանիկինն** է: Դուռը թող կաղնու **փայտից** լինի:*

• ածականով. *Գայլ Վահանը շատ **խիզախ** է եղել: Իմ ժամացույցը **ոսկյա** է: Նա **անհաղթելի** է դարձել:*

• թվականով. *Դասարանում նա **առաջինն** է: Ժամը **11-ն** է:*

• դերանունով. *Արդյո՞ք սա **բոլորն** է: Դա **ի՛մն** է: Քեզ զանգողը **ես** էի: Մեր մանկության տարիներն **ուրիշ** էին:*

• անորոշ, ենթակայական կամ հարակատար դերբայով. *Դա **երգել** չէ, որ դու երգում ես: Այդ ճաշը ես **ուտող** չեմ: Երեխաները **քնած** են:*

• բառակապակցությամբ (դարձվածով). *Պարկը **ուսից կախ** է: Վերջերս նա **խիստ նիհարած** է:*

ՀԱՆԳՈՒՅՑ (ՍՏՈՐՈԳԻՉ)

Հանգույցը բաղադրյալ ստորոգյալի այն բաղադրիչն է, որ արտահայտված է դիմավոր բայով: Ենթակային է կապում, վերագրում ստորոգելիի ցույց տված հատկանիշը՝ դրան գումարելով իր արտահայտած իմաստը:

Արտահայտվում է՝

• **եմ** բայով (էական բայ). *Այն ժամանակ ես երեխա* ***էի****: Սա հայերեն* ***չէ****:*

• հանգուցային այլ բայով. *Դու երջանիկ* ***կլինես****: Եվ սա* ***համարվում է*** *բարեկրթություն: Նա ինձ բարի* ***թվաց****: Այդ օրվանից կղզին* ***կոչվեց*** *Ախթամար: Հիվանդ* ***մի՛ ձևացիր****:*

Հանգույցի դեր կարող են կատարել **լինել, դառնալ, համարվել, կոչվել, անվանվել, թվալ, ձևանալ** և մի քանի այլ բայեր, որոնք իրենց նույն կամ այլ իմաստներով կարող են կիրառվել նաև իբրև պարզ ստորոգյալ: Օրինակ. *Այդպիսի բան երբեք* ***չի լինում*** (պարզ ստորոգյալ): *Մածունը սև* ***չի լինում*** (հանգույց): *Խորենը* ***դարձավ*** *իր ունկնդիրներին և փվեց վերջին հարցը* (պարզ ստորոգյալ): *Խորենը դասախոս* ***դարձավ*** (հանգույց): *Ամպերը* ***ձևանում են*** *սառը օդից* (պարզ ստորոգյալ): *Նրանք հիվանդ* ***են ձևանում*** (հանգույց):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Էական բայով արտահայտված հանգույցը չպետք է շփոթել օժանդակ բայի հետ: Վերջինս լինում է բայի բաղադրյալ ժամանակաձևի կազմում ձևաբայի հետ միասին, հետևաբար կարող է լինել նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցի կազմում. *Սևանա լիճն ավելի մեծ* ***է*** *եղել: Ես օդաչու* ***չեմ*** *դառնա:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Էական բայով արտահայտված հանգույցի ստորոգելին *(Նրանք իմ* ***ծնողներն*** *են)* **երբեմն շատ նման է լինում միայն եմ բայով արտահայտված պարզ ստորոգյալի ենթակային** *(Այս նկարում իմ* ***ծնողներն*** *են):* **Տարբերելու համար նախադասության մեջ պետք է փնտրել մեկ այլ ենթակա: Եթե այդպիսին կա (կամ զեղչված է), ուրեմն կասկածելի բառը ստորոգելի է, իսկ եթե չկա, ուրեմն ենթակա է:**

Վարժություններ

1. Ընդգծեք պարզ ստորոգյալները:

1) Դիմացի լանջին կանաչին են տալիս ցորենի մանր արտերը:
2) Տեսիլքը գնաց հեռացավ՝ աստիճանաբար մարելով երկնքի խորքում:
3) Բուրգերի գլխին ասես հսկում կա:
4) Հեռվից ամրոցի ավերակները չեն երևում:
5) Քրոջ ասելով՝ Խոնարհն արդեն վեր է կացել:

2. Ընդգծեք պարզ ստորոգյալները և նշեք, թե ինչ կազմության (պարզ կամ բաղադրյալ) ժամանակաձևով են արտահայտված:

1) Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր:
2) Առաջին երկու ձիավորները չեն տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը:
3) Շները հարձակվեցին ձիավորների վրա:
4) Ձորերում հալվում են ամպի ծվենները:
5) Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից:
6) Այս ու այն կողմ վազվզող հնագետի գլխում Բակուր իշխանից և մագաղաթյա մատյանից բացի ուրիշ ոչինչ չկար:

3. Ընդգծեք բաղադրյալ ստորոգյալները:

1) Վաղուց գոց են ապարանքի երկաթե դռները:
2) Պապից պատասխան չստանալով՝ Արմենակը խռովկան էր դառնում:
3) Փոշին ճամփի վրա անպակաս էր գիշեր–ցերեկ:
4) Բզեզի համար աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ:
5) Իմ աչքին մտրակը դառնում է սև օձ:

4. Ընդգծեք ստորոգելիները և նշեք, թե ինչ խոսքի մասով են արտահայտված:

1) Մյուս կածանները նրանց անծանոթ են և երկյուղալի:
2) Վաղ առավոտյան հնձի գնացողներից ոմանք ոտքով են:
3) Նոր սերունդն իրեն չի համարում ո՛չ Մոտկանա երկրից և ո՛չ Տալվորիկից:
4) Պահածոյի թիթեղյա տուփը չտեսնված նորություն էր այդ քարափների վրա:
5) Աղջիկը վիճակախաղ կազմակերպողներից էր:

ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

ԲԱԳԱՐԱՆ

Հիշատակվում է նաև Դիցվան, Ամուր անուններով՝ որպես ամրոց, բերդ, ավան, բերդաքաղաք կամ քաղաք: Կառուցված էր Այրարատ նահանգի Երասխաձոր (Արշարունիք) գավառում՝ Ախուրյանի և Արաքսի միախառնման վայրում՝ Ախուրյան գետի

աջ ափին՝ Մրեն գյուղից հարավ՝ պատմական Երվանդաշատ մայրաքաղաքից 8–9 կմ հյուսիս:

Ըստ Մովսես Խորենացու՝ Բագարանը կառուցել է Երվանդունիների վերջին թագավոր Երվանդ Դ–ն մ.թ.ա. 3–րդ դարի սկզբներին և նախկին մայրաքաղաք Արմավիրից այստեղ տեղափոխելով կուռքերը՝ դարձրել Արարատյան թագավորության կրոնական գլխավոր կենտրոնը: Իր եղբայր Երվազին էլ կարգել է քրմապետ: Երվանդունիների թագավորության անկումից հետո (2–րդ դար) Բագարանը անշուքանում է և ավելի քան 1000 տարի մեր պատմության մեջ չի հիշատակվում: Նրա փոխարեն պաշտամունքային կենտրոն է դառնում Բագավանը, որ Արածանիի ափին էր:

8–րդ դարի վերջերին Բագարանը Արշարունիք ու Շիրակ գավառների հետ միասին դառնում է Բագրատունի Աշոտ Մսակեր իշխանի սեփականությունը: Նա Բագարանը դարձնում է իր աթոռանիստը: Սկսած այդ ժամանակներից՝ Բագարանը բավական բարգավաճում է, իսկ Բագրատունի առաջին թագավոր Աշոտ Ա–ն (885–890) դարձնում է նորահիմն թագավորության մայրաքաղաք: Աշոտ Ա–ին փոխարինած Սմբատ Ա–ն (890–914) իր գահը Բագարանից փոխադրում է Երազգավորս, որն այդ ժամանակ Բագրատունիների թագավորության կենտրոնում էր և ավելի անառիկ էր:

1045–ին Անիի թագավորության հետ Բագարանը ևս նվաճվում է Բյուզանդիայի կողմից, 1064–ին քաղաքը գրավում են սելջուկ թուրքերը, 12–րդ դարի սկզբներին՝ Շահարմենները: 1211–ին Բագարանը Հյուսիսային Հայաստանի հետ ազատագրվեց Զաքարյան հայ իշխանների կողմից և սկսեց ծաղկել: 1236–ին քաղաքը գրավեցին մոնղոլ–թաթարները, իսկ 1394–ին ավերեց Լենկթեմուրը:

20–րդ դարի սկզբներին պատմական Բագարան քաղաքի տեղում եղած գյուղը ուներ շուրջ 350 հայ բնակիչ: Նրանք Հայաստանի Հանրապետություն են տեղափոխվել, երբ գյուղը հանձնվել է Թուրքիային: Ներկայումս Բագարան քաղաքի տեղում Բաքրան անունով քրդական մի գյուղ կա:

Բագարանի տարածքում պահպանվել են Ս. Թեոդորոս (7–րդ դ.), Ս. Գևորգ (1030 թ., Գևորգ Մարզպետունու գերեզմանի վրա), Ս. Շուշան (9–12–րդ դդ.) եկեղեցիները, բերդապարիսպի մնացորդներ:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Բագարանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Բագարան» գրվածքում գտի՛ր նախադասությունների սպորոգյալները և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 13

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենթական և ստորոգյալը համաձայնում են թվով, ինչպես նաև դեմքով: Դեմքով համաձայնություն լինում է, երբ ենթական արտահայտված է անձնական դերանվամբ կամ ունի դիմորոշ հոդ:

Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական. *Ծաղիկը բացվեց: Ես քնած չեմ: Հրապարակում շատ ժողովուրդ է հավաքվել: Նրա համար ամեն ինչ միևնույնն է: Միացյալ Նահանգները ներխուժել է Իրաք: «Կայծերը» շատ հետաքրքիր գիրք է:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և հոգնակի թվով *(Փողոցով* ***սլանում էին*** *երկու մեքենա: Գետնին* ***ընկած էին*** *մի քանի գերան),* **և եզակի** *(Ընդամենը հինգ զորամաս* ***է մասնակցում*** *զորավարժություններին: Քո աշխատանքում* ***հայտնաբերվել է*** *մի երկու թերություն):*

Ստորոգյալը հոգնակի թվով է, եթե ենթական՝

• հոգնակի է. *Ծառերը ծաղկել են: Երկու երևելիներ մրցում էին իրար հետ: Նրանք արդեն եկել են:*

• բազմակի է. *Արագածը, Աժդահակն ու Կապուտջիղը Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթներն են: Ո՛չ Արարատը, ո՛չ Արագածը գործող հրաբուխ չեն: Թե՛ Արմենը, թե՛ Արամը և թե՛ Հայկը իմ եղբայրներն են:*

Եզակի թվով բազմակի ենթակայի հետ ստորոգյալը սովորաբար լինում է եզակի թվով, եթե՝

• ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն. *Գարնանային վար ու ցանքը եռուզեռի մեջ է: Տես՝ ինչ ընտիր նետ ու աղեղ է. վերջերս եմ ավար վերցրել:*

• ենթականերն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ. *Յուրաքան-*

չյուր փողոց ու նրբանցք պետք է բարեկարգվի ու մաքրվի: Ոչ մի թափառաշրջիկ ու մուրացկան մեր քաղաքում չպետք է լինի:

• ենթակաները կապված են **կամ, կա՛մ ... կա՛մ, ոչ թե ... այլ** շաղկապներից որևէ մեկով. *Դասը թող պատասխանի Խաչատուրը կամ Համբարձումը: Կպարգևատրվի կա՛մ Մանուշը, կա՛մ Լուսինեն: Ժողովում ես պիտի խոսեմ կամ դու: Եկավ ոչ թե Մարոն, այլ Անուշը:*

Եթե **կամ, կա՛մ ... կա՛մ, ոչ թե ... այլ** շաղկապներով միացած ենթակաները թվով տարբեր են, ապա ստորոգյալը համաձայնում է իրեն մոտիկ ենթակայի հետ. *Պատասխան պիտի տա երեխան կամ նրա ծնողները: Առաջին շարքում պիտի կանգնեն ոչ թե գերազանցիկները, այլ դասղեկը:*

Եթե ենթականերից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին, ապա ստորոգյալը համաձայնում է իրեն նախորդող ենթակայի հետ. *Այդ ամենից ջինջ հիշողություններ են մնացել և մի կսկիծ: Ո՛չ ես պիտի գնամ դասի, ո՛չ դու: Թե՛ Արամն է իմ եղբայրը, թե՛ Արմենը: Սեղանին մի թեյաման կա և շատ բաժակներ:*

Եզակի թվով ենթակայի հետ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը հոգնակի թվով է լինում, եթե ստորոգելին՝

• հոգնակի է. *Մեր ապագան **երեխաներն** են: Գլխավոր նորությունը կրթական համակարգի **բարեփոխումներն** են: Բախման պատճառը վիճելի **տարածքներն** են: Պետական եկամուտի աղբյուրներից մեկը **հարկերն** են:*

• բազմակի է. *Իմ ընտրությունը **Անին ու Հայկն** են: Գյուղի իրական իշխանությունը **գյուղապետն ու իր տեղակալն** են:*

• արտահայտված է **բոլորը** կամ **ամենքը** դերանունով. *Մեղավորը **բոլորն** են: Այս գրքի հասցեատերը **ամենքն** են:*

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով *(Հասմիկն ու Հայկը մեր դասարանի **գերազանցիկներն** են)*, բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

• ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է. *Դուք, պարո՛ն Պետրոսյան, մեր առաջին **ուսուցիչն** եք եղել:*

• ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է. *Երեխաները մեր երկրի **ապագան** են:*

• ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով. *Սրանք դեռ*

երեխա *են և այդպիսի բարդ բաներ չեն կարող հասկանալ: Քո ցույց տված բոլոր ծառերը* ***կաղնի*** *էին:*

1–ին կամ 2–րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հոդ (**ս** կամ **դ**) ունեցող ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1–ին կամ 2–րդ դեմքով: *(Ես՝) նվաստս,* ***աղոթում եմ*** *ձեր հոգու փրկության համար: (Դուք՝) ամենքդ,* ***կգաք*** *ձեր տիկնանց հետ:*

Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3–րդ դեմքով. *Բոլորը* ***մեկնել են*** *ամառանոց: Վերարկուս* ***փոշոտվել է****:*

Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ *(****Ես****, դու, եղբայրդ* ***կմնանք*** *այստեղ)*, դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ *(****Դու*** *և քույրդ իրար շատ* ***նման եք****)*, նաև վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով *(Շափյուղան և հակինթը կիսաթանկարժեք* ***քարեր են****):*

Վարժություններ

1. Ո՞ր նախադասության մեջ ենթակայի և ստորոգյալի համաձայնության սխալ կա:

ա.

1) Այդ ժխորին խառնվում էր տերերի կանչն ու աղմուկը, հարայհրոցն ու բղավոցը:
2) Կյորեսցիներից յուրաքանչյուրն ուներ իր լուծը և իր մաշվող վիզը:
3) Երբեմն մի լեռնցի կամ քոչվոր մի թուրք մոլորված մտնում էր այդ խանութներից մեկնումեկը:
4) Երվանդը և նրա մայրը հոնքերի տակից Ռուզանին էին նայում, նրա սպիտակ վերնաշապիկին, թևերին:

բ.

1) Հին ճանապարհի տղաներից յուրաքանչյուրը, իր շան շղթան թևին փաթաթած, գնում էր կռվի:
2) Երբ Սիրվարդն ուզեց թիկնել, ոտքերը մի քիչ մեկնեց և ձեռքով շրջազգեստի փեշերը հավաքեց:
3) Դու եղբորդ հետ կմնաք տանը և կսպասեք մեր հեռախոսազանգին:
4) Տարվա մեջ մեկ օր միայն Արեգակը հայտնվում է ճիշտ մեր գլխավերևում:

2. Փակագծերում տրված տարբերակներից ընտրեք նախադասությանը համապատասխանողը:

1) Այդ ամենը նրա սիրտը *(վրդովեցին, վրդովեց)* անհանգիստ հույզերով:
2) Փողոցի աջ կողմում բարձրացող նոր տների մի մասը կիսավարտ *(էին, էր)*:
3) Մեր գյուղի բնակչության ավելի քան տասը տոկոսը բարձրագույն կրթություն *(ունեն, ունի)*:
4) Տնտեսական ճգնաժամից մեծապես *(տուժեց, տուժեցին)* Ամերիկայի Միացյալ Նահանգները:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Աստղաֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 18–ին Թիֆլիսում: 1924–1928–ին ավարտել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքը: 1935–ին առանց ատենախոսության պաշտպանության նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան:

1943–ին նրա և Հ. Օրբելու ջանքերով Երևանում հիմնադրվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան: Նա դարձել է դրա առաջին փոխնախագահը, իսկ 1947–1993–ին՝ նախագահը:

1946–ին հիմնադրել է ԵՊՀ աստղաֆիզիկայի ամբիոնը և Բյուրականի աստղադիտարանը, որտեղ կատարված հետազոտությունները կանխորոշեցին 20–րդ դարի երկրորդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները:

Համաշխարհային գիտության պատմության մեջ նոր էջ են բացել նրա ներդրումները աստղաֆիզիկայի մի շարք բնագավառներում: Մի շարք սկզբունքներ կոչվում են Վ. Համբարձումյանի անունով: Նա մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները, հայտնագործել աստղակույտերի աստիճանական քայքայման երևույթը և առաջադրել աստղակույտերի տարիքի որոշման սկզբունք, ստեղծել է միջաստղային նյութի բաշխման ու ելևէջումների, պղտոր միջավայրում լույսի ցրման, աստղերի գերխիտ գոյաձևերի տեսությունները, հայտնագործել է

գալակտիկաների կորիզների ակտիվությունը, աստղակույտերի աստիճանական քայքայումը, աստղասփյուռներ կոչվող աստղային համակարգերը, առաջադրել է նախաաստղերի վարկածը, ոչ զրոյական զանգվածով տարրական մասնիկներ առաջանալու գաղափարը, ճշտել է Մեծ Կաթինի տարիքը (100 մլրդ տարի), հերքել է գալակտիկաների բախման տեսությունը, հիմնել է աստղերի և գալակտիկաների տեսափոխման (էվոլյուցիայի) «Բյուրականյան ուղղությունը», հեղինակն է տիեզերածնության սկզբունքորեն նոր հայեցակարգի, տեսական աստղաֆիզիկայի առաջին դասագրքի և այլն: Ստեղծել է գիտական նոր դպրոցներ:

Նրա մշակած շատ գաղափարներ դուրս են եկել աստղաֆիզիկայի շրջանակներից՝ ստանալով ընդհանուր մեթոդաբանական նշանակություն և խթանելով գիտության այլ բնագավառների զարգացումը:

1948–1950–ին եղել է Միջազգային աստղագիտական միության փոխնախագահ, 1961–1964–ին՝ նախագահ, 1968–1972–ին՝ գիտական ընկերությունների միջազգային խորհրդի նախագահ:

1965–ին հիմնադրել է «Աստղաֆիզիկա» հանդեսը և մինչև 1986–ը եղել նրա գլխավոր խմբագիրը: 1965–ից եղել է նաև «Հայկական հանրագիտարանի» առաջին գլխավոր խմբագիրը և խմբագրական խորհրդի նախագահը:

Արժանացել է պետական և այլ մրցանակների, շքանշանների, մեդալների: 1994–ին նրան շնորհվել է ՀՀ Ազգային հերոսի կոչում: Ընտրվել է 24 երկրների գիտությունների ակադեմիաների և 15 միջազգային գիտական ընկերությունների պատվավոր անդամ, բազմաթիվ համալսարանների պատվավոր դոկտոր:

Վախճանվել է 1996 թ. օգոստոսի 12–ին Բյուրականում: Թաղված է տեղի աստղադիտարանի տարածքում:

Նրա անվամբ են կոչվում թիվ 1905 փոքր մոլորակը, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանը, ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնը, «Գիտելիք» ընկերությունը, Երևանի թիվ 12 հանրակրթական դպրոցը, փողոց Երևանում և այլն:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Վիկտոր Համբարձումյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Վիկտոր Համբարձումյան» գրվածքում գտի՛ր նախադասությունների ենթականերն ու ստորոգյալները և որոշի՛ր, թե դրանք ինչպես են համաձայնել:

ԴԱՍ 14

ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Երկրորդական անդամ (լրացում) ունեցող նախադասությունը կոչվում է ընդարձակ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Երկրորդական են նախադասության այն անդամները, որոնք լրացնում են գլխավոր անդամներին կամ էլ միմյանց:

Օրինակ. *Պատգամավորների մեծ մասը հերթական քառօրյայի նիստերին ներկա չէր:*

Եթե երկրորդական անդամը լրացնում է գլխավոր անդամներից որևէ մեկին, կոչվում է **լրացում**, եթե լրացնում է երկրորդական անդամ(ներ)ի, կոչվում է **լրացման լրացում**:

Նախադասության այն անդամը, որին լրացնում է երկրորդական անդամը, կոչվում է լրացյալ:

Երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի՝ կախված այն բանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված դրանց լրացյալը՝ գոյականո՞վ, թե՞ բայով: Ըստ այդմ՝ լինում են՝

- գոյականական անդամի լրացումներ. ***Այգեգործ*** *(<)* ***Սմբատի*** *(<) տղաները* ***համալսարանի*** *(<) ուսանողներ են: Մենք* ***խոսելու*** *ոչինչ չունեինք:*
- բայական անդամի լրացումներ. ***Ձկնորսության*** *(<) գնացածները* ***երեկոյան*** *(<) վերադարձան (>)* ***ձեռնունայն****:*

Սովորաբար բայական անդամի լրացումների անուններով են կոչվում նաև ածականով, թվականով և մակբայով արտահայտված անդամների լրացումները. ***Բավականին*** *(>) կոկիկ հագնված* ***մոտավորապես*** *(>) քսան երիտասարդներ* ***շատ*** *(>) արագ դուրս եկան հանրախանութից:*

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Սրանք գոյականով, ինչպես նաև գոյականին հարաբերակից դերանունով, գոյականաբար գործածված այլ բառով արտահայտված անդամի լրացումներն են:

Ցույց են տալիս լրացյալի՝

• որպիսությունը. *Սպասվում է **ցուրտ** եղանակ:*

• պատկանելությունը. *Սա **մայրիկիս** պայուսակն է:*

• ով կամ ինչ լինելը. *Զանգել էր Անին՝ **ընկերուհիս**:*

Ըստ այդմ՝ գոյականական անդամի լրացումները լինում են երեք տեսակի՝ **որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ**:

Վարժություններ

1. Ընդգծեք թավ գրված այն բառերը, որոնք գոյականական անդամի լրացումներ են:

1) **Երկու** միտք **ինձ** ոգևորում էր:
2) — Էն **մեր** Բողարի ձայնն է, — ասաց **որդիս**:
3) **Ջրի մեջ** արտացոլվում էին **ծառերի** սև բները:
4) **Մի քիչ** էլ իջանք **մեղմաթեք** սարալանջով:
5) Այգեպանն **ինձ** տարավ **իրենց** տունը:

2. Ընդգծեք թավ գրված այն բառերը, որոնք բայական անդամի լրացումներ են:

1) Ճամփա ընկնելիս արևը **բավական** բարձրացել էր, ցողի կաթիլներն **արդեն** գոլորշացել էին:
2) **Ձմռան** գիշերից մի քիչ **դեռ** կար:
3) Ես **նորից** փաթաթվեցի **վերմակի մեջ**:
4) **Ոտքերս** կախեցի **տաք** մոխրի վրա:
5) Քնի ու երազի **սահմանում** օրորվում էր գիշերվա **անիրական** աշխարհը:

3. Ընդգծեք թավ գրված այն բառերը, որոնք լրացնում են ածականին, թվականին կամ մակբային:

1) **Բավական** ուշ աչքս կիսաբաց արեցի և նայեցի **երդիկին**:
2) **Չորրորդ** օրը **սովորականից** շուտ եկա դպրոց:
3) Նոր **շորերի մեջ** նա երևաց **ավելի** բարձրահասակ, մեջքը բարակ:
4) **Երբեք** նա ինձ **այդքան** մոտ չէր կանգնել:
5) **Գյուղի** հրապարակում հավաքվել էր **գրեթե** հազար մարդ:

ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏ

Արաքսի ամենամեծ վտակը ձախ կողմից նրա մեջ թափվող Ախուրյանն է: Երկարությամբ (186 կմ) Հայաստանի Հանրապետության երկրորդ գետն է (Արաքսից հետո): Սկիզբ է առնում Արփի լճից (այժմ՝ Արփի ջրամբար)՝ 2023 մ բարձրությունից: Հոսում է հիմնականում դեպի հարավ և Բագարան գյուղի մոտ՝ 953 մ բարձրության վրա, խառնվում Արաքսին: Միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է Հայաստանի և Թուրքիայի միջև:

Ջրառատությամբ Հայաստանի Հանրապետության գետերից չորրորդն է (Արաքսից, Դեբեդից և Մեծամորից հետո): Հատկապես միջին և ստորին հոսանքներում անցնում է խոր ձորերով ու կիրճերով՝ բաժանելով Շիրակի դաշտը Կարսի սարահարթից:

Ախուրյանի ավազանը 9700 քառ. կմ է: Ընդգրկում է Աշոցքի գոգավորությունը, Կարսի սարահարթը, Շիրակի դաշտը, Զլդբը լճի (Հյուսիսային ծովակ) գոգավորությունը:

Նրա վրա կառուցված է համանուն ջրամբարը (525 մլն խ. մ):

Ախուրյան անունը ծագում է Կարսից արևմուտք՝ Սարիղամիշի մերձակայքում եղած բիայնական Ախուրիանի բնակավայրից, որ հիշատակված է Արգիշտի 1–ի Ք. ա. 786 թ. սեպագիր մի արձանագրության մեջ (հայտնաբերվել է Սարիղամիշի մոտ):

Նրա ափերին կառուցվել են Անի, Երազգավորս (Շիրակավան), Երվանդաշատ, Բագարան մայրաքաղաքները, Մարմաշենի (10–րդ դ.), Հոռոմոսի (10–րդ դ.), Խծկոնքի (7–10–րդ դդ.) վանքերը, Դպրեվանքը (7–րդ դ.), Կարմիր վանքը (7–րդ դ.), Երերույքի (4–5–րդ դդ.), Մրենի (7– րդ դ.) տաճարները, Գուսանագյուղի (11–րդ դ.), Հայկաձորի (985 թ.) եկեղեցիները, Մաղասաբերդը, Վահրամաբերդը, Արքայաբլուրի ամրոցը: Ախուրյանի ափին է ՀՀ երկրորդ քաղաքը՝ Գյումրին:

Ախուրյանի կամուրջներից պահպանվել են երկուսի մնացորդները Անիի և Ներքին Ջրաբերի գյուղի մոտ:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Ախուրյան գետի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Ախուրյան գետ» գրվածքում գտի՛ր լրացումներ և որոշի՛ր դրանց տեսակը (գոյականական կամ բայական անդամի):

ԴԱՍ 15

ՈՐՈՇԻՉ

Սա գոյականական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս լրացյալի որպիսին, ինչպիսին լինելը կամ քանակը, թվային կարգը:

Պատասխանում է **ինչպիսի՞, քանի՞, որքա՞ն, ո՞ր** կամ **ո՞րերորդ** հարցին:

Արտահայտվում է ածականով, թվականով, դերանունով, մակբայով, դերբայով, գոյականով և այլն:

Որոշիչի լրացյալը (գերադաս անդամը) կոչվում է **որոշյալ**:

Որոշիչը որոշյալին սովորաբար կապակցվում է **առդրությամբ**: Միայն գոյականով (և նրան հարաբերակից դերանունով) արտահայտված որոշիչն է, որ որոշյալին կապակցվում է **խնդրառությամբ**:

Որոշյալը երբեմն զեղչվում է, իսկ նրա վերջավորությունները փոխանվանաբար իր վրա է վերցնում որոշիչը. *Կարմիր վարդերը դրեցի դեղին ծաղկամանում, իսկ **սպիտակները*** (= սպիտակ վարդերը)՝ ***կանաչում*** (= կանաչ ծաղկամանում): (Փոխանունության մասին տես «Հայոց լեզու 6» գրքում՝ էջ 16):

ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հետևյալ դեպքերում.

- գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի. ***Ուսուցիչներ*** *Հակոբյանը, Սարյանն ու Սարգսյանը պարգևատրվեցին: Դեմ քվեարկողները* ***պատգամավորներ*** *Արոյանն ու Ադոյանն էին:*
- **բոլոր, ինչ–ինչ, որոշ** դերանուններով, **բազմաթիվ, խառնիխուռն, մեծամեծ, մանր–մունր, հին–հին, վատ–վատ** և այլ ածականներով արտահայտված որոշիչները որոշյալից պահանջում են միայն հոգնակի թիվ. ***Բոլոր*** *մարդիկ էլ ուզում են երջանիկ լինել:* ***Ինչ–ինչ*** *հանգամանքներ մեզ խանգարեցին:* ***Որոշ*** *դեպքերում դու վրիպել ես:* ***Մանր–***

մունր *բաներով ինձ մի՛ զբաղեցրու:* ***Բազմաթիվ*** *հյուրեր էին եկել նաև արտասահմանից:*

- **ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, համայն, ամենայն, ամբողջ, ողջ, ոմն, մի, որևէ, որևիցե, ոչ մի, այս ու այն** դերանուն որոշիչները որոշյալից պահանջում են միայն եզակի թիվ. ***Ամեն*** *մարդ ունի իր ճակատագիրը:* ***Ոմն*** *Թորոս քեզ էր հարցնում:* ***Որևէ*** *քաղաքական գործիչ չարձագանքեց մեր կոչին:* ***Ոչ մի*** *հանգամանք չի մնա չբացատրված:* ***Այս ու այն*** *սարալանջից լսվում էր հորովելի ձայնը:* ***Ամբողջ*** *ճաշը թափվեց:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ դերանուն որոշիչը երբեմն լինում է նաև հոգնակի որոշյալի հետ. *Ամբողջ* ***օրերով*** *միայն քո մասին էի մտածում:*

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս. *Սիրում եմ մեր երկինքը* ***մուգ****, ջրերը* ***ջինջ****, լիճը* ***լուսե****...*

Երբ հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա իր որոշյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության այլ անդամներից՝ ստորակետով. *Այդ հսկա քաղաքը՝* ***մարդաշատ*** *և* ***աղմկոտ****, ապրելու տեղ չէ: Տան դիմաց այգին էր՝* ***ամեն տեսակի պտղատու ծառերով****:*

Հետադաս որոշիչը և նրա որոշյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով. *Այս թղթի վրա ծաղիկներ* ***կնկարես****՝ կարմիր, դեղին, կապույտ և այլ գույների:*

Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է. **գոյական որոշիչ + դերբայ որոշիչ + ածականական դերանուն որոշիչ + հարաբերական ածական որոշիչ + թվական (կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ + որակական ածական որոշիչ** + որոշյալ:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

- հետադաս բազմակի որոշիչի դեպքում. *Դա մի փոքրամարմին կին էր՝* ***փարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և շատախոս****:* Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:
- այն դեպքում, երբ առկա է որոշիչ–որոշյալի կայուն կապակցություն՝ եզրույթի (տերմինի) արժեքով (*ելից մատյան, մարած փոխաբերություն, խոսքի մաս, սեղանի թենիս* և

այլն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով. *Վերլուծենք **մի քանի հետաքրքիր մարած** փոխաբերություն: **Այս բոլոր սպասարկու խոսքի** մասերն արդեն ուսումնասիրել ենք:*

- այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին. *Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բազմակի որոշիչների հետ չպետք է շփոթել այն դեպքը, երբ որոշիչն իր հերթին ունի իր լրացումը (վերջինս էլ՝ գուցե իր լրացումը և այլն), որը չի կապվում որոշյալի հետ. *Այս ներկն ունի **շատ հաճելի կարմիր** գույն:*

Վարժություններ

1. Ընդգծե՛ք որոշիչները:

1) Ամեն տեղ լուռ է, միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը:
2) Պարկը պանրով են լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց ու այծի պանիր:
3) Թաղիքե գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնություններ չէր որոնում:
4) Կինը կռացավ ու փչեց մխացող ածուխներին:
5) Նրա մանկությունը անցել է այդ քարափների վրա:

2. Ընդգծե՛ք հետադաս որոշիչները:

1) Նա ինքն է քարոզում սեր դեպի աշխատանքը:
2) Շուտով կլռի աղմուկը դաժան, Ու սիրտս կզգա քայլերդ փափուկ....
3) Ցրտահա՜ր, հողմավա՜ր Դողացին մեղմաբար Տերևները դեղին, Պատեցին իմ ուղին...
4) Վեց շուն ուներ՝ մեկը մյուսից կատաղի:
5) Կնստեմ անվերջ, կնստեմ մենակ. Դու կփարվես ինձ թևերով ճկուն....

3. Գտե՛ք շարադասության սխալները և ուղղե՛ք:

1) Երեկ սկսվեց մայիսին կայանալիք վաղաժամկետ ԱԺ պատգամավորների ընտրություններում թեկնածուների առաջադրման փուլը:

2) Մի քանի նոր լրագրային հրապարակումներ խիստ անհանգստացրել են իշխանություններին:
3) Ո՛չ, պարոնա՛յք, մեր երկիրը չպետք է գնա տնտեսական զարգացման այդ փակուղու հանգեցնող ճանապարհով:
4) Մեկնարկային նախապես հայտարարված գինը աճուրդի մասնակիցներին անակնկալի բերեց:
5) Հարավային Կովկասում բարդ աշխարհաքաղաքական գործընթացներ են սկսվել:
6) Մեծ Հայքում մտցվեց միասնական տոմար, որը նպատակ ուներ համաժամանակություն հաղորդելու հայոց տարասեռ ընկերային համակեցությանը:
7) Արքայական իշխանությունը հավասարակշռություն էր ապահովում այս երկու ներհակության ձգտող ուժերի միջև:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ԾԻՐԱՆԱՓՈՂ

Կոչվում է նաև դուդուկ: Հայկական փողային գործիք է, որը տարածված է նաև Մերձավոր Արևելքում:

Հայերը ծիրանափող նվագում են անհիշելի ժամանակներից: Դրա պատրաստման և օգտագործման մշակույթն ամենից համակողմանի զարգացած է Հայաստանում: Դուդուկի հայկական ազգային դպրոցն իր արհեստավարժությամբ բավական բարձր է դուդուկն օգտագործող այլ ազգերի մակարդակից:

Ըստ երաժշտագետ Ջոնաթան Մաք-Քոլումի՝ «դուդուկը հայկականության խորհրդանիշն է: Դուդուկի գլխավոր առանձնահատկությունը լսողին հայերենի յուրահատկությունների փոխանցումն է»:

Նվագարանը բաղկացած է իրանից և կրկնակի լեզվակավոր պիպիչից: Իրանը գլանաձև բաց փող է, որը Հայաստանում սովորաբար պատրաստվում է 50–60 տարեկան ծիրանենու 3–7 տարի չորացրած փայտից: Փողի երկարությունը լինում է 26, 33 կամ 40 սմ: Ըստ այդմ կա դուդուկի 3 տարատեսակ՝ մեծ, միջին, փոքր: Իրանի վերևի կողմում արվում է յոթ կամ ութ անցք, հակառակ կողմում բութ մատի համար՝ մեկ կամ երկու: Իրանի գլխիկի ուռուցիկ մասում ամրացվում է 9–14 սմ երկարությամբ եղեգնյա

պիպիչը (ձայնարտադրիչը): Պիպիչի ծայրին հագցվում է ծվանը:

Դուդուկի երաժշտության առանձնահատկությունը նրա քնարական հնչողությունն է: Ունի ջերմ և նուրբ ձայն, որն առաջանում է ներս մղվող օդի ազդեցությամբ փայտյա թիթեղների տատանումներից: Դուդուկն իր թավշյա ձայներանգով ամենից մոտն է մարդկային կոկորդի ձայնին՝ համեմատած այլ նվագարանների հետ:

Սովորաբար երկու դուդուկահարներ միասին են հանդես գալիս: Մեկը մենակատարն է, իսկ մյուսը՝ ձայնառուն:

Ձայնառությունը (դամը) յուրատեսակ նվագակցություն է արևելյան երաժշտության մեջ: Ձայնառուն, կիրառելով անդադար նվագելու հատուկ եղանակ, մենակատար դուդուկահարի կամ երգչի համար ստեղծում է ձայնային յուրահատուկ խորք:

Դուդուկի նկատմամբ հետաքրքրությունն արևմուտքում գնալով աճում է: Նրա նվագն օգտագործվել է հոլիվուդյան, ինչպես նաև այլ հանրահայտ մոտ 60 ֆիլմերում:

2005 թ. հայկական դուդուկի նվագը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ–ի համաշխարհային ոչ նյութական մշակութային ժառանգության գլուխգործոց:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ ծիրանափողի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Ծիրանափող» գրվածքում գտի՛ր որոշիչներ և որոշի՛ր, թե դրանք ինչ խոսքի մասերով են արտահայտված:

ԴԱՍ 16

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Սա գոյականական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս լրացյալի՝

- **պատկանելությունը՝** *զինվորի հրացանը, արջի թաթը, կնոջ հմայքը,*
- **վերաբերությունը՝** *իմ պարտականությունը, հայրենիքի սերը,*
- **սերումը, ծագումը՝** *Այգեկցու առակները, արևի շողերը, հացի կտորը:*

Պատասխանում է **ո՞ւմ** կամ **ինչի՞** հարցին:

Հատկացուցիչն արտահայտվում է՝

- գոյականի, գոյական դերանվան կամ գոյականաբար գործածված որևէ բառի սեռական–տրական հոլովի անորոշ առումով. ***Շենքի*** *ճակատը զարդարված է գունավոր պատառներով: Սա* ***ո՞ւմ*** *գիրքն է:* ***Ոչ մեկի*** *պատասխանն ինձ չգոհացրեց: Բոլոր* ***ելույթ ունեցողների*** *խոսքում հուզմունք կար:* ***Տասնհինգի*** *դիմումն ընդունվեց,* ***մյուսների*** *խնդրանքը մերժվեց: Գնանք նայենք համալսարան* ***ընդունվածների*** *ցուցակը:*
- անձնական դերանվան սեռական հոլովով. ***Քո*** *խոսքումը չմոռանաս: Օգտվի՛ր* ***իմ*** *գրքից:* ***Նրա*** *ոգևորությունն անսպառ է:*

Հատկացուցիչի լրացյալը կոչվում է **հատկացյալ**:

Հատկացուցիչը հատկացյալին կապակցվում է **խնդրառությամբ**:

Հատկացյալը երբեմն զեղչվում է, իսկ նրա վերջավորությունները փոխանվանաբար իր վրա է վերցնում հատկացուցիչը. *Արամի ասածը ճիշտ էր,* ***Գոռինը*** (= Գոռի ասածը)՝ *սխալ: Իմ ելույթից բոլորը գոհ էին,* ***քոնից*** (= քո ելույթից)՝ *նույնպես:* (Փոխանունության մասին տես սույն մատենաշարի «Ձևաբանություն» գրքում՝ էջ 62):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանվան սեռական հոլովով արտահայտված հատկացուցիչը իր հերթին կարող է փոխարինվել ստացական հոդով. *Խոսքումդ չմոռանաս: Օգտվի՛ր գրքիցս: Քիթներդ մի՛ կախեք:*

Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս. *Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը* ***մեր****...*

Հատկացուցիչը կարող է պարտադրված շրջուն շարադասություն ունենալ, եթե ունի որոշիչ ստորադաս նախադասություն՝ առանց հարաբերյալի. *Ազնոն դուստրն էր իմ վաղեմի* ***ծանոթի****, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին:*

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հատկացուցիչը և նրա հատկացյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով. *Մեր մարզիկները շատ մեծ հնարավորություն* ***ունեն*** *այս մրցամարտում հաղթելու:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հատկացուցիչը չպետք է շփոթել նույն արտահայտությամբ նպատակի պարագայի *(Հայրս, ճիպոտը ձեռքին, եկավ՝ ինձ* ***պատժելու****)* **և հանգման խնդրի հետ** *(Ես համաձայն եմ առանց ընդմիջման* ***աշխատելու****):* **Տարբերելու համար պետք է նկատի ունենալ, որ նպատակի պարագան լրացնում է բային, և նրան կարելի է ավելացնել համար կապը կամ նպատակով կապական բառը** *(պատժելու համար)*, **հանգման խնդիրը լրացնում է ածականով արտահայտված ստորոգելիին և կարող է որոշիչ հոդ ստանալ** *(աշխատելուն)*, **մինչդեռ հատկացուցիչը դրանցից ոչ մեկը չի կարող ստանալ և կարող է տեղափոխվել ու տեղ գրավել հատկացյալից առաջ, որը գոյական է կամ գոյականաբար առնված այլ բառ** *(Ես* ***կարիք*** *չունեմ նրան* ***հանդիպելու****: > Ես նրան* ***հանդիպելու կարիք*** *չունեմ):*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հատկացուցիչը *(Ժամանակ չունեմ* ***մտածելու****: Կարիք չկա* ***հիշեցնելու****)* **երբեմն սխալմամբ դրվում է ուղղական հոլովով.** *Ժամանակ չունեմ* ***մտածել****: Կարիք չկա* ***հիշեցնել****:* Ճիշտ ձևը որոշելու համար անհրաժեշտ է հետադաս հատկացուցիչը կամ դարձնել նախադաս *(****Հիշեցնելու*** *կարիք չկա)*, կամ փոխարինել գոյականով *(Կարիք չկա հիշեցման).* երկու դեպքում էլ ուղղականով ձևը բացառվում է: Կարելի է նաև հարց տալ՝ ***ինչի՞*** *կարիք չկա. հիշեցնելու:*

Եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային հնարավոր շփոթը կանխելու համար հատկացուցիչի վրա բութ է դրվում. ***Կարինեի՝*** *սուր քթով կոշիկը մաշվել է:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի վրա բութ դնել իբրև զուգաձևություն. ***Իմ*** *միայն քեզ հայտնի արարքի մասին, ցավոք, արդեն բոլորը գիտեն: //* ***Իմ՝*** *միայն քեզ հայտնի արարքի մասին, ցավոք, արդեն բոլորը գիտեն:*

Երբ միևնույն լրացյալն ունենում է թե՛ որոշիչ(ներ), թե՛ հատկացուցիչ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշիչ(ներ)ին. ***Իմ*** *երկու մտերիմ ընկերների հետ գնացի թատրոն:* ***Կարինեի*** *արծաթե մատանին կորել է:*

Դերանունով արտահայտված հատկացուցիչը շրջուն շարադասությամբ երբեմն կարող է հաջորդել որոշիչին. *Սողում են դանդաղ օրերը անծիր, Կորած է մթնում* ***մոլոր իմ*** *ուղին...*

Վարժություններ

1. Ընդգծե՛ք հատկացուցիչները:

1) Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում:
2) Ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները:
3) Թվում էր, թե ձիու արագավազ ոտքերը չեն դիպչում գետնին:
4) Աղբյուրի մոտ նստած գյուղացիների զրույցը դադարեց:
5) Ցողի շողշողուն կաթիլները նստել էին վարդենու տերևների վրա:

2. Թավ գրվածներից ո՞րն է հետադաս հատկացուցիչ: Ընդգծե՛ք:

1) Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար, Հրա՛շք աղջիկ, ցնորքների՛ դիցուհի...
2) Դու հյուսեցիր պսակը քո հրաշագործ տիեզերքի:
3) Ցուրտ համբույրով համբուրի՛ր, Այրի՛ր բոցով նրա ցուրտ...
4) Նույնն է խանութը դեմի, Նույն ցուցանակը հիմար...
5) Մեղմիվ փռվեց քնքուշ մութ՝ Խորհրդավոր, թափանցիկ, Երեկոնե՛ր իմ կապույտ, Երազնե՛ր իմ փութանցիկ...

3. Ընդգծեք տրոհվող հատկացուցիչները և դրանց հատկացյալները:

1) Ծաղկունյաց լեռների՝ կակաչներով ծածկված լանջին էր մեր հանգստյան տունը:
2) Գիտնականը հիանում էր իր՝ պատից պատ ձգվող պահարանի շքեղակազմ գրքերով:
3) Այդ երեկո իմ փոքր նավակով զբոսնում էի ծովի՝ աղջամուղջից կամաց–կամաց մթնող խաղաղ ջրերում:

4. Կետադրեք նախադասությունները: Ընդգծեք տրոհվող հատկացուցիչները:

1) Ամայի դաշտում լսվում էր միայն ծղրիդի քաղցած մանկան լացի պես համառ ճռինչը:
2) Այդ միապաղաղ ձայնը գրգռում էր նրա առանց այն էլ հոգնածությունից նվաղած ջղերը:
3) Ճշմարիտ իրողությունը խոցում էր նրա տարիների փորձություններից թրծված սիրտը:
4) Նրանց զգեստների նուրբ դերձաններով հյուսված թեզանիքներն ընդելուզված էին զմրուխտյա քարերով:
5) Ընտիր նժույգների արծաթով ու ոսկով զարդանախշված թամբերին նստած էին մի կին ու մի տղամարդ:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ԳԱՌԶՈՒ

Ժան Գառզուն (լրիվ անունը՝ Գառնիկ Զուլումյան) ֆրանսահայ նշանավոր նկարիչ է:

Ծնվել է 1907 թ. հունվարի 1–ին Հալեպում (Սիրիա): 1918–ին ընտանիքի հետ տեղափոխվել է Եգիպտոս: Կրթություն է ստացել Կահիրեի Գալուստյան վարժարանում: 1929–ին ավարտել է Փարիզի ճարտարապետական դպրոցը, միաժամանակ հաճախել է Մոնպառնասի Գրան Շոմիեր ակադեմիան: 1929–ին ֆրանսիացի նկարիչների ցուցահանդեսում նրա «Ալքազարի հին պարտեզները» նկարը արժանացել է մրցանակի: 1929–ից սկսած՝ մասնակցել է Փարիզի հայ արվեստագետների «Անի» միության ցուցահանդեսներին: 1938–ին ստացել է Սուրբ Ֆրանսուա Ասիզեցու անվան մրցանակ: Նույն թվականին բացել է իր առաջին անհատական ցուցահանդեսը: 1930–1940–ականներին նրա գործերը ցուցադրվել են «Գերանկախների», «Անկախների» և «Աշնանային» պատկե-

բասրահներում: Մի քանի տասնյակ անհատական ցուցահանդես է ունեցել աշխարհի հայտնի պատկերասրահներում:

Նրան ամենից ավելի հռչակ բերեցին վենետիկյան բնապատկերների (1953), «Ապոկալիպսիս» (1957) և «Երկրային դրախտ» (1959) շարքերի ցուցահանդեսները:

Հայտնի է նաև որպես որմնանկարիչ, բեմանկարիչ, գրքանկարիչ և գորգանկարիչ:

Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ էր: 1979 թ. դարձել է Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ: Ընծայման արարողության ճառում նա փշրել է մինչ այդ արվեստում հայտնի շատ «ճշմարտություններ»: Օրինակ, ըստ Գառզուի՝ Պիկասոն դիվային ճարպկությամբ օժտված մեկն էր և որպես նկարիչ չի հուզում ու անտարբեր է թողնում դիտողին, նրա «Գեռնիկա»–ն պարոդիա է թվում, նրա նկարչական տեխնիկան շատ աղքատ է:

1986–ի հուլիսին Ֆրանսիայի Վանս քաղաքում բացվել է Գառզուի՝ մշտական գործող թանգարանը: 1991–ի սեպտեմբերին Մասոնք քաղաքում հիմնադրվել է «Գառզուի մատուռ» թանգարանը: Մատուռը 1830–ին կառուցված դասական ոճի մի կառույց է: Նման մատուռ–թանգարաններ Ֆրանսիայում ևս երեքն են՝ Մատիսի, Շագալի և Ժակ Կոկտոյի համար:

1966–ից ի վեր մի քանի անգամ լինելով մայր հայրենիքում՝ Հայաստանի ազգային պատկերասրահին և Ժամանակակից արվեստի թանգարանին է նվիրել 400, իսկ ի նպաստ Սպիտակի երկրաշարժից տուժած արվեստագետների՝ 50 գծանկարչական գործեր:

Վախճանվել է 2000 թ. օգոստոսի 12–ին Փարիզում:

Հետևելով արվեստի նորագույն միտումներին, ստեղծելով ինքնատիպ ոճի գեղանկարներ՝ դարձել է եվրոպական մշակույթի նշանակալից երևույթներից մեկը:

Զնայած Գառզուի արվեստում գերիշխում է ուրվագիծը, գույնը ևս նրա համար կարևոր արտահայտչամիջոց է: Նրա արվեստի մտածողությունը խորհրդապաշտական է: Նրան կոչել են բանաստեղծ–նկարիչների իշխան, տեսիլքների արքա:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Գառզուի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Գառզու» գրվածքում գտի՛ր հատկացուցիչներ և որոշի՛ր, թե դրանք ինչ խոսքի մասերով են արտահայտված:

ԴԱՍ 17

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Սա գոյականական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը կամ ճշգրտում, մասնավորեցնում է այն:

Պատասխանում է նույն հարցերին, ինչ բացահայտյալը:

Բացահայտիչի երեք հիմնական տարատեսակներն են՝ **բուն, մասնական, մասնավորող պարագայական**:

ԲՈՒՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Այսպես է կոչվում առանց կապի ձևավորված այն բացահայտիչը, որի լրացյալը ենթակա, ստորոգելի, հատկացուցիչ, բուն բացահայտիչ, խնդիր կամ պարագայական խնդիր է: Բացահայտիչը ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը:

Բուն բացահայտիչն արտահայտվում է **գոյականով, անորոշ դերբայով, գոյականաբար գործածված որևէ բառով**:

Նույն արտահայտությունն ունի նաև բացահայտիչի լրացյալը՝ **բացահայտյալը**:

Բուն բացահայտիչն ու բացահայտյալը կապակցվում են համաձայնությամբ: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առումով: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով. ***Ձեզ՝ այլախոհներիդ***, *շատերը հանդուրժել չեն կարողանում:* ***Ես՝*** *երկրի անվտանգության* ***երաշխավորս***, *իրավունք չունեմ չհարգելու այդ երկիրը, նրա արժեքները, նրա ժողովրդին: Փոքր քաղաք է* ***Իջևանը՝*** *Տավուշի մարզի* ***կենտրոնը****:* ***Մարզիկներիդ՝*** *մեր երկրի պատիվը* ***բարձրացնողներիդ***, *ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվում:*

Սակայն բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

- թվով. *Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք* ***երեխաներին՝*** *մեր երկրի* ***ապագային****: Զրկվեցինք մեր*

ամենամեծ ***արժեքից***՝ *մեր նախնիների ժառանգած* ***տարածքներից****: Ահա մեր* ***գերազանցիկները՝ Անին*** *ու* ***Հայկը****:*

- հոլովով. *Հյուրասենյակները կահավորված են թանկարժեք* ***կահկարասիով՝ բազմոցներ, սեղաններ, սպասքապահարան, գրապահարան****: Մեր ընտանիքը բաղկացած է չորս* ***հոգուց՝ ես, մայրս, հայրս ու եղբայրս****, և ապրում է երկսենյականոց բնակարանում: Առաջարկեցի երեք* ***թատերախաղերից՝ «Վենետիկի վաճառականը», «Տիմոն Աթենացի» և «Օթելլո»****, որևէ մեկն ընտրել:*
- դեմքով. ***Ես՝*** *իմ ընտանիքի* ***գլխավորը****, չէի կարող անտարբեր մնալ՝ տեսնելով այդ ամենը:* ***Գերազանցիկներդ՝*** *մեր* ***հույս ու ապավենը****, հանկարծ մեզ խայտառակ չանեք:*
- առումով. *Ադա՛մ, ահա քեզ* ***ընկեր՝*** *գեղեցիկ* ***Լիլիթը****: Դաշտ էր գնացել ամբողջ* ***գյուղը՝ տղամարդ*** *ու* ***կին****,* ***ծեր*** *ու* ***ջահել****,* ***աշխատող*** *ու* ***թոշակառու****: Այցելեցինք Սյունիքի* ***քաղաքները՝ Գորիս, Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան****:*

Բուն բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ սովորաբար լինում է հետադաս: Եթե դրանց տեղերը փոխենք, ապա կփոխվեն նաև պաշտոնները. *Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը > Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը:*

Միայն բազմակի բուն բացահայտիչը կարող է նախադաս լինել այն դեպքում, եթե ենթակա բացահայտյալը նրա ամփոփումն է որոշյալ կամ ժխտական դերանունով, որի հետ էլ թվով համաձայնում է ստորոգյալը. ***Գարունը, արևը, ծաղիկների բույրը, ամպերի պայծառ գույները՝*** *այդ ամենը նրա սիրտը վրդովեց անհանգիստ հույզերով:* ***Ո՛չ ծնողները, ո՛չ կինը, ո՛չ երեխաները, ո՛չ ընկերները՝*** *ոչ ոք նրան չներեց:*

Բացահայտիչը (ցանկացած տեսակի) և բացահայտյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով և այլ անդամներով. *Դա միայն Սոնան* ***կարող էր լինել՝*** *իմ երազների թագուհին:*

Բացահայտիչը (ցանկացած տեսակի) բացահայտյալից, որպես կանոն, անջատվում է բութով. *Արտերում՝* ***կանաչի մեջ****, երևում էին կարմիր–կապույտ ծաղիկներ:*

Եթե բացահայտիչն ու բացահայտյալն ընդմիջված են ինքնին չտրոհվող որևէ այլ միավորով, ապա բութը դրվում է այդ միավորի վրա. *Դպրոցը գյուղի ծայրին* ***էր՝*** *բլրակի վրա:*

Եթե բացահայտիչն ու բացահայտյալն ընդմիջված են ստորակետերով տրոհվող ներդրյալ միավորով կամ ստորակետ–

գծերով տրոհվող հեղինակի խոսքով, ապա բութ չի դրվում. *Հաղթեց Անին, այո՛, **մեր թիմակիցը**: «Մենք պառկեցինք գետակի ափին, — շարունակեց նա, — **խոտի վրա**»:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բուն բացահայտիչից առաջ կարող է լինել բացահայտման վերաբերական (այսինքն, այն է), որն իր վրա է վերցնում բութը՝ բացահայտյալից անջատվելով ստորակետով. *Ջոհասեղանի վրա դրվել է ծիսական սպասքը, **այն է**՝ կրակամանները, պատառաքաղները, դաշտերը, ծածկիչները և այլն: Նա ապրում է Տավուշի մարզկենտրոնում, **այսինքն**՝ Իջևանում:*

Բացահայտիչը նախադասության՝ իրեն հաջորդող անդամներից մեծ մասամբ անջատվում է ստորակետով. *Իսկ դու գիտե՞ս, որ Խաչատուրը՝ **քո քեռին**, մեզ հարևան է:*

Բացահայտիչից հետո ստորակետ սովորաբար չի դրվում, եթե՝

- այն սեռական–տրական հոլովի անորոշ առումով (անձնական դերանվան սեռական հոլովով) է. *Դա իմ քրոջ՝ **Հերմինեի** գիրքն է: Սա իմ հարևանի՝ **նրա** եղբայրն է, ում տանը մենք շատ անգամ հաց ենք կերել:*
- նրան հաջորդում է օժանդակ բայ կամ հանգույց. *Դա Մթնաձորի անտառների ամենագեղեցիկ թռչունը՝ **միրհավն** էր: Այս ժամին զանգահարողը հաստատ փոքր քույրս՝ **Սոնան** կլինի:*
- նրան հաջորդում է սաստկական վերաբերական (**էլ, իսկ, անգամ, նույնիսկ** և այլն). *Նազելին՝ իմ **ընկերուհին** էլ կուրախանա քո հաջողության համար:*
- նրան հաջորդում է դերբայ. *Ոտքի էին ելել նաև կենտրոնում՝ **սեղանի շուրջը** բոլորած մարդիկ: Քաղաքից դուրս՝ **անտառ** գնալիս հանդիպեցի մանկության ընկերոջս:*
- նրան հաջորդում է կապ (որն ընդհանուր է թե՛ իր, թե՛ բացահայտյալի համար). *Իմ եղբորից՝ **Հայկից** բացի՝ ոչ ոք չգիտի այդ մասին: Ես քրոջս՝ **Սոնայի** հետ կգամ:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Եթե բացահայտիչին հաջորդող կապը միայն նրանն է, ապա ստորակետ է դրվում կապից հետո. *Սառնարանում՝ **ափսեի մեջ**, մի կտոր պանիր կա: Նստած էի օդանավի մեջ՝ **պատուհանի մոտ**, և դուրս էի նայում:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Սեռական–տրական հոլովով բացահայտիչից հետո ստորակետ դրվում է, եթե իմաստային շփոթի վտանգ կա. *Նա գիտեր միրհավի՝ մթին անտառների ոսկեփետուր **թռչունի**, ծմակներում բույն դնելը: Ընկերոջս՝ **Հմայակի**, փղայի հարսանիքին եմ հրավիրված:*

Վարժություններ

1. Ընդգծեք բացահայտիչները: Նշեք, թե դրանք ինչով են արտահայտված:

1) Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում, Իրիկնաժամին նստում եմ մենակ Կանաչ առվի մոտ՝ ուռիների տակ...
2) Մի օր էլ՝ բլրակը բարձրանալիս, ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա:
3) Հենց հաջորդ կիրակի՝ առավոտ կանուխ, երբ երդիկներից դեռ նոր էր բարձրանում ծուխը, ես և որսորդ Անտոնը բռնեցինք անտառի ճանապարհը:
4) Մենք՝ քո խոնարհ ծառաներս, յոթ եղբայր ենք:
5) Գորիսում առավոտն էլ այդպես էր բացվում՝ մսագործների խանութների հետ միաժամանակ:
6) Ինքնաթիռի անձնակազմը շնորհավորում է ձեզ ու տալիս այս վկայագիրը՝ որպես հիշատակ:

2. Ընդգծեք բուն բացահայտիչները:

1) Սիրահարներին հատուկ է մի առանձին քայլվածք՝ մի տեսակ հոգևոր երթ:
2) Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես:
3) Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրերում՝ ո՛չ գիր, ո՛չ խաչ:
4) Այդ ժխորից՝ մարդկանց և անասունների կանչերից, ազատ էր մեր թաղամասը:
5) Ահա երևաց ինքը՝ քաղաքի հայրը՝ քաղաքագլուխ Մաթևոսը:

ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ

ՍԱՐԱԿՆ ՀՐԱԲՈՒԽ

Առավել հայտնի է Նեմրութ անունով: Բարձրությունը 2935 մ է: Վանա լճի հյուսիսարևմտյան ափին է՝ Դատվան քաղաքից 10 կմ հյուսիս: Հիմքի շրջագիծը մոտ 50 կմ է: Գործող հրաբուխ է, սակայն այժմ լավա չի արտավիժում: Խառնարանից ու լանջերից դուրս են գալիս տաք գազեր, ջրեր ու գոլորշիներ: Հայկական լեռնաշխարհի տարածքում միակ հրաբուխն է, որ ժայթքել է

պատմական ժամանակաշրջանում, վերջին անգամ՝ 1692–ին: 8 կմ տրամագծով խառնարանը մեծությամբ առաջինն է Հայկական լեռնաշխարհում և Թուրքիայում, չորրորդն է Եվրոպայում և 16–րդը՝ աշխարհում. ծովից բարձր է 2500 մ: Խառնարանի պատերը կախված, գառիթափ լանջերով են՝ մինչև 300 մ բարձրությամբ: Խառնարանում կան մակաբույծ կոներ:

Նեմրութ հրաբուխը երբեմն շփոթում են Նեմրութ լեռան հետ, որը նույնպես Արևմտյան Հայաստանում (այժմ՝ Թուրքիայում) է և լայնորեն հայտնի է հելլենիստական ժամանակաշրջանի հայկական քարե արձաններով:

Գոյացել է վաղ չորրորդական դարաշրջանում՝ մոտ 1 միլիոն տարի առաջ: Մոտ 250 հազար տարի առաջ Նեմրութի խոշոր ժայթքման արդյունքում առաջացել է 60–կիլոմետրանոց լավայի հոսք, որն արգելափակել է Վանա գոգավորությունից ջրի հոսքը դեպի Մուշի գոգավորություն, ինչն էլ դարձել է Վանա լճի առաջացման պատճառ: Այդ նույն ժամանակահատվածում հրաբխի գագաթը ներս է ընկել՝ առաջացնելով 7–8 կմ շառավղով խառնարանային իջվածք: Այնուհետև դրա արևմտյան մասում առաջացել է քաղցրահամ Նեմրութ լիճը (մեծությամբ երկրորդ խառնարանային լիճը աշխարհում), որից հետագա ժայթքումների արդյունքում առանձնացել է ոչ շատ մեծ Ըլը լիճը: Նեմրութ լճի մակերեսն այժմ 9 քառ. կմ է:

Հարավից Նեմրութին հպված է Գրգուռ (Գորանի) հանգած հրաբուխը (2400 մ): Նեմրութից արևելք է Սիփան լեռը (4434 մ):

Առաջադրանքներ

1. Համացանցում գտիր հավելյալ տեղեկություններ Նեմրութ հրաբուխի մասին և պատմիր դասընկերներիդ:

2. «Սարակն» գրվածքում գտիր բացահայտիչներ և որոշիր դրանց տեսակը:

ԴԱՍ 18

ՄԱՍՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Սա բացահայտիչի մի տարատեսակ է, որ բացահայտյալին է միանում *որպես* կամ *իբրև* կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը:

Բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում. ***Լուսինեին՝ որպես ուսուցչի***, *բոլոր երեխաները սիրում ու հարգում են:* ***Սուրենը՝ իբրև ուսանող***, *շատ պարտաճանաչ է:*

Բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս, ինչպես նաև հեռացած: Այս դեպքում բութը դրվում է բացահայտիչի վրա. ***Որպես գերազանցիկ՝*** *Հայկը ստանում է բարձր կրթաթոշակ:* ***Աղջկա միամիտ հարցին որպես պատասխան՝*** *դուրսը՝ սառը խավարում, լսվեց անմայր քուռակի վրնջոցը:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Որպես **կամ** ***իբրև*** **կապով ձևավորված անդամը, եթե լրացնում է ստորոգյալին, չի տրոհվում.** *Գնաց մերթ* ***իբրև*** *քուրդ հովիվ, մերթ* ***իբրև*** *քաղցած գայլ: Նա գյուղում ավել անունով հայտնի էր* ***որպես*** *«աղվես խեղդող»:*

ՄԱՍՆԱՎՈՐՈՂ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Սա բացահայտիչի մի տարատեսակ է, որը ոչ թե պարզապես գոյականական, այլ պարագայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝ բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը, երբեմն՝ նաև չափը, ձևը, պատճառը, հիմունքը, նպատակը, պայմանը և այլն:

Ընդ որում՝ բացահայտյալը կարող է արտահայտված լինել պարագայի պաշտոն կատարող՝

- գոյականով, դրան հարաբերակից դերանունով կամ գոյականաբար գործածված այլ բառով. *Մենք աշխատում էինք* ***դաշտում՝*** *գետամերձ հանդամասում:* ***Ընդգծվածներում՝*** *բարդ բառերում, ցո՛ւյց տվեք հոդակապը:*

- հոլովակապային կառույցով. *Նստել էր հնձանի* ***պատի տակ***՝ *ընկուզենու չոր կոճղին:*
- մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով. ***Այսօր***՝ *ժամը վեցին, հանրահավաք է: Մեր տունն այ* ***այնտեղ*** *է՝ դպրոցի կողքին: Քայլենք* ***ձախ***՝ *դեպի զբոսայգի:*

Նույն արտահայտությունը կարող է ունենալ նաև մասնավորող պարագայական բացահայտիչը. *Գնանք գյուղ՝ ձեր* ***տուն****: Մողեսները պառկում են քարերի վրա՝* ***արևի տակ****: Դա տեղի է ունենալու այսօր՝ քիչ* ***հետո****:*

Մասնավորող պարագայական բացահայտիչը և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով. *Ընտրական տեղամասեր կլինեն բոլոր* ***բնակավայրերում***՝ *դպրոցական* ***շենքերում****:*

Բայց կարող են և չհամաձայնել. *Երեխաները նստած էին* ***զբոսայգում***՝ *փայտե* ***նստարաններին****: Եկել էր* ***կեսօրին***՝ *թերևս* ***մինչև ընդմիջումը****:*

Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող է լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի և այլն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ. *Մենք վրան էինք խփել Արայի լեռան* ***ստորոտին***՝ *անտառի* ***բացատում***՝ *կարկաչահոս առվակի* ***ափին****:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Մասնավորող պարագայական բացահայտիչից առաջ կարող է լինել սաստկական կամ բացահայտման վերաբերական (մասնավորապես, հատկապես, ավելի ճիշտ, այն է և այլն), որն իր վրա է վերցնում բութը՝ բացահայտյալից անջատվելով ստորակետով. *Նա եկել է Տավուշի մարզից,* ***մասնավորապես***՝ *Իջևան քաղաքից: Հոդակապ լինում է բաղադրյալ բառերում,* ***հատկապես***՝ *բարդություններում: Կհանդիպենք երեկոյան,* ***ավելի ճիշտ***՝ *ժամը իններին: Այս տարի այդ գումարը կկազմի 870 մլն դրամ,* ***այն է***՝ *նախորդ տարվանից 412 մլն–ով ավելի:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Երբեմն շփոթվում են գոյականով կամ գոյականաբար գործածված բառով արտահայտված պարագային լրացնող մասնավորող պարագայական բացահայտիչը և բուն բացահայտիչը: Պետք է հիշել, որ դրանցից առաջինը բովանդակությամբ ու ծավալով չի համընկնում լրացյալին, այլ մասնավորեցնում է նրան *(Ես ապրում եմ Երևանում՝* ***Աջափնյակ թաղամասում****),* **իսկ երկրորդը համընկնում է, այսինքն՝ լրացյալին կրկնում է այլ բառ(եր)ով** *(Ես ապրում եմ Երևանում՝* ***Հայաստանի մայրաքաղաքում****):*

Վարժություններ

1. **Ընդգծեք մասնավորող պարագայական բացահայտիչ-ները:**

   1) Ո՞ւր էիր երեկ՝ ամբողջ օրը:
   2) Դիմացը՝ փողոցում, էլեկտրական խոշոր լամպն է:
   3) Այդպես մի անգամ էլ՝ շատ տարիներ առաջ, ճռնչաց այգու դուռը:
   4) Հովվական կրակների ձախ կողմը՝ դաշտի վրա, երևում էր մի սև կետ:

2. **Նշեք նախադասության այն անդամները, որոնց միջև համաձայնության սխալ կա:**

   1) Սմբատ Բագրատունուն՝ նշանավոր զորավարին՝ որպես կայսեր դեմ մեղանչած, գցում են կրկեսը, որ գազանները հոշոտեն:
   2) Ուսանողները պատկառում են նրանից՝ որպես լավագույն դասախոսի:
   3) Մենք սիրում ենք նրանց՝ որպես բարեհամբույր և բանիմաց ուսուցիչ:
   4) Իբրև զորական՝ Վարդանին ժողովուրդը սիրում է և գնալու է նրա հետևից:

ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Մայրաքաղաք Տիգրանակերտը Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Նփրկերտ գավառում էր՝ Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին՝ Սասնա լեռների հարավային ստորոտին (այժմ՝ Թուրքիայի Դիարբեքիրի նահանգում): Հիմնադրել է Տիգրան Բ Մեծը մ. թ. ա. 70–ականների սկզբին իր թագադրման վայրում: Այդ վայրը Տիգրանի օրոք՝ մինչև մ.թ.ա. 65 թ. Պոմպեոսի հետ կնքած հաշտությունը, երկրի գրեթե կենտրոնում էր՝ առևտրական ճանապարհների խաչմերուկում, և հարմար էր որպես գահանիստ:

Տիգրանակերտից է սկսվել Մանազկերտով ու Զարեհավանով Արտաշատ տանող Արքունական ճանապարհը: Քաղաքի մոտով էր անցնում նաև պարսից արքա Դարեհ Ա–ի կառուցած Արքայական պողոտան, որ միջազգային մայրուղի էր: Քաղաքը կարճ ժամա-

նակամիջոցում դարձել է հելլենիստական Արևելքի հռչակավոր կենտրոններից: Ենթադրվում է, որ ծաղկուն շրջանում ունեցել է շուրջ 100 հազար բնակիչ:

Ունեցել է 25 մ բարձրությամբ պարիսպներ, անառիկ միջնաբերդ: Տիգրան Թագավորի պալատը, շրջապատված պարտեզներով, լճերով, եղել է միջնաբերդից դուրս: Ըստ հունա–հռոմեական աղբյուրների՝ Տիգրանակերտում մշտական գործող թատրոնի շենքը կառուցվել է մ.թ.ա. 69 թ.: Դրա հետքերը դեռևս նշմարվում են:

Հույն պատմիչ Պլուտարքոսի խոսքերով Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար: Տիգրանը բնակության համար այստեղ էր հրավիրում հայերից լավագույններին:

Շուրջ 5–ամսյա համառ դիմադրությունից հետո՝ մ. թ. ա. 69–ին, հռոմեացի զորավար Լուկուլլոսը գրավել է Տիգրանակերտը:

Տիգրան Բ–ի մահից (մ. թ. ա. 55 թ.) հետո դադարել է մայրաքաղաք լինելուց, թեև շարունակել է պահել ռազմավարական նշանակությունը: Հայ Աշակունիների (1–5–րդ դարեր) օրոք Հարավային Հայաստանի խոշոր քաղաքներից էր և Աղձնիքի կուսակալության կենտրոնը:

Խիստ տուժել է 3–4–րդ դդ. հռոմեա–պարսկական պատերազմների ընթացքում: 350–ականներին քաղաքը գրավել և հիմնովին ավերել է պարսից Շապուհ Բ–ն՝ բնակիչների մեծագույն մասին գերեվարելով Պարսկաստան: 12–րդ դարից սկսած, աստիճանաբար կորցնելով իր նշանակությունը՝ քաղաքը վերածվել է մի անշուք բնակավայրի և ապա մարել: Քաղաքի ավերակները հայտնաբերվել են 1899–ին:

Տիգրանակերտ և Տիգրանավան անվանումներով քաղաքներ են հիմնադրվել նաև Հայաստանի այլ վայրերում (ընդհանուր թվով՝ 7 քաղաք), այդ թվում՝ Արցախում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Տիգրանակերտի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Տիգրանակերտ» գրվածքում գտի՛ր բացահայտիչներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 19

ԲԱՑԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Սրանք բայով (այդ թվում՝ դերբայով) արտահայտված անդամի լրացումներն են:

Ցույց են տալիս լրացյալի նշանակած գործողության կամ եղելության հետ կապված առարկաներ կամ հանգամանքներ: Ըստ այդմ՝ լինում են երկու տեսակի՝ **խնդիրներ** և **պարագաներ**:

ԽՆԴԻՐՆԵՐ

Գործողության հետ կապված առարկա(ներ) ցույց տվող լրացումը կոչվում է խնդիր:

Արտահայտվում է գոյականով, գոյականին հարաբերակից դերանունով, անորոշ դերբայով կամ գոյականաբար գործածված այլ բառով, հոլովակապային կառույցներով:

Լինում է երկու տեսակի՝ **ուղիղ** և **անուղղակի**:

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ

Այսպես է կոչվում ներգործական սեռի բայի այն խնդիրը, որն ուղղակիորեն իր վրա է կրում այդ բայի գործողությունը:

Պատասխանում է **ո՞ւմ** կամ **ի՞նչ(ը)** հարցին:

Արտահայտվում է գոյականով, գոյականին հարաբերակից դերանունով, գոյականաբար գործածված այլ բառով:

Ունի երկու ձևական հատկանիշ.

1. անձի և իրի առումների դեպքում ունենում է տարբեր ձևավորում.
   - անձի առման դեպքում (անձ ցույց տալիս, իբրև անձ ընկալվելիս) ունենում է սեռական–տրական հոլովի ձև. *Ես սիրում եմ* ***մայրիկիս****: Տեսա մեր երկրի* ***նախագահին****: Վերարկուովս ծածկեցի* ***քնածին****:* ***Քեզ*** *ոչ ոք չնկատեց: Երեխան օրորում է իր* ***տիկնիկին***:
   - իրի առման դեպքում (իր ցույց տալիս կամ իբրև իր ընկալվելիս) ունենում է ուղղական հոլովի ձև. *Ամենից շատ*

*սիրում եմ **Թումանյան**: Տեսա Վանա **լիճը**: Կափարիչով ծածկեցի **կաթսան**: Մրրիկը կոտրել է մեր բակի **բարդին**: Այդ պահին նա գերադասեց **լռել**:*

2. կրավորական կառույցում (լրացյալ բայը կրավորական սեռի վերածելիս) դառնում է ենթակա *(Քամին օրորում է **ծառը**: > **Ծառն** օրորվում է քամուց: Զինվորը հսկում էր **գերիներին**: > **Գերիները** հսկվում էին զինվորի կողմից):*

Ունեմ և **ունենալ** բայերը սովորաբար վերցնում են միայն ուղղականաձև ուղիղ խնդիր նույնիսկ անձնանիշ գոյականների դեպքում *(Ունեմ **ծնողներ, ամուսին, երեխաներ, տուն**, շատ **գրքեր**)*, և միայն անձնանիշ դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրն է լինում տրականաձև *(Մայրս **ինձ** ունեցել է քսան տարեկանում: Ես **քեզ** իմ սրտում ունեմ):*

Ուղիղ խնդիրը երբեմն լինում է բացառական հոլովով՝ կոչվելով **մասնական ուղիղ խնդիր.** *Ծորակի **ջրից** չեմ խմում: Հաղորդեցին Կոմիտասի **երգերից**:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս ուղիղ խնդիրը երբեմն շփոթվում է հանգման խնդրի կամ նպատակի պարագայի հետ և դրվում սեռական–տրական հոլովով՝ *տենչում էին հեծը շփվելու, հորդորում է հանդուրժելու, թույլ է տալիս ենթադրելու* **և այլն: Սրանք կեղծ գրական ձևեր են:** Ճիշտ ձևը որոշելու համար անհրաժեշտ է հետադաս **ուղիղ խնդիրը** կամ դարձնել նախադաս *(Հեծը **շփվել** էին տենչում)*, կամ փոխարինել գոյականով *(**Բնություն** էին տենչում)*. երկու դեպքում էլ թեքված ձևը բացառվում է: Կարելի է նաև հարց տալ՝ ***ինչ** էին տենչում. հեծը **շփվել**:* Վերջապես, կարելի է **փոխակերպել կրավորական նախադասության, որում ուղիղ խնդիրը դառնում է ենթակա՝** ***Հանդուրժելը** հորդորվում է:*

Վարժություններ

1. Ընդգծեք խնդիրները:

1) Լսում եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվագը:
2) Նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը:
3) Իմ ծանոթը պատմեց լեռների մարդկանց մասին:
4) Կգա գարունը, քար ու քարափ կանաչով կպատվեն:
5) Ման լվալուց ու լվացքից հոգնել եմ արդեն:

2. Ընդգծեք դերբայի լրացում խնդիրները:

1) Անդրանիկը, գլուխը բարձր պահած, գնում է դեպի կամուրջը:
2) Բահով առուն մաքրելիս Մարգարի աչքով է ընկնում կորցրած սանրը:

3) Իր երամից հետ մնալով՝ թռչունը պատսպարվեց ժայռի ճեղքում:
4) Կինը պահարանից հանեց ծխից սևացած թեյամանը:
5) Լրագրողը մոտեցավ իրենց հոգսերից խոսող գյուղացիներին:

3. Ընդգծեք դերբայով արտահայտված խնդիրները:

1) Երրորդ ձիավորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել:
2) Կառավարությունն այս տարի օգնություն հատկացրեց կարկուտից տուժածներին:
3) Ծխողներից մենք ընդհանրապես խուսափում ենք:
4) Կանայք առևտրից և եփել–թափելուց էին զրուցում:
5) Երգիչը բեմում շրջապատված էր խելահեղ պարողներով:

4. Ընդգծեք դերանվամբ արտահայտված խնդիրները:

1) Այնուհետև բարբարոսները նրանց քշել են արևմուտք:
2) Նոր սերունդն իրեն համարում է նորանկախ երկրի տերը:
3) Բայց դու ումի՞ց ես վախենում, որ չես սկսում:
4) Ես չգիտեմ, թե ինչով հղկեմ այս կարծր քարերը:
5) Նրանք ամբողջ օրը բամբասում են միմյանցից:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ՎԱԶԳԵՆ ՊԱԼՃՅԱՆ

Ազգային, հոգևոր և մշակութային գործիչ, ամենայն հայոց 130–րդ կաթողիկոս Վազգեն Ա (ավազանի անունը՝ Լևոն–Կարապետ) Պալճյանը ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20–ին Բուխարեստում (Ռումինիա): Սովորել է Բուխարեստի Միսաքյան–Քեսիմյան ազգային, ապա՝ Բուխարեստի առևտրական բարձրագույն վարժարաններում: 1936–ին ավարտել է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության բաժանմունքը, 1937–ին՝ գործնական մանկավարժության բաժինը:

Զբաղվել է լրագրությամբ, դասավանդել է Բուխարեստի հայկական դպրոցներում, եղել հայ ռազմագերիներին օգնող կոմիտեի (1942–1944 թթ.) կազմում: 1943–ին Աթենքի Ս. Կարապետ եկեղեցում ձեռնադրվել է կուսակրոն քահանա, ընտրվել է Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ (1947–1955 թթ.):

1955–ին ընտրվելով Ամենայն հայոց կաթողիկոս՝ ծավալել է եկեղեցաշինական–վերականգնողական մեծ աշխատանք:

Նրա օրոք նորոգվել են Էջմիածնի Մայր տաճարը, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Աստվածածին եկեղեցիները, Խոր վիրապի վանքը, Գեղարդավանքը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց, Երևանի Ս. Սարգիս, Ս. Զորավոր, Ս. Հովհաննես և բազմաթիվ այլ շինություններ: Մայր տաճարի շրջակայքում կառուցվել են Նահատակաց հուշարձանը, Խրիմյան Հայրիկին նվիրված աղբյուր–կոթողը, Գալուստ Գյուլբենկյան վանատունը, Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը, արդիականացվել է Մայր աթոռի տպարանը:

Նրա շնորհիվ փրկվել ու Մատենադարանին են հանձնվել բազմաթիվ ձեռագրեր ու արժեքավոր վավերագրեր:

Նրա օրոք 1962–ին Հայ եկեղեցին դարձել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, ապա՝ Եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ:

Հեղինակ է իմաստասիրական և հրապարակախոսական երկերի, ուղեգրություններ: Մեծ ջանքեր է ներդրել Սփյուռքի հայապահպանության գործում:

1989–ին վերահաստատել է Հայ եկեղեցու Արցախի թեմը, ձեռնարկել Արցախի մի շարք եկեղեցիների ու վանքերի վերաբացումն ու վերանորոգումը: Նրա ջանքերով վերստին սկսել են գործել Սյունիքի և Գուգարքի թեմերը: 1991–ին օրհնել է Հայաստանի նորոգ անկախությունը:

Վախճանվել է 1994 թ. օգոստոսի 18–ին Երևանում:

Պարգևատրվել է Խաղաղության համաշխարհային խորհրդի Ժոլիո Կյուրիի անվան (1962 թ.) և Խաղաղության պաշտպանության կոմիտեի (1968 թ.) ոսկե մեդալներով և այլ շքանշաններով: ՀՀ–ում առաջինն է արժանացել Ազգային հերոսի կոչմանը (1994 թ.): Վազգեն Ա–ի անունով կոչվել են Սևանի հոգևոր դպրանոցը և դպրոց՝ Վանաձորում, հուշարձաններ են կանգնեցվել Վազգենյան դպրանոցի բակում և Մայր աթոռ Սբ Էջմիածնում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Վազգեն Պալճյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Վազգեն Պարճյան» գրվածքում գտի՛ր ուղիղ խնդիրներ և որոշի՛ր, թե դրանք ինչ խոսքի մասերով են արտահայտված:

ԴԱՍ 20

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Այսպես են կոչվում գործողության հետ անուղղակիորեն կապված առարկա(ներ) ցույց տվող խնդիրները:

Լինում են մի քանի տեսակի՝ **ներգործող, հանգման, անջատման, միջոցի, վերաբերության** և այլն:

ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴԻՐ

Այսպես է կոչվում կրավորական սեռի բայի այն խնդիրը, որի կատարած գործողությունն իր վրա է կրում ենթական:

Պատասխանում է **ումից, ինչից, ումով, ինչով, ում կողմից** կամ **ում ձեռքով** հարցին:

Արտահայտվում է՝

- բացառական հոլովով. *Ամռան թեժ* ***արևից*** *խոտն այրվել էր: Իր բոլոր* ***գործընկերներից*** *հարգված մարդ է նա:*
- երբեմն՝ գործիական հոլովով. *Բելը շրջապատված էր իր* ***զորականներով****: Ավազանը լցվել էր* ***անձրևաջրով****:*
- անձնանիշ բառի դեպքում՝ մեծ մասամբ սեռական–տրական հոլովով և **կողմից** կամ **ձեռքով** կապով. *Այս տունը հիմնադրվել է իմ* ***պապի կողմից*** *և կառուցվել հմուտ* ***շինարարների ձեռքով****:*

Լրացյալ բայը ներգործական սեռի վերածելիս ներգործող բայը դառնում է ենթակա, իսկ ենթական՝ ուղիղ խնդիր. *Ամռան թեժ* ***արևն*** *այրել էր խոտը: Այս տունը հիմնադրել է իմ* ***պապը****, և կառուցել են հմուտ* ***շինարարները****:* ***Անձրևաջուրը*** *բերնեբերան լցրել էր ավազանը:*

ՀԱՆԳՄԱՆ ԽՆԴԻՐ

Ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը:

Պատասխանում է **ո՞ւմ, ինչի՞(ն), ո՞ւմ վրա, ինչի՞ վրա, ո՞ւմ դեմ, ինչի՞ դեմ, ընդդեմ ո՞ւմ, ընդդեմ ինչի՞, ո՞ւմ հանդեպ, ինչի՞ հանդեպ** կամ **ո՞ւմ հետ** հարցին:

Արտահայտվում է՝

- սեռական–տրական հոլովով. *Թեք անձրևը խփում էր պատուհանի **ապակիներին**: Մենք պատրաստ ենք **քննության**:*
- սեռական–տրական հոլովով և **վրա, հետ, (ընդ)դեմ, հանդեպ** կամ այլ կապով. *Դու անհոգ նայեցիր **ինձ վրա**: Ես **քեզ հետ** համամիտ եմ: Իմ հայրը մեղանչեց **իմ դեմ**, ես չմեղանչեցի **ոչ մեկի դեմ**: Լիլիթը անտարբեր էր Ադամի **գուրգուրանքի հանդեպ**:*
- **վրա, հետ** կապերով և ստացական հոդով. *Զգո՛ւյշ՝ շունը չհարձակվի **վրադ**: Այս շրջազգեստը **վրաս** չի նստում: **Հետդ** չեմ խոսում:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման խնդիրը *(Զորքը պատրաստ է **գրոհելու**)* **երբեմն սխալմամբ դրվում է ուղղական հոլովով** *(Զորքը պատրաստ է գրոհել):* Ճիշտ ձևը որոշելու համար անհրաժեշտ է հետադաս **հանգման խնդիրը** կամ դարձնել նախադաս *(Զորքը **գրոհելու** պատրաստ է)*, կամ փոխարինել գոյականով *(Զորքը պատրաստ է **գրոհի**)*. երկու դեպքում էլ ուղղականով ձևը բացառվում է: Կարելի է նաև հարց տալ՝ *Զորքը պատրաստ է **ինչի**. գրոհելու:*

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐ

Ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում, ստացվում, անջատվում կամ բաժանվում է մի բան:

Պատասխանում է **ումից** կամ **ինչից** հարցին:

Դրվում է բացառական հոլովով. *Ես նեղացա **քեզնից**: Առաքելը ոչ մի կերպ չէր կարողանում անջատվել իր անցյալի փխուր **հիշողություններից**: Դա մեր գյուղի **ծերունիներից** եմ լսել:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս անջատման խնդիրը *(Խուսափում է **հանդիպելուց**)* **երբեմն սխալմամբ դրվում է ուղղական հոլովով.** *Խուսափում է հանդիպել):* Ճիշտ ձևը որոշելու համար անհրաժեշտ է հետադաս **անջատման խնդիրը** կամ դարձնել նախադաս *(**Հանդիպելուց** խուսափում է)*, կամ փոխարինել գոյականով *(Խուսափում է **հանդիպումից**)*. երկու դեպքում էլ ուղղականով ձևը բացառվում է: Կարելի է նաև հարց տալ՝ *Խուսափում է **ինչից**. հանդիպելուց:*

ՄԻՋՈՑԻ ԽՆԴԻՐ

Ցույց է տալիս գործողության կատարման միջոցը:

Պատասխանում է **ումո՞վ, ինչո՞վ, ո՞ւմ միջոցով** կամ **ինչի՞ միջոցով** հարցին:

Արտահայտվում է՝

- գործիական հոլովով. *Դուք ճաշը* ***գդալո՞վ*** *կուտեք, թե՞* ***պատառաքաղով****:*
- սեռական–տրական հոլովով և **միջոցով** կապական բառով. *Գործուղումների ժամանակ աշխատակիցներիս հետ հաղորդակցվում եմ* ***համացանցի միջոցով****:*

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Ցույց է տալիս այն առարկան, որի մասին խոսվում կամ մտածվում է:

Պատասխանում է **ո՞ւմ մասին, ինչի՞ մասին, ո՞ւմ վերաբերյալ, ինչի՞ վերաբերյալ, ինչի՞ շուրջ, ո՞ւմ** հասցեին, **ումի՞ց** կամ **ինչի՞ց** հարցին: Արտահայտվում է՝

- բացառական հոլովով. *Մենք խոսեցինք* ***ամեն ինչից****՝ բացի* ***ամենակարևորից****՝ մեր գործից:*
- սեռական–տրական հոլովով և **մասին, վերաբերյալ, հասցեին** կամ **շուրջ** կապով. *Ես կմտածեմ քո* ***ասածի մասին****: Քննարկվող* ***խնդրի վերաբերյալ*** *ես հատուկ կարծիք ունեմ: Նրա ելույթում անորոշ ակնարկներ կային* ***իմ հասցեին****: Որոշ* ***հարցերի շուրջ*** *բանավեճ ծավալվեց:*

Վարժություններ

1. Ընդգծե՛ք հանգման խնդիրները:

1) Ճուտիկը փաթաթվեց ծնկներիս:
2) Դպրոցի բակում հավաքված աղջիկները խաղում էին, իրար վրա ձյուն շաղ տալիս և երգեր ասում:
3) Հիմա ես տեր հորն ի՞նչ պատասխան եմ տալու...
4) Պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները:
5) Ջրվորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ:

2. Ընդգծե՛ք ներգործող խնդիրները:

1) Եվ մթամած ձորերը, և՛ ահասարսուռ լեռները սքողվել էին առավոտյան մշուշի նուրբ շղարշով:
2) Ավերիչ երկրաշարժից հետո գյուղը լքվեց բնակիչներից:
3) Ուսանողների կողմից մի հիանալի նվեր էր պատրաստվել:

4) Երկընտրանքից և կասկածներից կեղեքվում էր սիրտը:
5) Գյուղը օղակված էր կանաչ մարգագետիններով ու փարթամ անտառներով:

3. Ընդգծեք անջատման խնդիրները:

1) Քիչ հետո մեր ճանապարհները բաժանվում են իրարից:
2) Հնձվորը դեռ կոշիկները չէր հանել և գուլպաներից թափ չէր տվել կորեկի փնջերը:
3) Բրուտը դեղին կավից կերտում է գավաթ ու կուժ:
4) Հարևանուհու այդպիսի անորոշ բացականչություններից Սոնա մայրիկը խորշում էր:
5) Մի անգամ հորդ անձրևից միասին պատսպարվել էին պատշգամբի տակ:

4. Ընդգծեք միջոցի խնդիրները:

1) Փառանձեմը մի ժանգոտ դանակով էր քաղհանում կոտեմի մարգը:
2) Հնագետը ձեռքով քարը շոյում էր և սրբում գրերի վրայի հողը:
3) Լուսիկը իր ժամանման մասին ինձ հայտնել է հեռագրով:
4) Լևոնը մի քանի շեշտակի հարցերով տեղը գցեց խոսակցությունը:
5) Աղջիկներն իրենց գոգը լցնում են սպիտակ բամբակով:

5. Ընդգծեք վերաբերության խնդիրները:

1) Փայտերը մեկ–մեկ գցում էր կրակի մեջ և պատմություններ անում անցած–գնացած օրերից:
2) Սակայն կար նաև մի մտերիմ նյութ, որի շուրջ Հռիփսիմե մայրիկը խոսում էր միայն ակնարկներով:
3) Առիթը հարմար էր՝ ավելի որոշակի ակնարկելու նրա մասին:
4) Մի պահ զարմացավ. ինչքա՜ն բան է հիշում Լուսիկից:
5) Այսքան զրուցեցինք, բայց բուն խնդրի վերաբերյալ ոչինչ չխոսեցինք:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱԶԱՐԱՇԵՆ

Ճարտարապետության մեջ, 10–րդ դարից սկսած, կա ծածկի կամ կիսածածկի ներքին հարդարանքի մի տեսակ, որ կոչվում է շթա-

քար (ստալակտիտ): Շթաքարային զարդերը տարածված են հայկական և մահմեդական մշակույթներում:

Հայերը դա օգտագործում են առավելապես քարակերտ գմբեթածածկերի, որմնախորշերի, քիվերի, խոյակների զարդարման նպատակով: Դրա ընտիր նմուշներից են Անիի Առաքելոց, Գանձասարի, Գեղարդի, Հառիճի վանքերի գավիթների երդիկավոր ծածկերը (10–13–րդ դարեր), Նեղուցավանքի, Կտուց անապատի գավիթների շքամուտքի կիսածածկերը: Մահմեդական մշակույթում շթաքարը իրականացվում է հիմնականում ծեփագործական եղանակով: Դրա կատարյալ նմուշներն են Ալհամբրայի (Իսպանիա) արքայական պալատի շքեղագույն գմբեթածածկերը (13–րդ դ.):

Շթաքարային ծածկի նախօրինակը հայկական գլխատան փայտե հազարաշեն երդիկավոր գմբեթն է, որն ունի շատ հին պատմություն: Դրա նկարագրությունը տվել է մ.թ.ա. 5–րդ դ. հույն պատմիչ Քսենոփոնը իր «Անաբասիս» երկում:

Գլխատունը բնակելի ընդարձակ սրահ է, որի կենտրոնում կրակարանն է, դրա վերևում՝ երդիկը: Նրա հազարաշեն ծածկը կազմվել է պատերին, սյուներին կամ կամարակապ հենարաններին դրված գերանակազմ քառանկյուններից կամ բազմանկյուններից, որոնք դեպի վեր աստիճանաբար փոքրանում են, իսկ դրանց անկյունագծերն ընդհանուր առանցքների նկատմամբ մեկընդմեջ փոխում են իրենց դիրքը: Ներսի կողմից դա շթաքարային ծածկի պարզ տեսակն է: Հազարաշեն է կոչվել, քանի որ կազմվել է 1000–ավոր տարաչափ փայտե ձողերից ու գերաններից: Գերանները հաճախ քանդակազարդվել են:

Շթաքարային զարդը աշխարհում հայտնի է նաև իր արաբերեն ***մուքառնա*** *անունով, որ նշանակում է «ծեփազարդ»: Այդ մուքառնան փաստորեն հայկական համեստ հազարաշենի ընդամենը արտաքին տպավորության շքեղ վերարտադրության մի փորձ է:*

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ հազարաշենի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
2. «Հազարաշեն» գրվածքում գտի՛ր անուղղակի խնդիրներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 21

ՊԱՐԱԳԱՆԵՐ

Այսպես են կոչվում գործողության կամ եղելության հանգամանքներ կամ հատկանիշներ ցույց տվող անդամները:

Արտահայտվում են մակբայներով, հոլովված գոյականներով և այլն:

Պարագաները լինում են մի քանի տեսակի՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի, նպատակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման:

ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության տեղը:

Պատասխանում է **որտե՞ղ, ո՞ւր, որտեղի՞ց** կամ **որտեղո՞վ** հարցին:

Արտահայտվում է՝

- տարբեր հոլովաձևերով. *Գնում եմ* ***գբոսայգի****: Կանգնած եմ ժայռի* ***կատարին****: Արմենը այդ ժամին կլինի* ***դպրոցում*** *կամ* ***տանը****: Ճանապարհն անցնում է* ***դաշտով*** *և մտնում* ***ձորը****: Ես* ***գյուղից*** *եմ եկել:*
- հոլովված բառով և տեղի կապով կամ կապական բառով. ***Սյան վրա*** *խաչքար է տեղադրված:* ***Սեղանի տակից*** *վերցրո՛ւ թափված թղթերը:*
- տեղի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով. *Գնացի* ***այնտեղ****,* ***ամենուր*** *նայեցի,* ***ոչ մի տեղ*** *ոչինչ չգտա:* ***Որտե՞ղ*** *փնտրեմ ընկերներիդ:*

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության ժամանակը:

Պատասխանում է **ե՞րբ, երբվանի՞ց** կամ **մինչև ե՞րբ** հարցին:

Արտահայտվում է՝

- տարբեր հոլովաձևերով. *Դա տեղի է ունենում ամեն **օր**: Երկու **օրից** մեկնում եմ Լոս Անջելես: Համերգը սկսվում է ժամը **ութին**: Տուն եկավ **գիշերով**: Ճանապարհի վերջին ոլորանն **անցնելով**՝ մենք մտանք քաղաք: Հաջորդ **ամսում** այդ գործը կավարտենք:*
- հոլովված բառով և ժամանակի կապով կամ կապական բառով. *Կսպասեմ **մինչև հինգը**: Ներս **մտնելուն պես** հարձակվեց վրաս հանդիմանական խոսքերով: **Սրանից հետո** միայն քո ուզածով կլինի:*
- ժամանակի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով. *Երևում է՝ **շուտով** անձրև է գալու: **Ե՞րբ** ես վերադարձնելու գիրքս:*
- համակատար դերբայով. *Սանդուղքով **իջնելիս** սայթաքեցի և ոտքս մնասեցի:*
- երբեմն՝ հարակատար դերբայով. *Նրա ծրագիրը **չծնված** մեռավ: Դասը հազիվ **սկսված**՝ եկավ տնօրենը: Համերգը դեռ **չավարտված**՝ դուրս եկանք դահլիճից:*

ՁԵՎԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման ձևը, ինչպես նաև գործողություն կատարողի վիճակը:

Պատասխանում է **ինչպե՞ս** հարցին:

Արտահայտվում է՝

- գործիական, երբեմն էլ՝ այլ հոլովաձևերով. *Փողոցը **վազելով** չանցնես: **Հաճույքով** կօգնեմ քեզ: **Մտքում** երևի դժգոհում է ինձնից: **Կողքի՛** պառկիր, որ վատ երազներ չտեսնես: **Հիմքից** խարխլված շենք է:*
- հոլովված բառով և ձևի կապով. *Երեխաները **ծիտիկների պես** թռչկոտում են ու ծլվլում: **Միամիտի նման** խաբվեցի: Լսում էր ինձ **առանց խոսքի**: Անին իր խոստումը կատարեց՝ **ի տարբերություն քեզ**:*
- ձևի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով. *Լույսը **կամաց-կամաց** բացվում էր: Խելոք մարդն իրեն **այդպես** չէր պահի:*
- մակբայաբար գործածված որակական ածականով. *Շատ **տխուր** ու **մռայլ** ես խոսում: Ավելի **ազա՛տ** զգա քեզ:*
- հարակատար դերբայով. *Տուն եկավ **հոգնած** ու **մրսած**:*

ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության չափը:

Պատասխանում է **որքա՞ն, ինչքա՞ն, որքանո՞վ, ինչքանո՞վ** կամ **ի՞նչ չափով** հարցին:

Արտահայտվում է՝

- չափի մակբայով կամ նրան հարաբերակից դերանունով. *Գործը **մեծ մասամբ** արված է: Չեմ կարող **այդքան** սպասել:*
- հոլովված բառով և չափի կապով կամ կապական բառով. *Ես քեզ **ուժերիս ներածին չափով** կօգնեմ: **Իմ չափ** աշխատել ոչ ոք չի կարող: Դու եղբորիցդ **ավելի խելոք** վարվեցիր:*
- առավելապես թվական պարունակող բառակապակցությամբ. *Արձակուրդին հանգստացել է և ասես մի **10 տարով** ջահելացել է:*

ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության պայմանը:

Պատասխանում է **ի՞նչ պայմանով** կամ **ո՞ր դեպքում** հարցին:

Արտահայտվում է՝

- հոլովված բառով և **դեպքում, պայմանով** կամ **պարագայում (պարագային)** կապական բառով. *Ուշադիր **կարդալու դեպքում** ամեն ինչ հասկանալի է: **Ոչ մի պարագայում** ես քեզ հետ չեմ գործակցի:*
- գործիական հոլովով. *Դու այս գործը կհասցնես՝ միայն գիշերները **չքնելով**: Տարածքը տրվում է **վարձով**:*

Վարժություններ

1. Ընդգծեք տեղի պարագաները:

1) Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք:
2) Երբ նա կռացավ սփռոցի վրա, թիկունքից ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վար:
3) Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց իրեն:
4) Լևոնը կանգնեց դռան առաջ, ձեռքը տարավ գրպանը, շոշափեց բանալին, որ գրպանում տաքացել էր:

2. Ընդգծեք ժամանակի պարագաները:

1) Նա կտուրների վրա ջինջ ձայնով այլևս չի երգում:
2) Եվ այս հանդիմանությունից հետո սոսին լռեց:

3) Նրանք մութն ընկնելիս էին հասնում այդ փողոցին:
4) Այդ րոպեին Լևոնը շրջվեց պատուհանի կողմը:
5) Փոխադրվելու առաջին օրից ամուսինները սկսել էին անկաշառ բարեկամություն Լևոնի հետ:

3. Ընդգծե՛ք ձևի պարագաները:

1) Ցոլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները:
2) Նվագածուի կուրծքն ուռչում է, չոր կաշվի նման ճռռում են թոքերը:
3) Դուք վառում եք կավե ճրագը և կռացած ներս մտնում, ծնկաչոք գնում:
4) Տեսնես այս տարի նորատունկ այգին ինչպե՞ս կծաղկի:

4. Ընդգծե՛ք չափի պարագաները:

1) Այդտեղ խոտը բարձրանում էր մինչև մեր ուսերը:
2) Քաղաքների կրակներն ավելի էին պայծառանում:
3) Բանալին դարձավ երկու անգամ, և ապակյա դուռը բացվեց:
4) Հետո երեք ամիս ընկած է եղել ձյունի և անձրևի տակ մինչև Լևոնի գալը:

5. Ընդգծե՛ք պայմանի պարագաները:

1) Պատերազմի դեպքում ոչ թե ձեռնարկատիրական, այլ քաղաքական համաձայնագրերն են սառեցվում:
2) Նրանք գաղտնի համաձայնության էին եկել այդ պաշտոնի թեկնածուների հետ՝ խոստանալով նրանց օժանդակել՝ ամենահարուստ գավառները ստանալու պայմանով:
3) Դրական արձագանքի պարագայում նախագիծը դառնում էր օրենք՝ պարտադիր բոլորի համար:

ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԱՅԳԻ (ՊԱՐԿ)

«Սևան» ազգային պարկը պահպանվող տարածք է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասում՝ Գեղարքունիքի մարզում՝ Երևանից մոտ 60 կմ հեռու: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հետ միասին, 147 հեկտար է, իսկ առանց լճի՝ 23: ««Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացնում է իր տարածքի բնահամակարգերի, բնապատկերային ու կենսաբանական բազմազանության, գիտական ուսում-

նասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, դիտանցման, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը:

«Սևան» ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառական գոտիների՝ արգելոցային, արգելավայրային, վերականգնողական և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք–Արգիճիի», «Գիլլիի» և «Արտանիշի», 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի–կաղնուտային»:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ: Դրանցից 20–ը հազվագյուտ են, 39–ը ընդգրկված են Հայաստանի «Կարմիր գրքում», իսկ մեկը՝ հայկական որորը, տեղաբնիկ է:

Կենդանական աշխարհն ընդգրկում է 43 տեսակի փափկամարմին, 639 հոդվածոտանի (6–ը՝ Հայաստանի տեղաբնիկ, որոնցից կապտաթիթեռը գրանցված է Բնության պահպանության միջազգային միության «Կարմիր գրքում»), 5 ձուկ (2–ը՝ իշխանը և բեղավոր ծածանը, գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»), 4 երկկենցաղ, 16 սողուն (2–ը գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»), 44 կաթնասուն (6–ը գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»):

Բուսական աշխարհն ընդգրկում է 1619 տեսակ, այդ թվում՝ 32 ծառ, 102 թուփ: Դրանցից 23–ը տեղաբնիկ է Հայաստանի համար, այդ թվում 13–ը՝ Սևանի շրջանի համար: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի «Կարմիր գրքում»: Շուրջ 60–ը օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100–ը ուտելի են:

Հաշվառված են պատմության, մշակույթի և բնության 1489 անշարժ հուշարձաններ, որոնց թվում են Սևանավանքը, Հայրավանքը, Նորատուսի խաչքարերի անտառը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ «Սևան» ազգային պարկի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. ««Սևան» ազգային պարկ» գրվածքում գտի՛ր պարագաներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 22

ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության նպատակը:

Պատասխանում է **ինչո՞ւ, ի՞նչ նպատակով** կամ **ինչի՞ (համար)** հարցին:

Արտահայտվում է՝

• սեռական–տրական հոլովով. *Գնանք շուկա՝* ***գնումների****:*

• հոլովված բառով և նպատակի կապով կամ կապական բառով. ***Ինչի՞ համար*** *արեցիր այս ամենը:* ***Սովորելու նպատակով*** *մեկնել է արտասահման: Կյանքը զոհեց* ***հանուն հայրենիքի****:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Անորոշ դերբայով արտահայտված հետադաս նպատակի պարագան երբեմն սխալմամբ դրվում է ուղղական հոլովով՝ *շտապում էր կարծիք հայտնել, հրավիրված եմ մասնակցել:* **Սրանք օտար լեզուների ազդեցություն են:** Ճիշտ ձևը որոշելու համար անհրաժեշտ է հետադաս **պարագան** կամ դարձնել նախադաս *(Կարծիք* ***հայտնելու*** *է շտապում),* կամ փոխարինել գոյականով *(Շտապում է* ***դասի****).* երկու դեպքում էլ ուղղականով ձևը բացառվում է: Կարելի է նաև հարց տալ՝ *շտապում է* ***ինչի՞****. կարծիք* ***հայտնելու****:*

Վերջադաս նպատակի պարագան միշտ տրոհվում է բութով, եթե առանց նպատակի կապի դերբայական դարձված է. *Շուկա է մտել՝* ***ձմերուկ առնելու****:*

Մնացած դեպքերում (գոյականով կամ միայնակ դերբայով արտահայտվելիս, կապով կազմվելիս) վերջադաս նպատակի պարագան տրոհվում է, եթե անմիջապես ստորոգյալին չի հաջորդում (հեռացած է). *Գնաց անտառ՝* ***որսի****: Արի՛ խոհանոց՝* ***ճաշելու****: Նա կզոհաբերի իր կյանքն անգամ՝* ***հանուն հայրենիքի ազատության****: Վերցրո՛ւ այս փողը՝* ***գնումներ անելու համար****:* Նույն նպատակի պարագաները ստորոգյալին հաջորդելիս չեն տրոհվում. *Անտառ գնաց* ***որսի****: Խոհանո՛ց արի* ***ճաշելու****: Նա իր կյանքն անգամ կզոհաբերի* ***հանուն հայրենիքի ազատության****: Այս փողը վերցրո՛ւ* ***գնումներ անելու համար****:*

ՊԱՏՃԱՌԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության պատճառը:

Պատասխանում է **ինչո՞ւ, ինչի՞ց** կամ **ի՞նչ պատճառով** հարցին:

Արտահայտվում է՝

- բացառական, երբեմն՝ գործիական հոլովով. *Այծերը **զարմանքից** վերուվար էին անում գլուխները: Նա փառապում է ծանր **հիվանդությամբ**: Այդ օրը, **գլխացավ ունենալով**, ես դասի չգնացի:*
- հոլովված բառով և պատճառի կապով կամ կապական բառով. ***Քո պատճառով** կորցրի աշխատանքս: **Ինչի՞ շնորհիվ** ես այդքան երիտասարդ մնացել: Ինձ մի՛ հանդիմանեք **անտարբերության համար**:*
- դերանունով. ***Ինչո՞ւ** ես կարմրել:*

ՀԻՄՈՒՆՔԻ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողության կամ եղելության հիմունքը:

Պատասխանում է **ինչից, ի՞նչ հիմունքով** կամ **ինչի՞ հիման վրա** հարցին:

Արտահայտվում է՝

- բացառական կամ գործիական հոլովով. *Մի որևէ **պատճառաբանությամբ** նրան կմերժես: Քո **ասածներից** հասկացա, որ գործը գլուխ չի գալու:*
- հոլովված բառով և հիմունքի կապով կամ կապական բառով. *Եզրակացությունները կատարված են նորահայտ **տեղեկությունների հիման վրա**: **Համաձայն խոստումիս**՝ եկել եմ: **Ըստ իմ դիտարկումների** էլ նույն արդյունքն է ստացվել:*

Հիմունքի պարագան սովորաբար տրոհվում է կապով և կամ դերբայական դարձվածով կազմված լինելու դեպքում. ***Ըստ հրամանի**՝ մենք պետք է անցնենք հարձակման:*

ԶԻՋՄԱՆ ՊԱՐԱԳԱ

Ցույց է տալիս գործողությանը կամ եղելությանը հակառակ հիմունք կամ հանգամանք:

Պատասխանում է **հակառակ ինչի՞, փոխանակ ինչի՞, չնայած ինչի՞, ո՞ւմ փոխարեն** կամ **ինչի՞ փոխարեն** հարցին:

Իմաստով հակադիր է պատճառի և հիմունքի պարագաներին:

Արտահայտվում է՝

- հոլովված բառով և բացառման կամ զիջման կապով. ***Հակառակ քո զգուշացման**՝ նա ստորագրել է համաձայնագիրը: **Չնայած հոգսաշատությանը**՝ Հերիքնազն իրեն երջանիկ էր համարում: Իր բոլոր **թերություններով հանդերձ**՝ նա դրական անձնավորություն է: **Փոխանակ մարզվելու**՝ հույսը դրել է բախտի վրա:*

• անորոշ դերբայի գործիական հոլովով. *Իմ գաղափարակիցը* ***չլինելով***՝ *քվեարկեց իմ օգտին:*

Զիջման պարագան սովորաբար տրոհվում է կապով և կամ դերբայական դարձվածով կազմված լինելու դեպքում. *Այգեկութը,* ***չնայած վատ եղանակին****, սկսված է:* ***Փոխանակ դասերը պատրաստելու***՝ *հեռուստացույց էր նայում:*

Վարժություններ

1. Ընդգծեք նպատակի պարագաները:

1) — Կանանց ժողովի համար է եկել, — ասաց Սարգիսը:
2) Անցորդը շտապում էր՝ դռնակներից մեկը բախելու:
3) Այդ գործն արել է հօգուտ հայրենիքի բարօրության:

2. Ընդգծեք պատճառի պարագաները:

1) Հրապարակը ծփում էր մի արտասովոր դեպքից:
2) Նրան ես պատիվ ունեցա ծանոթանալու շնորհիվ Ձեզ:
3) Շատ գյուղեր տրակտոր և շարքացան չի կարելի տանել ճանապարհի չլինելու պատճառով:

3. Կետադրեք նախադասությունները և ընդգծեք հիմունքի պարագաները:

1) Ասատուրը կնոջ ասելով հենց սկզբից այդպիսին էր:
2) Գրանիտե դղյակում ըստ ավանդության ապրել է շվեդների Գուստավ Ադոլֆ թագավորը:
3) Նայած քաղաքական իրավիճակին երկրում ամեն ինչ կարող է կտրուկ փոխվել:

4. Կետադրեք նախադասությունները և ընդգծեք զիջման պարագաները:

1) Չնայած իրենց ծրագրերի և գործելակերպի տարբերությանը նրանք դեռևս միասնական էին:
2) Լևոնը առանց որևէ լուրջ պատճառի զայրացել էր հաշվապահ Արուսի վրա:
3) Գառնիկը հակառակ ծնողների կամքի ամուսնացավ Հայկուհու հետ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՀԱԳՆ ԱՍՏՎԱԾ

Վահագնը պատերազմի, քաջության և հաղթանակի աստվածն է հին հայկական դիցաբանության մեջ: Նա Արամազդի՝ հայոց գե-

բագույն աստծու, և Անահիտ դիցուհու հետ կազմել է սրբազան երրորդություն:

Վահագնը՝ որպես կենսատու լույսի հովանավոր և քաջ որսորդ, մարտնչել է խավարը, չար ու վնասակար ուժերը մարմնավորող վիշապների դեմ: Այդ պատճառով էլ նրան տրվել է Վիշապաքաղ մականունը: Պատկերվել է որպես հրեղեն մազերով, բոցավառ մորուքով և արեգակնափայլ աչքերով պատանի: Հայոց բարձր լեռները դիտվել են իբրև Վահագնի երկրային սրբազան կայաններ: Ըստ Վասպուրականի հայոց մեջ տարածված ավանդազրույցի՝ Արեգակը (Վահագնը) գիշերը ծովում լողանալուց հետո առավոտյան երկինք է բարձրանում Վարագի (Վահագն) գագաթից, իսկ նրան հարատև ուղեկցում են 12 ոսկե գավազանակիրներ (խորհրդանշում են 12 կենդանակերպ համաստեղությունները): Նրա ծննդյան օրհներգը մեզ է ավանդել Մովսես Խորենացին:

Վահագնի հարսնացուն համարվել է Աստղիկը, որի սրահը կոչվել է «սենյակ Վահագնի»:

Վահագնի գլխավոր տաճարը (մեհյանը) եղել է Տարոն գավառի Վիշապ քաղաքավանին մերձակա Քարքե լեռան լանջին: Տաճարում դրված է եղել Վահագնի մեծ անդրին, կից սրահներում՝ Աստղիկ դիցուհու և Անահիտ դիցամոր անդրիները: Քրիստոնեական դարձի ժամանակ (301 թ.) Գրիգոր Լուսավորչին ուղեկցող զորքերը համառ կռիվներից հետո կործանել են Վահագնի գլխավոր տաճարը, որի տեղում հիմնվել է եկեղեցի:

Հայոց տոմարում Վահագնի անունով է կոչվել ամսվա 27–րդ օրը: Իբրև ռազմի աստված՝ Վահագնը զուգորդվել է այդ դաղափարը խորհրդանշող Հրատ (Մարս) մոլորակին, որին հին հայերը տվել են Հուրհեր մականունը:

Վահագնի խորհրդանիշը Խաչ պատերազմին էր՝ կեռխաչը, որ հայ ռազմիկները կրում էին աջ բազկին և մարտից առաջ երդվում դրանով:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Վահագն աստծու մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Վահագն աստված» գրվածքում գտի՛ր պարագաներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 23

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

Դերբայական դարձվածը դերբայն է՝ իր լրացումներով:

Օրինակ. ***Այգում զբոսնելիս*** *հանդիպեցի ընկերոջս:* ***Հովտի վերևում հանդարտ ճախրող*** *արծիվը նման էր սավառնակի:* ***Խանութում իմ փնտրածը չգտնելով***՝ *գնացի շուկա:*

Դերբայական դարձվածով կարող է արտահայտվել նախադասության ցանկացած անդամ՝ բացի պարզ ստորոգյալից (ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցից):

Դերբայական դարձվածի գերադաս անդամն արտահայտվում է՝

- անորոշ դերբայի որևէ հոլովաձևով. *Չեմ կարող ոչինչ* ***չանել****: Գնանք՝ ձուկ* ***բռնելու****: Նրա ավել–պակաս* ***խոսելուն*** *մի՛ նայիր: Քաղցրավենիք* ***ուտելուց*** *ես դու գիրանում: Պարապում է՝ երաժշտություն* ***լսելով****:*
- հարակատար դերբայով կամ նրա գոյականաբար գործածված որևէ հոլովաձևով. *Գարնանային թարմ օդով* ***արբած***՝ *չէի ուզում տուն գնալ: Իմ* ***թխածը*** *ավելի համեղ է, քան քոնը: Մեկ անգամ* ***փորձածին*** *նորից մի՛ փորձիր: Քո* ***պատմածից*** *ոչինչ չտպավորվեց:*
- ենթակայական դերբայով կամ նրա գոյականաբար գործածված որևէ հոլովաձևով. *Մի կարգին* ***գրող*** *գրի՛չ տուր: Ձու* ***գողացողը*** *ձի էլ կգողանա: Մեծ–մեծ* ***խոսողին*** *շատ մի՛ հավատա: Զգուշացի՛ր շատ* ***խոսողներից****: Այսքան դանդաղ գործ* ***անողներով*** *մենք ժամկետի մեջ չենք տեղավորվի:*
- համակատար դերբայով. *Դաշտում* ***աշխատելիս*** *զգույշ կլինես թունավոր օձերից:*

Դերբայական դարձվածները լինում են **տրոհվող** և **չտրոհվող**:

Տրոհվող են՝

- հետադաս որոշիչ դերբայական դարձվածը. *Մեր առջև էր դժվարամատչելի լեռը՝* ***ժայռոտ կատարը երկինք մխրճած****:*
- պարագա դերբայական դարձվածների մեծ մասը, մասնավորապես՝

- գործիական հոլովով անորոշ դերբայի դարձվածով ժամանակի, ձևի, պատճառի, հիմունքի, երբեմն՝ զիջման, պայմանի պարագաները. *Մայրս,* ***փուն վերադառնալով****, հագուստը փոխեց և անցավ խոհանոցային գործերին:* ***Քթի տակ երգելով****՝ ափսեներն էր լվանում:* ***Արևից խաբվելով****՝ վերարկու չհագա և հիվանդացա:* ***Հեփևելով բժշկի ցուցումներին****՝ սկսեցինք հիվանդին այլ կերպ բուժել:* ***Ծնողներիս չլսելով****՝ գնացի Ծաղկաձոր և զղջացի:* ***Անվերջ նվնվալով****՝ գործերդ չես շտկի:*
- հարակատար դերբայի դարձվածով ժամանակի, ձևի, պատճառի, հիմունքի, զիջման պարագաները. *Նա քայլում էր՝* ***գլուխը բարձր պահած****:* ***Օրը կես չեղած****՝ գործն ավարտել էինք:* ***Վազերը էտելուց հոգնած****՝ նստեց հանգստանալու:* ***Մեր հաջողությամբ ոգևորված****՝ բոլորը գործի անցան:* ***Ծնողների կարծիքին հակառակված****՝ անում էր միայն իր ուզածը:*
- սեռական–տրական հոլովով անորոշ դերբայի դարձվածով վերջադաս նպատակի պարագան. *Եկել եմ՝* ***խորհուրդ հարցնելու****:*
- հիմունքի, զիջման և բացառման կապով պարագա դերբայական դարձվածները. *Բայց ես ամեն ինչ արել եմ՝* ***համաձայն քո ասածի****:* ***Չնայած հորդ անձրև սկսվելուն****՝ խաղը շարունակվում էր:* ***Թերթում կարդացածից բացի****՝ ուրիշ ոչինչ չգիտեմ դրա մասին: Հեռացավ՝* ***առանց մի բառ անգամ ասելու****:*
- կապական նպատակի պարագա վերջադաս դերբայական դարձվածը, եթե ստորոգյալին չի հաջորդում. *Տիգրանը դուրս եկավ փողոց՝* ***ուշ գիշերվա հաճելի զովը վայելելու համար****:*
- բացահայտիչ դերբայական դարձվածը. *Զանգել էր Նորայրը՝* ***ինձ հետ հայերեն պարապողը****:*

Տրոհվող դերբայական դարձվածը սովորաբար կետադրվում է այսպես.

- առաջադաս և վերջադաս դիրքում նախադասության մնացած մասից անջատվում է բութով. ***Փողոցում քեզ տեսնելով****՝ երթուղայինից իջա՝* ***շատ կարևոր լուր հաղորդելու****:*
- միջադաս դիրքում նախադասության մյուս մասերից անջատվում է ստորակետերով (բացի բացահայտիչ և հետադաս որոշիչ դարձվածներից). *Անցորդները,* ***նկատելով***

վայր ընկած մարդուն, *մոտ վազեցին օգնելու:*

- բացահայտիչ և հետադաս որոշիչ դերբայական դարձվածները նաև միջադաս դիրքում են տրոհվում բութ–ստորակետով. *Մինասը՝* ***մեր դասարանի ամենաարագ վազողը***, *մեկնելու է մրցումների: Այս մատղաշ դեղձենին՝* ***տնկված մեկ տարի առաջ***, *արդեն ծաղկել է:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Լինում են նաև դերբայական դարձվածի նման ծավալուն անդամներ, որոնց գերադաս անդամը ոչ թե դերբայ է, այլ ածական, գոյական կամ այլ խոսքի մաս: Դրանք հաճախ կոչվում են զեղչված կամ վերառված դերբայով դարձված: Սովորաբար տրոհվում են (կամ չեն տրոհվում) դերբայական դարձվածի կանոններով՝ համաձայն իրենց պաշտոնի և հնարավոր վերականգնելի դերբայի բնույթի. ***Ձեռքերը գրպաններում՝*** *կանգնել էր ու չէր խոսում: Անդոն կուզեկուզ մոտենում է՝* ***քարը բռան մեջ****: Սաքանը,* ***թարմ խոտի երկու խուրձ շալակին****, եկավ տուն:* ***Կուրծքը սպիտակ*** *ջրածտերը թռչում են քարից քար, պոչը երերում, ծվծվում: Այդ* ***մազերը շեկ*** *տղան իմ դասընկերն է:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Դերբայական դարձվածի հետ չպետք է շփոթել՝

- **հարադիր բայերով և դարձվածքներով արտահայտված միայնակ դերբայները.** *Ամբողջ դահլիճը լարվեց ու* ***շունչը պահած*** *նայում էր դերասանին: Նրանց հետևից* ***քափ–քրտինք մտած*** *սլանում էին հունական ընտիր զորամասերը: Երկու ձի* ***ծառս լինելով*** *աղեխարշ վրնջացին: Թագավորը* ***աշխարհով մեկ լինելով*** *սկսում է իր դստեր հարսանիքին պատրաստվել:*
- **դերբայներով արտահայտված բազմակի անդամները.** *Առաջապահ գումարտակի զինվորները* ***սողալով ու թաքնվելով*** *մոտենում էին թշնամու դիրքերին:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3

Դերբայական դարձվածի հետ բազմակի անդամ կազմող այլ բառեր ու կապակցություններ կարող են տրոհվել նրա հետ միասին իբրև մեկ ամբողջական տրոհվող անդամ. ***Դիմախաղով, ձեռքի շարժումներով և առանձին բառեր ասելով՝*** *մենք իրար հասկանում էինք: Զինվորները,* ***սողալով ու թփուտներում թաքնվելով****, առաջ էին գնում: Աշխատում էինք՝* ***խիստ ոգևորված, բարձր տրամադրությամբ****:*

Վարժություններ

1. Կետադրեք նախադասությունները և ընդգծեք դերբայական դարձվածները:

1) Հնագետը ոտքով փորում էր հողի փլվածքը բացում հողի տակ թաղված սրբատաշ քարի ծայրը:
2) Կտուրի վրա նստած մի մարդ եզան կաշի էր մշակում և Մթնաձորի չարքի մասին պատմություն անում քարերին նստոտած շինականներին:

3) Երբ ճիգ էր անում Լիլիթին մոռանալու և գրկում էր հավատարիմ Եվային ու կրծքին սեղմում նա այդ ժամանակ Լիլիթին էր իր կրծքին սեղմած տեսնում:
4) Ամեն երեկո իր տան բանալիներին նայելիս ափսոսում էր տանը թողած իրերը:
5) Ու չքանում են պատերը տեսնում եք մորը օրորոցի վրա կռացած և մոռացված մի երգ օրորում է ձեր մանկությունը:

2. Կետադրե՛ք նախադասությունները և ընդգծե՛ք չտրոհվող դարձվածները:

1) Նայեց ընկերների հետևից և անխոս վերադարձավ մեջքին ուսապարկը:
2) Վերջին նստարան լռություն զայրացած սաստում է ամբիոնին կռթնած ուսուցիչը:
3) Ով է այն հարսը որ մեջքը օրորելով այդ կուժը պիտի կրի:
4) Չի կարելի տրորել ծաղիկը նույնիսկ անզգուշաբար տրորվելիս նա լուռ արտասվում է երբեմն ցույց տալով իր արտասուքի կաթիլները:
5) Մի մեծ ալիք եկավ ծածկեց բանալու ընկած տեղը:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ՄՈՆԹԵ

Արցախյան պատերազմի հերոս և ՀԱՀԳԲ–ի (ԱՍԱԼԱ) նախկին անդամ, ՀՀ ազգային հերոս, փոխգնդապետ, հնագետ, հրապարակախոս Մոնթե Մելքոնյանը (Ավո) ծնվել է 1957 թ. նոյեմբերի 25–ին ԱՄՆ–ում՝ ցեղասպանությունից փրկված և Կալիֆոռնիայի Վայսելիա քաղաքում հանգրվանած հայի ընտանիքում:

Հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը: 1969–1970 թթ. ընտանիքով ճամփորդել է Եվրոպայի և Միջին Արևելքի 41 երկրներում, այցելել Արևմտյան Հայաստան՝ իր պապերի ծննդավայրը: Այդ տարիքում խորապես գիտակցել է իր հայ լինելը:

1973–1974–ին սովորել է Օսակա քաղաքում (Ճապոնիա): 1978–ին ավարտել է Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը՝ բացառիկ ընդունակությունների շնորհիվ ուսման 4 տարվա ծրագիրը յուրացնելով 2,5 տարում: Տիրապետել է 7 լեզուների:

1978–ից մասնակցել է Լիբանանի քաղաքացիական պատերազմին՝ պաշտպանելով հայ համայնքը:

1980–ին անդամագրվել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին (ԱՍԱԼԱ), ղեկավարել մի քանի մարտական գործողություններ: 1983–ին խոր տարաձայնությունների պատճառով մի խումբ ընկերների հետ հեռացել է ԱՍԱԼԱ–ից: 1983–ի օգոստոսին համախոհների հետ ստեղծել է «ՀԱՀԳԲ–հեղափոխական շարժում» կազմակերպությունը: Գրել է «ԱՍԱԼԱ–ի պատմություն» գիրքը:

Երկու անգամ ձերբակալվել է հայկական պահանջատիրական բնույթի ապօրինի գործունեության ու կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով և 4 տարի անցկացրել Ֆրանսիայի բանտերում: Այդ ընթացքում գրել է հայ ժողովրդի նորագույն ազատագրական պայքարի մասին հոդվածներ, որոնք տպագրվել են մամուլում, այնուհետև գրքով՝ «Պայքարելու իրավունքը» խորագրով:

1990–ի հոկտեմբերին Մոնթեին հաջողվել է գալ Հայաստան: ՀՀ գիտությունների ակադեմիայի արևելագետների հետ գրեթե 8 ամիս զբաղվել է «Հայաստանը և իր հարևանները» ծավալուն գրքի ստեղծմամբ: 1991–ին ամուսնացել է և կնոջ հետ մեկնել արցախյան ռազմաճակատ:

Մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Ղեկավարել է Մարտունու, Քարվաճառի, Աղդամի ազատագրական ռազմական գործողությունները: Զոհվել է 1993 թ. հունիսի 12–ին Աղդամի շրջանի Մարզիլի գյուղում: Թաղված է Եռաբլուրում (Երևան):

Նրա անունով են կոչվում ՀՀ զինված ուժերի ռազմական ուսումնարաններից մեկը, փողոցներ Հայաստանում և Արցախում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Մոնթեի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Մոնթե» գրվածքում գտի՛ր դերբայական դարձվածներ և որոշի՛ր դրանց գերադաս անդամը:

ԴԱՍ 24

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Բազմակի են կոչվում նախադասության այն անդամները, որոնք միևնույն պաշտոնն են կատարում և ունեն ընդհանուր լրացյալ կամ հարաբերակից գլխավոր անդամ:

Բազմակի կարող են լինել նախադասության բոլոր անդամները, ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին և հանգույցը. *Ես ամեն պարագայում ազնիվ* ***եմ եղել և կլինեմ****: Այս աթոռը* ***ամուր է և փափուկ****: Չվախենամ,* ***ես ու Արամը*** *քեզ կօգնենք: Մենք այս սենյակում* ***թե՛ ճաշում ենք, թե՛ պարապում****: Պարտեզում աճեցնում ենք* ***վարդ, մեխակ, վարդակակաչ, աստղածաղիկ****: Տանը չեմ լինի* ***ո՛չ առավոտյան, ո՛չ երեկոյան****:* ***Ինձ ու քեզ*** *սպասող կա: Այսօր քո հյուրը մենք ենք՝* ***ես ու Հայկը****:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1

Բազմակի ստորոգյալները չպետք է շփոթել ընդհանուր ենթակայով համադաս նախադասությունների հետ: Վերջիններիս ստորոգյալները սովորաբար լինում են հակադրական (իսկ շաղկապով), հավելական (ինչպես նաև շաղկապով) կամ հաջորդման հարաբերության մեջ (ապա, հետո, այնուհետև մակբայներով), և ամեն մեկը կարող է ունենալ իր լրացում(ներ)ը՝ դրանց հետ դառնալով բարդ նախադասության բաղադրիչ նախադասություն. *Նա ցերեկը աշխատում է, իսկ երեկոյան՝ սովորում համալսարանում: Մենք չորս ժամ աշխատում ենք, ապա՝ ընդմիջում անում: Ալվարդն արդեն աշխատում է, ինչպես նաև սովորում համալսարանի երեկոյան բաժնում:*

Հակադրական և հաջորդման հարաբերության դեպքում ստորոգյալի մասնակի զեղչումն արտահայտվում է բութով. *Ծիծեռնակները աշնանը չվում են տաք երկրներ, գարնանը՝ վերադառնում իրենց բները:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2

Բազմակի բացահայտիչի հետ չպետք է շփոթել կրկնակի բացահայտիչը. *Աշոտը՝* ***Սուրենի տղան՝ իմ ամենամոտ ընկերը****, դարձել է նախարար: Արարատյան դաշտում՝* ***Արաքսի ափին՝ մի ընդարձակ եղեգնուտի հարևանությամբ*** *է մեր խաղողի այգին:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3

Բազմակի անդամներից տարբեր են կրկնվող անդամները. ***Սոնան, Սոնան*** *է իմ երազների թագուհին: Արև՛, արև՛,* ***եկ, եկ****: Ամառային մի* ***օր*** *էր, շոգ ու ձանձրալի մի* ***օր****: Ասես գարունը* ***ձյուն*** *էր թափել ծառերի վրա, գունավոր և հոտավետ փաթիլներով* ***ձյուն****:* ***Կանչում է*** *կրկին,* ***կանչում*** *անդադար Էն չքնաղ երկրի կարոտը անքուն, Ու թևերն ահա փռած փիրաբար՝* ***Թռչում է*** *հոգիս,* ***թռչում*** *դեպի փուն:*

Բազմակի անդամներն իրար նկատմամբ սովորաբար լինում են **համադաս**: Սակայն բազմակի լրացումները կարող են լինել նաև **տարադաս**:

Համադաս են այն բազմակի անդամները, որոնք կարող են կապակցվել համադասական շաղկապներով և կամ տրոհվել ստորակետով:

Տուն գալիս հեծդ կբերես ***կարագ և պանիր****: Նույն նվերը ստացան* ***թե՛ տղաները, թե՛ աղջիկները****:* ***Ձեռքերս, ոտքերս*** *սառել են:*

Բազմակի համադաս անդամները միմյանցից չեն տրոհվում, եթե միացած են **և, ու, կամ, թե** շաղկապներով. ***Դեղինն ու կանաչը*** *իմ սիրած գույներն են: Թեյը կպատրաստես* ***ուրցով կամ դաղձով****:* ***Տղա թե աղջիկ*** *հիացած են քեզնով:*

Մնացած դեպքերում՝ առանց շաղկապի կամ համադասական այլ շաղկապներով կապակցվելիս, բազմակի համադաս անդամները միմյանցից տրոհվում են. *Ընկերուհիս* ***և՛ բարձրահասակ է, և՛ գեղեցիկ****: Մեր պարտեզում աճում են* ***դեղին, կարմիր, կապույտ*** *և մանուշակագույն ծաղիկներ:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կրկնվող ենթակայով համադաս նախադասությունները միացնող և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ է դրվում, քանի որ կրկնվող ենթական ընդհանուր ենթակա չէ. ***Լևոնը*** *հաղթում է ցանկացած մրցակցի, և հետևաբար անպարտելի է* ***Լևոնը****:*

Տարադաս են այն բազմակի լրացումները, որոնք չեն կարող միանալ համադասական շաղկապով կամ իրարից տրոհվել ստորակետով:

Ամենից հաճախ հանդիպում են տարադաս բազմակի որոշիչներ: Դրանք առանձնահատուկ են նրանով, որ ունենում են իրարից տարբեր արտահայտություններ: Դրանցից մեկը արտահայտված է լինում կա՛մ որակական ածականով, կա՛մ հարաբերական ածականով, կա՛մ դերբայով, կա՛մ թվականով, կա՛մ

գոյականով, կամ դերանունով և այլն, իսկ մյուսը դրսևորվում է այդ հնարավոր արտահայտություններից մեկ ուրիշով (տես նաև «Որոշիչ» հատվածը). ***Երկար մազերով բարձրահասակ*** *աղջիկը ձեռքին ուներ* ***մի մետաղե կարմիր*** *գրիչ: Տանտիրուհին թափեց* ***կաղամբի հնացած*** *աղցանը:*

Տարադաս կարող են լինել նաև որոշ բազմակի պարագաներ (տեղի, ժամանակի, ձևի, չափի): Դրանք սովորաբար ունենում են միմյանցից տարբեր արտահայտություններ, հաճախ էլ ստորոգյալի նկատմամբ գրավում են տարբեր դիրքեր (նախադաս և հետադաս) և պատասխանում տարբեր հարցերի. *Մարդիկ* ***փողոցներից դեպի բակերն*** *էին քշում ոչխարի հոտը: Ցուցարարները* ***Մաշտոցի պողոտայով*** *քայլում էին* ***դեպի Մատենադարան****: Մայրիկը* ***երգելով արագ–արագ*** *ճաշի պատրաստություն էր տեսնում:* ***Վաղը արդեն*** *ո՛չ քամի կլինի, ո՛չ անձրև: Հերթական փոթորիկից քաղաքը* ***դարձյալ հիմնովին*** *ավերվեց:*

Վարժություններ

1. Ընդգծեք նախադասության բազմակի անդամները: Որոշեք դրանց բնույթը:

1) Այդ միտքն էր նրան զայրացրել, թե՞ հոգնությունը:
2) Արևի մայր մտնելու հետ փակում էին տների և պարտեզների փոքր դռնակները:
3) Արսենի աշխարհն ավելի հետաքրքիր է, ավելի խոր:
4) Թող բարի լույս բացվի մեզ վրա և մեզ նման չարքաշ մշակների վրա...

2. Կետադրեք նախադասությունները և ընդգծեք տրոհվող բազմակի անդամները:

1) Նա ճրագի լույսով տեսավ և գորգը և տորքի առաջ նստած աղջկան:
2) Մեզ վրա ծիծաղում են ոչ միայն ուսանողները այլև մնացած ամբոխը:
3) Ուրիշ շատ զգացումներ են զարթնում իմ սրտում, ջերմ ու թախծոտ զգացումներ:
4) Պատի տակ առուն էր երեսը բաց ջուրը սառը:
5) Այդ պահին քաղաքի ամենահետաքրքիր անկյունները ոչ զանազան խանութներն էին ոչ պետական հիմնարկները ոչ էլ շուկան:

ԵՐԵՎԱՆԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔ

1933 թ. Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ բացվեց Երևանի օպերային թատրոնը, որ 1939–ից կոչվում է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոն (1956–ից՝ ակադեմիական): Նրա ստեղծագործական գլուխգործոցները դարձան «Ալմաստ» և «Անուշ» (1935 թ.) օպերաների, «Գայանե» և «Սպարտակ» բալետների բեմադրությունները:

Երևանի գլխավոր հատակագծի համաձայն՝ այդ թատրոնի համար շենք է նախատեսվել քաղաքի հյուսիս–հարավ առանցքի վրա՝ Հյուսիսային պողոտայի գլխամասում, որտեղ էր Գեթսեմանի մատուռը: Այսօր թատրոնի ճեմասրահում կանգնեցված է խաչքար՝ ի հիշատակ Գեթսեմանի մատուռի:

Թատրոնի շենքը նախագծվել է 1926–1936 թթ.՝ որպես ժողովրդական տան համալիրի թատրոն (ճարտարապետ՝ Ալ. Թամանյան): Շենքի հանդիսավոր հիմնադրումը կայացել է 1930–ի նոյեմբերի 28–ին: Ալ. Թամանյանի նախագծի հիմնական գաղափարը մեկ շենքի մեջ երկու փոխկապակցված դահլիճ միավորելն էր: 1939–ին ավարտվեց կառույցի ձմեռային թատրոնի հատվածը, իսկ 1953–ին՝ ամառայինը, որը 1963–ին վերափոխվեց համերգասրահի (1972–ից՝ Արամ Խաչատրյանի անվան): Շենքում առաջին ներկայացումը եղել է Ալ. Սպենդիարյանի նույն «Ալմաստ» օպերան (1940 թ.): 1992–ին բացվել է Միքայել Թավրիզյանի անվան «Հայելապատ սրահը», որտեղ ներկայացվում են օպերային բեմադրություններ, կազմակերպվում համերգներ:

Թատրոնի շենքի նախագիծը 1937–ին Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում Ոսկե մեծ մրցանակի է արժանացել: Շենքին կից Ազատության հրապարակում տեղադրված են Ալեքսանդր Սպենդիարյանի և Հովհաննես Թումանյանի արձանները, շենքի հակառակ կողմում՝ Արամ Խաչատրյանի արձանը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Երևանի օպերային թատրոնի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Երևանի օպերային թատրոնի շենք» գրվածքում գտի՛ր նախադասության բազմակի անդամներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 25

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Նախադասության կազմում կամ նրան կից լինում են նաև բառեր ու կապակցություններ, որոնք նախադասության անդամներ չեն:

Դրանք են **սպասարկու բառերը** և **ներդրյալ միավորները**:

ՍՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐ

Սրանք նախադասության անդամները, ինչպես նաև նախադասությունները կապակցող հատուկ բառերն են:

Լինում են երկու տեսակի՝ **կապեր** և **շաղկապներ**:

Վարժություններ

1. Ընդգծեք նախադասության սպասարկու բառերը և որոշեք դրանց բնույթը:

1) Զորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում, թպրտում հուսահատ և անմռունչ պառկում սև գուբի մեջ:
2) Լևոնը հիշեց երեկվա նիստը, սակայն միտքը թռավ հետ՝ դեպի քաղաքացիական կռիվների տարին:
3) Քնելուց առաջ մայրը մի անգամ էլ գնաց երեխաների սենյակ:
4) Եթե մենք լուսնի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք արևի լույսից:

ՆԵՐԴՐՅԱԼ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Սրանք բառեր, կապակցություններ, երբեմն էլ նախադասություններ են, որոնք տվյալ նախադասության ու նրա անդամների հետ քերականորեն չեն կապվում, սակայն նախադասության հաղորդած մտքին տալիս են լրացուցիչ նրբերանգ, հուզական կամ դատողական վերաբերմունք, տեղեկություն, բացատրություն, արտահայտում են հավելյալ միտք:

Ներդրյալ միավորներ են **միջարկումը, միջանկյալ միավորը, կոչականը:**

ՄԻՋԱՐԿՈՒՄ

Միջարկումն արտահայտում է լրացուցիչ տեղեկություն, միտք և նախադասությունից անջատվում է ստորակետերով կամ փակագծերով. *«Հաղթարշավ» ՍՊԸ–ն,* ***այդպես է մեր ձեռնարկության անունը****, արտադրում է բյուրեղապակե սափորներ:* ***Աղմուկ*** *բառի առաջին հնչյունն է* ***ա****–ն* ***(ձայնավոր)****, վերջինը՝ կ–ն* ***(խուլ բաղաձայն)****: Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չպիտի գար* ***(լսել էր, որ նա հիվանդ է)****, Ավին գերադաս համարեց մի շալակ ցախ տանել տուն:*

Միջարկումը սովորաբար միջադասվում է նախադասությանը, երբեմն լինում է վերջադաս դիրքում, իսկ առաջադաս դիրքը նրան բնորոշ չէ:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻԱՎՈՐ

Միջանկյալ միավորը (բառը, բառակապակցությունը) արտահայտում է դատողական կամ հուզական վերաբերմունք: Միջանկյալ միավոր լինում են վերաբերականը, ձայնարկությունը կամ դրանց արժեքով կիրառված այլ բառեր ու կապակցություններ:

ԿՈՉԱԿԱՆ

Կոչականը ցույց է տալիս, թե ում կամ ինչին է ուղղված խոսքը. *Հիշում եմ դեմքը քո ծեր,* ***մայր իմ անուշ ու անգին****:* ***Պարո՛ն Արամյան****, Ձեզ կանչում են հեռախոսի մոտ:* ***Գայանե՛****, ուշադի՛ր լսիր ինձ:*

Կարող է լինել բառ կամ անվանական բառակապակցություն: Գերադաս անդամը ուղղական հոլովով գոյական է կամ գոյականաբար առնված այլ բառ: Որոշիչ հոդ չի ստանում, բայց կարող է լինել ստացական հոդով. *Շնորհավորում եմ,* ***սիրելի՛ս****, ծննդյանդ տարեդարձի առթիվ:*

Նախադասությունից անջատվում է ստորակետ(եր)ով: Ունենում է շեշտ կամ բացականչական նշան, երբեմն՝ հարցական նշան, որ դրվում է գերադաս անդամի վրա. ***Մայրի՛կ ջան****, ես քեզ շատ եմ կարոտել:* ***Կարե՞ն****, քեզ ի՞նչ պատահեց:* ***Լեռնե՛ր հայրենի****, կարոտել եմ ձեզ:*

Կոչականի գերադաս անդամի նախադաս լրացումը (բացի դերանունից) մեծ մասամբ իր վրա է վերցնում շեշտը կամ բացականչական նշանը. ***Սիրո՛ւն թիթեռ****, ինձ ասա՛, թե ինչով ես դու սնվում:* ***Մեծարգո՛ պարոն Խաչատրյան****, ընդունե՛ք անկեղծ շնորհավորանքներս:*

Բազմակի կոչականները կամ կոչականի նախադաս բազմակի լրացումները շեշտ են ստանում առանձին–առանձին, եթե նույնիսկ շաղկապով են միացած. *Էհ, մնաք բարով,* ***Աստվա՛ծ և արև՛...*** ***Հավիտենակա՛ն և աննման Լիլիթ****, դու չճաշակված գաղտնիքն ես...*

Կոչականի կազմում կարող են լինել նրանից չտրոհվող ձայնարկություններ, որոնք սովորաբար իրենց վրա են վերցնում կոչականի շեշտը կամ բացականչական նշանը՝ կոչականի հետ միասին կազմելով մեկ ծավալուն միավոր. ***Ա՛յ տղա****, քեզ կարգի՛ն պահիր:* ***Ջա՛ն իմ հայրենիք****, քեզ շատ եմ սիրում:*

Ձայնարկությունը կարող է նաև կոչականի կազմում չլինել, նրանից անջատվել ստորակետով և չվերցնել նրա շեշտը կամ բացականչական նշանը. ***Էյ****, փոքրի՛կ, կրակից հեռո՛ւ մնա:* ***Վա՛յ****, Հասմի՛կ ջան, քիչ էր մնում՝ չճանաչեի:*

Վարժություններ

2. Կետադրե՛ք նախադասությունները և ընդգծե՛ք կոչականները:

1) Ադամ քո բոլոր օրերի մեջ հետևիր Լիլիթին և դու, Լիլիթ հնազանդ եղիր Ադամին:
2) Աստված օրհնի քո ճանապարհը և քո բռնած գործը որդիս:
3) Ինչու չես ժպտում Սեդա իմ գեղանուշ:
4) Լսիր հոգիս ես գիտեմ դրախտում այնպիսի վայրեր որտեղ ստեղծողն անգամ տակավին ոտք չի դրել:
5) Կռվում եք թե արդեն հաշտվում այ տղա դանդաղ մոտ գալով կանչեց Սիմոնը:

3. Կետադրե՛ք նախադասությունները և ընդգծե՛ք տրոհվող ներդրյալ միավորները:

1) Օ ինչքան երեխա ենք մենք ինչ թանկ է մեզ համար սիրելի մարդու մի հայացքը:
2) Չէ երիտասարդ պարոն ափսոս եք շատ ափսոս...
3) Իհարկե շատ քչերը գիտեին թե ինչ դառնությամբ է նա անցկացրել մանկությունը:
4) Փառք քեզ Տեր մելամաղձոտ ասաց ալեհեր զինվորը:
5) Մեր դասարանի Գևորգը հիշում ես նրան հայտնի բռնցքամարտիկ է դարձել:

ԱՐՄԱՎԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի Հայկական դյուղի մերձակա բլրի գագաթին պահպանվել են Արմավիր քաղաքի բաց կապտավուն, հղկված բազալտից պարիսպները, պալատների, տաճարների և այլ շինությունների հիմքերն ու հետքերը:

Ըստ Մովսես Խորենացու՝ Արմավիրը մ.թ.ա. 1032–ին հիմնադրել է Հայկ Նահապետի թոռ Արամայիսը Արաքս գետի ձախ ափին: Արգիշտի թագավորի սեպագիր արձանագրությունը Արմավիրի հարևանությամբ հիշատակում է Արգիշտիխինիլի քաղաքը (մ.թ.ա. 776 թ.), որը կառուցվել, ընդարձակվել ու բարեկարգվել է շուրջ 200 տարի և ռազմական, վարչական, տնտեսական, մշակութային ու հոգևոր նշանավոր կենտրոն էր: Հետագայում այդ քաղաքը ձուլվել է Արմավիրին:

Մ.թ.ա. 331–ին Արմավիրը դարձել է Երվանդունիների մայրաքաղաքը: Դա նաև քրմապետի նստավայրն էր:

1985–ին՝ պեղումների ժամանակ, Արմավիրում հայտնաբերվել է էլամերեն երեք սեպագիր սալիկ. դրանք հանրահայտ «Գիլգամեշ» վիպերգից հատվածներ են: Ենթադրվում է, որ վիպերգը Արմավիրում բեմադրվել է մ.թ.ա. 760 թ. Սարդուր Բ–ի գահակալման և ամուսնական հանդեսների ժամանակ: Այսպիսով Հայաստանում թատրոնը սկզբնավորվել է ոչ թե Արտաշատում, այլ Արմավիրում: Վերջինս հաստատում են նաև Արմավիրի հունարեն արձանագրությունները, որոնցից մեկը մ.թ.ա. 7–րդ դարի հույն գրող Հեսիոդոսի «Գործեր և օրեր» երկին առնչվող հատված է:

Երվանդ Վերջին թագավորի (մ.թ.ա. 220–201 թթ.) կարգադրությամբ մայրաքաղաքը տեղափոխել է Երվանդաշատ:

Արմավիրն անբնակ է դարձել 13–րդ դարում՝ մոնղոլական արշավանքների հետևանքով:

1848 թ. հյուսիսային Կովկասի հայերը Կուբան գետի ափին նոր քաղաք հիմնեցին և կոչեցին Արմավիր:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Արմավիրի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Արմավիր» գրվածքում գտի՛ր նախադասության սպասարկու բառներ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 26

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Միակազմ է կոչվում մեկ գլխավոր (գերադաս) անդամ ունեցող նախադասությունը:

Այդ գլխավոր անդամը կարող է արտահայտված լինել դիմավոր բայով կամ այլ բառով: Ըստ այդմ՝ միակազմ նախադասությունները լինում են երկու տեսակի՝ **անենթակա** և **անդեմ**:

ԱՆԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անենթակա է այն միակազմ նախադասությունը, որի գերադաս անդամը դիմավոր բայ (ստորոգյալ) է, որը, սակայն, ենթակա չունի և չի կարող ունենալ:

Արտահայտում է.

- ընդհանրական դատողություն. *Երկաթը տաք–տաք կծեծեն: Յոթ չափիր, մեկ կտրիր: Ապշում ես, երբ հանդիպում ես այդպիսի անտարբերության: Ձենքի հետ խաղ կանեն:* Սրանք հաճախ առածներ, ասացվածքներ են:
- բոլորին ուղղված հորդոր. *Այստեղ չեն ծխում: Մի՛ շնանա: Պահպանենք մեր ավանդական մշակույթը:* Սրանք կոչեր, կարգախոսներ, խրատներ, վարքականոններ են:
- վիճակը կրողի անորոշություն. *Ձեր տանը շատ հաճելի է: Արդեն ուշ է: Անձրևում է: Մթնելու վրա է:* Սրանք հաճախ նշում են բնության երևույթներին վերաբերող եղելություններ:
- գործողությունը կատարողի անորոշություն. *Ինձ հրավիրել են գրքի շնորհանդեսի: Այդ մասին շատ է խոսվել:*

ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անդեմ է դիմավոր բայ չունեցող նախադասությունը, որի գերադաս անդամը արտահայտված է անդեմ բայով կամ այլ խոսքի մասով:

Լինում է երկու տեսակի՝ **բայական** և **անվանական**:

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բայական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը անորոշ դերբայ է:

Արտահայտում է՝

- կոչ, պահանջ, կարգադրություն, հրաման. *Չծխել: Լողափը չաղտոտել:*
- ցանկություն. *Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ. Խավարում, ցավերում քարանալ Մեն միայն...*
- հարցում. *Լինե՞լ, թե՞ չլինել: Ի՞նչ անել:*
- տեղեկացման հնարավորություն. *Ում դիմել հոգեբանական խնդիրներ ունենալու դեպքում: Ինչպես վարվել մարմնական վնասվածք ստացած անձի հետ:*

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով:

Արտահայտում է՝

- առարկայի և նրա որոշ հատկանիշերի գոյության փաստը՝ հուզական երանգավորմամբ. *Լռությ՛ուն, լռությ՛ուն, լռությ՛ուն անսահման: Անձրև, քամի, սև կամար... Սրտակտուր հեկեկանք: Երևան: Ասֆալտյան փողոց: Որքա՜ն քնքշություն: Ի՜նչ անամոթություն:*
- չեզոք տեղեկություն. *Ելք դեպի քաղաք: Ընդմիջում: Մեջբերման ավարտը: Ֆիլմի վերջը: Հանգստի գոտի: Առաջին մասնաշենք:*
- հրաման, պահանջ, թելադրանք. *Վե՛ր ջ աղմուկին: Կրա՛կ: Զգա՛ստ: Մեկնարկի՛: Ուշադրությ՛ուն: Առա՛ջ: Իմ հետևի՛ց: Ո՛չ մի ծպտուն:*
- խնդրանք. *Օգնությ՛ուն: Ջո՛ւր, ջո՛ւր:*
- մաղթանք, ցանկություն, երախտագիտություն. *Բարի գիշեր: Ողջո՛ւյն: Օրհնությ՛ուն քեզ, երգ, և երա՛զ, և սեր: Ցտեսությ՛ուն, սիրելի՛ս: Շնորհակալությ՛ուն, պարո՛ն:*
- անվանում, վերնագիր. *Սև ցելերի սերմնացանը: Հայրենիքի ձայն*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ. ***Վա՛յ*** *մեզ՝ մոլորյալներիս:* ***Ո՛չ*** *ինքնակոչ նախագահին:* ***Ա՛յ*** *քեզ բան...* ***Ահա*** *և ես:* ***Ահավասիկ*** *իմ ներդրումը:* ***Ափսո՜ս, հազա՛ր ափսոս*** *մեր Թլոլ Դավթին:* ***Ավա՛ղ*** *փառացս անցավորի:*

Վարժություններ

1. Նշե՛ք անենթակա նախադասությունները:

1) Ահա և Օհան ապոր այգու դռնակը:
2) Շուտով բոլորովին կմթնի:
3) Ցտեսությո՛ւն, ընկե՛ր Լևոն...
4) Չնչին բանի համար ի՞նչ խիստ են պատժում ձեր հայրենիքում:
5) Տասնութ: Թվական կյանքի: Իրիկուն: Վերադարձ: Առավոտ:

2. Նշե՛ք անվանական անդեմ նախադասությունները:

1) Ի՜նչ հրաշալի տեսարան, ինչպիսի՜ մաքուր օդ. իսկական դրախտ...
2) Վերջինը դուրս գալու դեպքում դուռը կողպել:
3) Դարձյալ այս նույն փողոցը, նույն այգին, նույն անվերջ թախիծը...
4) Խոտը չտրորել և ծաղիկներ չպոկել:
5) Ոչ մի երկաթյա դուռ և ոչ մի պահակ աշտարակի գլխին:

3. Նշե՛ք բայական անդեմ նախադասությունները:

1) Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարների խոսքը:
2) Ողջո՛ւյն քեզ, տանջա՛նք, ահե՛ղ հիացում...
3) Սովորել, սովորել, սովորել:
4) Թքա՛ծ ամեն ինչի վրա:
5) Ա՛յ քեզ խայտառակություն...
6) Անցած լինի:

ԱՍՏՂԻԿ ԱՍՏՎԱԾՈՒՀԻ

Աստղիկը հայոց ջրի, սիրո, գեղեցկության և պտղաբերության աստվածուհին էր, որի պաշտամունքը կապված էր Արուսյակ (Վեներա) մոլորակի հետ: Աշտիշատում նրա տաճարը կոչվում էր «Վահագնի սենյակ», ուր Աստղիկը հանդիպում էր իր սիրեցյալ Վահագնին: Աստղիկի և Վահագնի ամուսնությունը համարվում էր սրբազան. այդ ամուսնության հետևանքով անձրև էր տեղում երկրի վրա, ծաղկեցնում երկիրը, բերք ու բարիք տալիս մարդկանց:

Ավանդության համաձայն՝ Աստղիկը ծնվել է ծովի ճերմակաթույր փրփուրներից և բնակվել է Տարոնի Ասղնբերդում, որի տանիքում բույն դրած ծիծեռնակները՝ որպես սուրհանդակներ, լուր էին տանում աստվածուհու սիրեցյալ Վահագն աստծուն:

Աստղիկին պատկերում էին մերկ, չքնաղ գեղեցկուհու տեսքով, հաճախ՝ լողանալիս:

Բացի Աշտիշատից՝ Աստղիկին նվիրված տաճարներ կային Վանա լճի առափնյա Արտամետ ավանում, Անձևացյաց գավառում, Արտաշատում և այլուր: Աստղիկին նվիրում էին վարդեր և աղավնիներ, որոնք սուրբ էին համարվում: Վարդեր նվիրելու սովորությունից էլ ըստ երևույթին առաջացել է Աստղիկի Վարդամատն (վարդե մատներ ունեցող) մականունը: Նրան անվանել են նաև Ոսկեծղի, Ոսկեբազուկ: Նա սեր էր սփռում Հայոց աշխարհում՝ վարդաջուր ցողելով:

Աստղիկի տոնը կատարում էին ամառվա կեսերին համաժողովրդական մեծ հանդիսություններով ու արարողություններով: Այդ տոնը կոչվում էր Վարդավառ: Դրա ընթացքում Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավնիներ թռցնում, իրար վրա ջուր էին ցողում, ուրախանում: Այժմ Վարդավառը Հայ եկեղեցու տաղավար տոներից է և նշվում է որպես Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոն:

Աստղիկ դիցուհու անունն է կրում հայկյան տոմարի յուրաքանչյուր ամսվա յոթերորդ օրը:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Աստղիկ աստվածուհու մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Աստղիկ աստվածուհի» գրվածքում գտի՛ր միակազմ նախադասություններ և որոշի՛ր դրանց տեսակը:

ԴԱՍ 27

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ է երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված նախադասությունը:

Իմ կյանքը մի նուրբ մշուշ է այստեղ, Գուրգուրում է ինձ մի լույս–հանգրվան...

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում, Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում, Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ, Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ...

Ի տարբերություն միջանկյալ նախադասություն ունեցող պարզ նախադասության՝ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները քերականորեն կապակցված են համադասական կամ ստորադասական հարաբերությամբ: Այդ հատկանիշով էլ որոշվում են բարդ նախադասության տարատեսակները:

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Համադասական է այն բարդ նախադասությունը, որը կազմված է իրար համադաս բաղադրիչ նախադասություններից:

Դրանցից որևէ մեկը մյուս նախադասության որևէ անդամի դերը չի կատարում, այսինքն՝ քերականորեն կախված չէ մյուս նախադասությունից: Այդպիսի բաղադրիչները կոչվում են համադաս նախադասություններ. *Գրիգորը հետ նայեց. կածանով բարձրանում էր Սանասարը: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ:*

Համադաս բաղադրիչ նախադասությունների թիվը կարող է լինել երկուսը կամ ավելին. *Տո՛, դու իսկական կեռկտուց չաչանակ ես եղել, ես չեմ իմացել: Եր նայեց, աչքերը զարմանքից լայնացան, և հրացանը բնազդմամբ վայր սահեց ծառի հետևը: Հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի*

մեջտեղը, նրան հետևեց երկրորդը, երրորդը, և շուտով նրանց երկու շարքերը զարնվեցին իրար ձեռքերով, ծնկներով և կրծքով:

Համադաս նախադասությունները (կամ դրանցից մեկը) կարող են լինել նաև միակազմ. *Մահացողի տխուր կյանք. Անձրև, քամի, սև կամար... Մեկը, իմ սիրտը փշրելով, անցավ. Օ՜, քաղցր արբանք:*

Երկկազմ համադաս նախադասություններն ունենում են տարբեր ստորոգյալներ, որոնցից ամեն մեկը կարող է ունենալ իր ենթական(երը) և լրացում(ներ)ը. *Լույսն էր մեռնում, օրը՝ մթնում, Միտը տնից տուն էր մտնում:*

Այսպիսի կառույցը կոչվում է **տարբեր ենթականներով** բարդ համադասական նախադասություն: Դրա մի տարատեսակն է **կրկնվող ենթակայով** բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներից ամեն մեկն ունի իր ենթական՝ միևնույն արտահայտությամբ և միևնույն բովանդակությամբ. ***Մեկը*** *շշուկով պատմում է կամաց,* ***Մեկը*** *իմ հոգին տանջում է համառ:*

Եթե կրկնվող ենթական «ընդհանուր է հանված», այսինքն՝ արտահայտված է բաղադրիչ նախադասություններից միայն մեկում և զեղչված է մյուս(ներ)ում կամ էլ զեղչված է բոլորում, ապա այդպիսի բարդ նախադասությունը կոչվում է **ընդհանուր ենթակայով** բարդ համադասական նախադասություն. *Հեռավոր մարդոց ցավերը կզգամ, Կարկաչող ջրի լացը կլսեմ... Շողերը թե՛ զրուցում էր մեզ հետ և թե՛ շարունակում էր ձեռագործը:*

ՀԱՄԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ

Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կարող են կապակցվել՝

- համադասական շաղկապով. *Աղջիկները գաղտագողի հայացքով ուղեկցում էին նրան,* ***իսկ*** *ավելի համարձակները ժպտում էին: Սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կղղում,* ***և*** *ոչ լոր էր ճկում:*
- միայն հնչերանգով (շարահարությամբ). *Սրածայր թրերի պես շողշողում են ժանիքները, անշնորհք շարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրա:*

Կրկնադիր և զուգադիր շաղկապները լինում են համադաս նախադասությունների սկզբում՝ իրենցից առաջ թողնելով միայն համադաս նախադասությունների ընդհանուր անդամները. ***Գոռը առավոտյան*** *ոչ միայն մարզանք է անում, այլև սառը ցնցուղ է ընդունում:* ***Այս երեկո*** *ո՛չ ես դասերս սովորեցի, ո՛չ էլ դու գնացիր համերգ:*

Մենադիր շաղկապները սովորաբար լինում են համադաս նախադասությունների միջև. *Արդեն խշշում են բարդիների բարձր կատարները,* ***իսկ*** *ներքևի ճյուղերը խավարի մեջ դեռ անշարժ են:*

Սակայն **էլ, ևս, նաև** շաղկապները կարող են միջադասվել համադաս երկրորդ նախադասությանը. *Գլորվեցին փուփերը, փղան* ***էլ*** *գլորվեց: Ձիու վրա նա սպիտակ չէր հագնված, թևերն* ***էլ*** *մինչև արմունկը բաց չէին: Աղջիկները սարսափահար եղան, փղաները* ***ևս*** *մի լավ վախեցան: Նա քաջ փիրապետում էր հայերենին, լավ գիտեր* ***նաև*** *ռուսերեն ու անգլերեն:*

Շաղկապով միացած համադաս նախադասությունների միջև մեծ մասամբ ստորակետ է դրվում:

Անշաղկապ (միայն հնչերանգով միավորված) համադաս նախադասությունների միջև դրվում է ստորակետ կամ միջակետ:

Համադաս նախադասությունների շարադասությունը կայուն է, եթե նրանց միջև առկա է ժամանակային կամ պատճառահետևանքային հարաբերություն. *Խաղաղ գիշերով դու կգաս ինձ մոտ, Քնքուշ ձեռներդ ես կհամբուրեմ... Կռանում եմ տերևների վրա, ռունգերս լայնանում են սուսամբարի հաճելի հոտից:*

Այլ դեպքերում համադաս նախադասությունների շարադասությունը ազատ է, թեև կարող է ունենալ ոճական արժեք՝ ազդելով տրամաբանական շեշտի վրա. *Միթը հյուսում է տրտմության ժանյակ, Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում... Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում, Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան... Մոռացել եմ ես ամենքին, Միայն քեզ եմ ես հիշում...*

Վարժություններ

1. Կետադրե՛ք նախադասությունները և նշե՛ք տարբեր ենթականերով նախադասությունները:

1) Գիշեր է դառնում և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները:
2) Պաղատագին կոչեց Նվարդի քաղցր անունը և լսեց միայն իր ձայնի ունայն արձագանքը:
3) Դադրած եզները ննջում էին և լուսնի տակ նրանք նման էին մարմարե արձանների:
4) Մի տնից զուռնայի ձայն է լսում ձին քշում է այս ձայնի վրա գնում է ընկնում մի հարսանքատուն:

2. Կետադրե՛ք նախադասությունները և նշե՛ք կրկնվող ենթակայով նախադասությունները:

1) Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքից կաղ էր:
2) Քո լեզուն բոլոր սոխակների սիրատարփ երգերն ունի և բոլոր թռչունների ճռվողյունից անուշ է քո լեզուն:
3) Փոշի էր նստել լեռների վրա և չէին երևում իրենց բարձր լեռները:
4) Բոլոր անթերի շնորհների սափորն է քո մարմինը և անանման պարտեզն է քո մարմինը:

3. Կետադրե՛ք նախադասությունները և նշե՛ք ընդհանուր ենթակայով նախադասությունները:

1) Ադամը մեկ–մեկ նայեց անասուններին թռչուններին և զանազան բույսերին զարմացավ և փառաբանեց մեծ վարպետի անունը:
2) Ես նորից եմ թերթում իմ տետրը և սրտիս վրա իջնում է անդորր:
3) Աստված բռնեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը Լիլիթին:
4) Ադամը մոռացել էր ինքն իրեն և ոչինչ գոյություն չուներ այլևս նրա համար:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

XX դարի խոշորագույն նկարիչներից է, նորագույն շրջանի հայկական գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրը:

Նրա անեցի նախնիները գաղթել են Ղրիմ, որտեղից նրանց շառավիղները տեղափոխվել են Նոր Նախիջևան (այժմ՝ Դոնի Ռոստով): Այստեղ էլ 1880 թ. փետրվարի 4–ին (16) ծնվել է Մարտիրոսը: 1895–ին ավարտել է տեղի հայ–ռուսական հանրակրթական, 1903–ին՝ Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանները, կատարելագործվել Վալենտին Սերովի և Կոնստանտին Կորովինի դիմանկարի արվեստանոցում:

1901–ին առաջին անգամ եղել է Երևանում, Աշտարակում, Վաղարշապատում, Սևանում, 1902–ին՝ Անիում: Այդ և հետագա տարիներին ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմությունը, նիստուկացն ու մշակույթը, որը մեծապես նպաստել է նրա աշխարհայացքի ձևավորմանը:

Մեծ եղեռնի (1915 թ.) ժամանակ աշխատել է Մոսկվայի հայանպաստ կոմիտեում, մեկնել է Էջմիածին. Հովհաննես Թումանյանի, Գարեգին Հովսեփյանի և ուրիշների հետ ջանք չի խնայել համաճարակից փրկելու հայ գաղթականներին: Սակայն ծանր տպավորություններից հոգեկան ցնցում ստանալով՝ տեղափոխվել է Թիֆլիսի հիվանդանոց:

1921–ին Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով Սարյանն ընտանիքով տեղափոխվել է Երևան, նշանակվել նոր կազմակերպվող Հայաստանի պետական թանգարանի վարիչ, Հայաստանի հնությունների ու գեղարվեստի պահպանման կոմիտեի նախագահ, օգնել է Երևանի գեղարվեստի ուսումնարանի հիմնադրմանը: Հակոբ Կոջոյանի հետ ստեղծել է ՀԽՍՀ զինանշանը: 1945–1951–ին եղել է Հայաստանի նկարիչների միության նախագահը:

Հեղինակ է ավելի քան 3 հազար ստեղծագործության՝ դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ: Նաև բեմանկարիչ է ու գրքանկարիչ: Հրատարակել է «Գրառումներ իմ կյանքից» (1966 թ.) գիրքը: Վախճանվել է 1972 թ. մայիսի 5–ին Երևանում: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

Ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ, նրա երկերը ցուցադրվում են աշխարհի բազմաթիվ թանգարաններում, պատկերասրահներում, հավաքածուներում:

Նա գույնի մեծ վարպետ է: Ինքնատիպ գեղանկարչական լեզվով հայտնաբերել է գեղանկարչության ազգային ոճի վերակերտման ուղին, ազգային արվեստը բարձրացրել միջազգային մակարդակի. նրա ստեղծագործությունն իր արժանի տեղն ունի համաշխարհային արվեստի գանձարանում:

Արժանացել է Բրյուսելի միջազգային ցուցահանդեսի ոսկե մեդալի (1958 թ.) և ՀԽՍՀ Պետական մրցանակի (1965 թ.): ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի (1947 թ.) և ՀԽՍՀ ԳԱ (1956 թ.) ակադեմիկոս էր:

1955–ից Հալեպում (Սիրիա) գործում է «Սարյան ակադեմիան», 1967–ից Երևանում՝ տուն–թանգարանը: Նրա անունով Երևանում և Դոնի Ռոստովում կոչվել է փողոց, տեղադրվել է հուշարձան:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Մարտիրոս Սարյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Մարտիրոս Սարյան» գրվածքում գտի՛ր համադաս նախադասություններ և որոշի՛ր դրանց կապակցման եղանակը:

ԴԱՍ 28

ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ստորադասական է այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչ նախադասություններից մեկը կատարում է մյուսի որևէ անդամի դերը, այսինքն՝ քերականորեն կախված է մյուս նախադասությունից:

Այդպիսի հարաբերությամբ կապված բաղադրիչ նախադասություններից մեկը (ստորադասական նախադասությամբ արտահայտված լրացում ունեցողը) կոչվում է **գլխավոր** կամ գերադաս, մյուսը՝ **երկրորդական** կամ ստորադաս: Ընդ որում՝ երկրորդական (ստորադաս) նախադասությունը կարող է լինել գլխավորի (գերադասի) ենթական կամ ստորոգելին կամ էլ որևէ լրացում.

Ջուրը թափվում էր հսկա անիվի վրա, որ հագցված էր երկաթյա երկար ձողին: Մտածում էր, թե ինչ ասի: Թող լինի, ինչ լինելու է: Սա այն էր, ինչ ուզում էի: Եթե լռեիր, փիլիսոփա կլինեիր: Նստել էին, ով ինչպես ուզում էր:

Գլխավոր նախադասությունը կարող է լինել միակազմ.

***Ծխել միայն այնտեղ**, որտեղ թույլատրող ցուցանակ է փակցված:*

Երկրորդական նախադասությունը կարող է լինել կոչականի, վերաբերականի կամ էլ ձայնարկության լրացումը.

*Էյ, **տղա՛**, որ կանգնած ես վերջում, մոտեցի՛ր բեմահարթակին: **Ափսո՜ս**, որ քեզ ավելի շուտ չեմ հանդիպել: **Վա՛յ** նրան, ով նահանջի:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Կան երկրորդական (ստորադաս) նախադասություններ, որոնք լրացնում են ոչ թե գլխավորի մի անդամի, այլ գլխավորին ամբողջությամբ՝ որպես նրա մտքից բխող հետևանք. *Հիվանդը ծիծաղում ու սրախոսում էր, ինչը սփոփեց հարազատներին:* **Այդպիսին են համարվում նաև հետևանքի շաղկապներով** *(ուստի, ուրեմն, հետևաբար, այնպես որ)* **երկրորդականները.** *Ըստ լուրերի՝ պրուսացիք միացել են ռուսներին, **ուրեմն** լեհերի բանը վատ կլինի: Առանց այդ էլ հայրենիքում իրեն արդեն համարում են հերետիկոս, **ուստի** ինքը պետք է անարատ պահի իրեն և արդար հոգով վերադառնա հայրենիք:*

ԳԵՐԱԴԱՍ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները կապակցվում են՝

ա. ստորադասական շաղկապներով կամ դրանց դեր կատարող այլ բառերով՝ շաղկապական բառերով, ինչպես նաև հարաբերյալներով. *Սա* ***այն*** *չէ,* ***ինչ*** *ուզում էի: Չէր հիշում,* ***թե*** *ինչքան էր շրջել դրսում:*

բ. միայն հնչերանգով (շարահարությամբ), այսինքն՝

- առանց շաղկապի. *Վերջում հայտարարվեց. «Հաջորդ ժողովը՝ մեկ ամսից»: Մարզիչը հրահանգեց՝ սկսեցի՛նք:*
- շաղկապի զեղչումով. *[Եթե] Ծարավես՝ կխմես: Պատմի՛ր՝ [թե] ինչ ես լսել: Էն ի՞նչ էր՝ [որ] ֆշշաց...*

Հարաբերյալը գլխավոր նախադասության այն ձևական անդամն է, որի բովանդակությունն արտահայտված է երկրորդական նախադասությամբ: Հարաբերյալը նշում է ստորադաս նախադասության բնույթը: Նրա բացակայության դեպքում այդ դերը կատարում է հարաբերական դերանունը կամ շաղկապը:

Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալը պարտադիր չէ այն դեպքում, երբ հոլովով համաձայնեցված է հարաբերական բառի հետ, և վերջինս միայնակ էլ հուշում է ստորադաս նախադասության բնույթը. *Բարևեցինք (****նրանց****), ում ճանաչում էինք:*

Հարաբերյալը պարտադիր է, երբ՝

- իմաստով չի հարաբերակցվում կամ հոլովով չի համաձայնում հարաբերյալի հետ, և ինքն է հուշում ստորադաս նախադասության բնույթը. ***Այնքան*** *բացատրեց, որ հասկացա: Չբարևեցի* ***նրանց****, ումից նեղացած էի: Նեղացել էի* ***նրանցից****, ովքեր իրենց խոսքի տերը չեղան:*
- ստորադաս նախադասության և դրա անմիջական լրացյալի միջև կան այնպիսի բառեր, որոնք կարող են լրացյալ կարծվել. *Սա* ***այն*** *փղայի գիրքն է, որ երեկ կորել էր:*

Հարաբերյալը բացառվում է, եթե որոշիչ երկրորդական նախադասության որոշյալը՝

- անորոշ առումով է. *Ահա քեզ* ***նորություն****, որ կհեռաքրքրի ոչ միայն քեզ:*
- միակ հնարավորն է և երկրորդական նախադասությունից հեռացած չէ. *Նայի՛ր, ահա մոտենում է* ***հայրս****, որ հենց նոր ժամանեց Մոսկվայից:*

Վարժություններ

1. Ընդգծեք շաղկապական բառերը:

1) Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղում ադամանդի նման ջինջ լիճն էր:
2) Վերջին հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խմել էին, բարձրադիր տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը:
3) Նոր եկած ձյան բյուրեղիկներն այնպես էին կայծկլտում, ասես շողակնի բյուրավոր հատիկներ էին՝ սպիտակ սավանի վրա շաղ տված:

2. Ընդգծեք հարաբերյալները:

1) Նրա սաղարթն աղմկել է դեռ այն ժամանակ, երբ գետի ափերին չկային ո՛չ տաճարը, ո՛չ գրանիտե դղյակը:
2) Բոլորն այնպես էին նայում նրան, որ մատնում էին, թե այդ հետաքրքիր պատմողը հենց ինքը՝ քեռի Դավոն էր:
3) Որքան բարձրանում էին նրանք մինչև վեր՝ մինչև քաղաքի վերջը, այնքան լեռնանում էր ուրախությունը:

ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները շաղկապով կամ շաղկապական բառով կապակցվելու դեպքում մեծ մասամբ ունենում են ազատ շարադասություն: Ընդ որում՝ ստորադաս նախադասությունը գլխավորի համեմատ կարող է լինել առաջադաս, միջադաս կամ վերջադաս.

***Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում**, Իրիկնաժամին նստում եմ մենակ:*

*Իրիկնաժամին, **երբ վարդ ամպերի հրդեհն է դողում**, նստում եմ մենակ:*

*Իրիկնաժամին նստում եմ մենակ, **երբ վարդ ամպերի հրդեհն է դողում**:*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Երբեմն հանդիպում են շրջադաս (գլխավորին շրջապատող) երկրորդական նախադասություններ, այսինքն, երբ գլխավորն է միջադասված երկրորդականին. Բայց մենք, արդեն երեք օր է, (ինչ) իրեն ենք փնտրում: Երգերիս մեջ, դու գիտե՞ս, (որ) ինձ ոչ ոք չի ճանաչում:

Կան դեպքեր, երբ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների շարադասությունը կայուն է կամ մասամբ սահ-

մանափակված է. ***Ինչպես դեղնած տերևները փարվում են ոտքերիս և խշխշում***, *այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում: Թվաց,* ***թե մեկը կանչում է տրտում****:*

Դա վերաբերում է հատկապես զեղչված շաղկապով նախադասություններին: Զեղչված շաղկապով (բացի **թե**–ից) կամ շաղկապական բառով նախադասությունները մեծ մասամբ ունեն կայուն շարադասություն.

- **եթե**–ի և **երբ**–ի զեղչումով ստորադաս նախադասությունները լինում են միայն առաջադաս. *(Եթե)* ***Ասփված եք****՝ փշրեցե՛ք նրանց բոլոր մոմերը: (Երբ)* ***Լույսը բացվի****՝ կգնանք:*
- **որ**–ի զեղչումով ստորադաս նախադասությունները լինում են միայն վերջադաս. *Չէի՞ր կամենա՝* ***հիմա երթայինք շրջեինք այն վայրերը****: Աղավնի՛, ծեծած աղ չունե՞ս՝* ***մի բուռ տաս****:*

Որոշիչ և բացահայտիչ երկրորդական նախադասությունները չեն կարող լինել առաջադաս, քանի որ պարտադիր հաջորդում են լրացյալին. *Մտրակը դառնում է սև օձ,* ***որ զարկում էր ձիու ողորկ մարմնին****: Հետո,* ***երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին****, Հազրոյի քոչը ելավ այս բարձր լեռը:*

Թե չէ շաղկապով երկրորդական նախադասությունը չի լինում վերջադաս. ***Մեկը գոռաց թե չէ****, ամբողջ տավարը հասկանում է՝ բանն ինչ է:*

ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐՈՀՈՒՄԸ

Երկրորդական նախադասությունը գլխավորից անջատվում է ստորակետ(եր)ով, եթե շաղկապի զեղչում չկա. *Երբ ես կամեցա ոսկե արևի շողերը գրկել, Մարդիկ նենգամիտ խոնավ նկուղում ինձ շղթայեցին:*

Շաղկապի զեղչման դեպքում առաջադաս կամ վերջադաս երկրորդական նախադասությունը գլխավորից սովորաբար անջատվում է բութով. *[Երբ] Կկակղես՝ կուտես: Կարծում էի՝ [թե] չես գա:* Միջադաս երկրորդական նախադասությունը գլխավորից անջատվում է սկզբից ստորակետով, վերջից՝ բութով. *Ամեն մարդ էլ, [եթե] շատ զայրանա՝ ի վերջո կպոռթկա:*

Վարժություններ

3. Ստորադաս նախադասությունները դարձրեք միջադաս:

1) Զինգործ Ոսկանը կես ոչխար է տարել, որովհետև երեկոյան նշանդրեք կա:

2) Ես էլ այդպես էի մտածում, թեև արդեն պատանի էի:
3) Մի՛ իջիր դրանց մակարդակին դու, որ ուսուցիչ ես:
4) Հերիքնազը կոչվում էր «Թևը կոտրած հրեշտակ», որովհետև քայլում էր ձախ ուսը մի քիչ բարձր:
5) Որովհետև գյուղը խիտ անտառների մեջ է, ճանապարհներից զուրկ, կեչառեցի երեխան աշխարհը անվերջ անտառ է կարծում:

4. Ստորադաս նախադասությունները դարձրեք առաջադաս:

1) Բոլորը գիտեին, որ դա ճիշտ է:
2) Ուրախանում էին, եթե լուրը բարի էր:
3) Անդրանիկը արագացնում է քայլերը, որպեսզի փրկվի վերահաս փոթորիկից:
4) Ներսեսը նիհարեց, որովհետև կինն այդ օրերին ո՛չ տոլմա էր եփում, ո՛չ կոլոլակ:
5) Քնել չեմ ուզում, թեև շատ եմ աշխատել...

5. Ստորադաս նախադասությունները դարձրեք վերջադաս:

1) Որովհետև աղանդավոր են եղել, հնում հալածել են նրանց և ենթարկել ծաղրի:
2) Մինչև արևը մայր մտներ, նրանք ավազանում լողում էին:
3) Թե որ քամին էր նրան շպրտել հեռու ձորի այն գյուղը, ես այդպես էլ չիմացա:
4) Եթե հագին շապիկ կար, ինչո՞ւ էր ուսը բաց:
5) Որպեսզի հասնեին հրապարակ, պիտի ճեղքեին վաճառականների և արհեստավորների պատնեշը:

ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ

ԽՈՒՍՏՈՒՓ ԼԵՌ

Խուստուփը լեռնագագաթ է Հայաստանի Հանրապետության հարավում՝ Սյունիքի մարզի արևելյան մասում՝ Կապան քաղաքից 10 կմ հարավ–արևմուտք՝ Խուստուփ–Կատարի լեռնաշղթայում, որը Մեղրու լեռների հյուսիսարևելյան ճյուղավորումն է: Բարձրությունը 3201 մ է: Լեռան ձյան հալոցքից առաջանում են հարյուրավոր աղբյուրներ ու գետակներ, որոնցից գոյանում է Վաչագան գետը: Հատկապես գագաթնամերձ լանջերը մասնատված են և մեծ մասամբ ծածկված են մերկացած ժայռերով, քարափներով ու քարաբեկորային կուտակումներով: Կան քարանձավներ: Տեղ–տեղ

հանդիպում են ալպյան մարգագետիններ: Հյուսիսարևելյան լանջերը անտառապատ են:

Խուստուփ լեռնազանգվածի անտառային և լեռնատափաստանային գոտու վերին հատվածում կազմակերպված է «Խուստուփ» պետական արգելավայրը, որ զբաղեցնում է 6947 հա տարածք:

Լեռան ստորոտում է Գեղանուշ գյուղը, որի Ս. Հռիփսիմե եկեղեցու բակում կան հեթանոսական վիշապաքարեր:

Խուստուփ լեռը ամբողջ Զանգեզուրում նախկինում հայտնի էր որպես սրբավայր: Վարդավառի տոնը ոչ մի գավառում այնպես շուքով ու պերճությամբ չէր նշվում, ինչպես այստեղ: Լեռան հարավարևմտյան հատվածի հարթ տարածությունը ստացել էր Մատաղի հրապարակ անունը: Նավասարդի օրերին այստեղ էին գալիս ոչ միայն մերձակա, այլև հեռավոր վայրերից: Լեռան ստորոտում կա քարայր–եկեղեցի՝ 15–20 մ բարձրությամբ:

Խուստուփ լեռան լանջին՝ 3070 մ բարձրության վրա է թաղված հայ մեծ զորավար Գարեգին Նժդեհը (Տեր–Հարությունյան, 1886–1955): Շիրիմին նրա ոսկեջրած կիսանդրին է (1990 թ.), որի պատվանդանին մակագրված են զորավարի խոսքերը. «Հայացքդ մի՛ կտրիր Խուստուփից: Որքան շատ նայես այդ սեգ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ»:

Մի խումբ նվիրյալ հայորդիների ջանքերով Նժդեհի աճյունը Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի գերեզմանատնից 1983–ին բերվեց հայրենիք: Դրանից հետո սկիզբ են առել ուխտագնացությունները մեծ հայի մասունքներին, որոնք վերաթաղված են Վայոց Ձորի Սպիտակավոր վանքի տարածքում, Խուստուփ լեռան լանջին և Կապանի՝ Գարեգին Նժդեհի հուշահամալիրում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Խուստուփ լեռան մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Խուստուփ լեռ» գրվածքում գտի՛ր բարդ ստորադասական նախադասություններ և որոշի՛ր դրանց բաղադրիչների կապակցման եղանակը:

ԴԱՍ 29

ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ

Այսպես է կոչվում տվյալ խոսքում մեջբերված մեկ այլ խոսքը:

Ամեն մի տվյալ խոսքի հեղինակ կարող է ոչ միայն արտահայտել իր մտքերն ու հույզերը, այլև մեջբերել խոսք, որ ասվել կամ մտածվել է նախկինում, կամ ենթադրվում է, որ կասվի կամ կմտածվի ապագայում: Հեղինակը կարող է մեջբերել թե՛ ուրիշի, թե՛ իր խոսքը: Այդ խոսքը կարող է լինել ցանկացած չափի՝ սկսած մեկ բառից:

Հեղինակն այդ խոսքը կարող է վերարտադրել նույնությամբ կամ պատմողաբար: Ըստ այդմ՝ մեջբերվող խոսքը լինում է **ուղղակի** կամ **անուղղակի**:

Երկու դեպքում էլ մեջբերվող խոսքը կցվում է հեղինակի խոսքին՝ սովորաբար իբրև նրա ծավալուն ուղիղ խնդիր:

ՈՒՂՂԱԿԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ

Մեջբերվող խոսքը ուղղակի է, եթե իր բնօրինակին համընկնում է բառացիորեն և հեղինակի խոսքին կցվում է շարահարությամբ՝ իբրև զգալիորեն ինքնուրույն միավոր:

Ուղղակի խոսքը կարող է հեղինակի խոսքից անջատվել՝

1) բութով.

Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի, Սիրտդ կճչա՝ ***արդյոք ո՞ւր ես, կա՞ս****:*

2) անջատման գծով.

Դարբնի տղան Սիմոնի ականջին շշնջաց.

— ***Տեսա՞ր, որ ասում էի՞****...*

3) չակերտներով.

*Աղքատը լսեց և ուրախացավ. «****Սա ինձ համար է ասված, և ահա շուտով կկատարեն իմ կամքը****»:*

Ընդ որում՝ հեղինակի խոսքը մեջբերվող խոսքի նկատմամբ կարող է լինել առաջադաս, միջադաս կամ վերջադաս: Հեղի-

նակի խոսքը կարող է նաև երկու (հազվադեպ՝ ավելի) հատվածների բաժանված լինել, որոնցից առաջինը սովորաբար լինում է առաջադաս, մյուսները՝ միջադաս և կամ վերջադաս.

Աղունը կանչեց դեպի կարծես թե խռով հարսը.

— Սուտ է ասում, աղջիկ ջան, դրանց փղերքը լավ փղերք են: — ***Եվ աննկատ հրելով Սիմոնին՝ Աղունը ցածրաձայն ասաց****, — իսկ որպես հայր՝ դու քո հայրական բարձրության վրա չես:*

Ուղղակի մեջբերվող խոսքը բութով տրոհվում է և սկսվում է փոքրատառով, եթե հեղինակի խոսքի նկատմամբ վերջադաս է և սովորաբար ոչ այնքան ծավալուն.

Մենք ուրախ բացականչեցինք՝ ***ինքնաթի՛ռ, ինքնաթի՛ռ****...*

Անջատման գծով և չակերտով սկսվող ուղղակի խոսքի դեպքում հեղինակի առաջադաս խոսքից հետո՝ մեջբերվող խոսքից առաջ, դրվում է միջակետ, իսկ մեջբերվող խոսքը սկսվում է մեծատառով: Ընդ որում՝

1) չակերտների մեջ առնված խոսքը, շարունակվում է նույն տողից.

*Ասփված, տեսնելով Ադամի մենակությունը, խոսեց ինքն իր հետ. «****Եկեք սրեղծենք Ադամի համար մի քնքուշ ընկեր, որ մարդը միայնակ չվայելե դրախտի հրապույրները****»:*

2) անջատման գծով սկսվող խոսքը գրվում է նոր տողից.

Շնչասպառ և դեռ չհասած աղբյուրին՝ հեռվից ձայն տվեց.

*— **Արմինե՛, բարի լո՛ւյս**:*

Հեղինակի միջադաս խոսքը մեջբերվող խոսքից անջատվում է սովորաբար ստորակետ–գծերով: Ընդ որում՝ չակերտներն այդ առիթով չեն փակվում–բացվում.

*«Ի՞նչ է պատահել Կարինեին,— **մտածում էր Արամը**.— երևի մխրճվել է հեռավոր պուրակների մեջ և մոլորվել»:*

Հեղինակի վերջադաս խոսքը ուղղակի մեջբերվող խոսքից անջատվում է ստորակետ–գծով, որից առաջ փակվում են չակերտները, եթե մեջբերվող խոսքը սկսվել է չակերտով.

*— **Ամոթ է**, — ասաց աղջիկը արդար ժպիտով:*

*«**Տեսնես ո՞վ է որս անում**», — մտածեց Ավետը:*

Անջատման գծով կետադրությունը նախընտրելի է, եթե ուղղակի մեջբերվում է հնչած (այլ ոչ թե գրված կամ մտքում ասված) խոսքը, և մանավանդ եթե այն ունի երկխոսության ձև.

Չակերտներով կետադրությունը պարտադիր է, եթե ուղղակի մեջբերվում է գրավոր կամ ներքին (մտքում ասված) խոսքը.

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ

Մեջբերվող խոսքն անուղղակի է, եթե վերապատմված է հեղինակի կողմից և հեղինակի խոսքի շարունակությունն է՝ որպես երկրորդական նախադասություն:

Անուղղակի խոսքը սովորաբար հաջորդում է հեղինակի խոսքին և նրան միանում է **որ** կամ **թե** շաղկապով: Վերջիններս կարող են և զեղչվել.

Եվ երբ պահակին հարցրեց, ***թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում բերդի ավերակներում****, պահակը նախ հանկարծակիի եկավ և ապա պատասխանեց,* ***որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին թաղված են ոսկե գանձեր****:*

Վարժություններ

1. Կետադրե՛ք նախադասությունները:

1) Լավ Ադամ սիրելիս փաղաքուշ ձայնով դիմեց Լիլիթը ինձ համար բռնիր այս թիթեռը:
2) Քեզ ինչ ուր եմ գնում ինչու ես հետևում ինձ Գոռի վրա բարկացավ Երազիկը:
3) Իմ ծանոթը պատմում էր որ հին սերնդից ոմանք հրաժարվում էին Ձյանբերդի հողերը հերկելուց:
4) Գնում եմ գնում ասաց Փառանձեմի ձայնը արդեն գնում էի երևացիր: Հիմա շարժվում եմ:
5) Ափսոս ասում է Նազարը ինչու սպանեցիք հազիվ մի ձի էի գտել ու հեծնել...

ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ

ԴՎԻՆ

Որպես արքայանիստ քաղաք՝ Դվինը հիմնադրվել է 4–րդ դարի 30–ականներին Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառում՝ Արտաշատից ոչ հեռու: Այդ ժամանակ հայոց Խոսրով Կոտակ թագավորը (332–338 թթ.) արքունիքն Արտաշատից տեղափոխել է այստեղ և Դվինը հայտարարել նոր մայրաքաղաք:

Քաղաքի տեղում բնակավայր է եղել դեռևս մ.թ.ա. 5–րդ հազարամյակում: Պահպանվել են մ.թ.ա. 2–րդ հազարամյակի կիկլոպյան պարիսպների հետքեր: Հայտնաբերվել են նախաքրիստոնեա-

կան կրոնական շինությունների մնացորդներ և առարկաներ:

Քանի որ տեղանքը շոգ էր և անտառազուրկ, Խոսրովը քաղաքի բնությունը բարելավելու համար հիմնել է անտառներ (Տաճար մայրու և Խոսրովակերտ)՝ դրանք դարձնելով արքայական որսատեղի: Այսօր էլ կան Խոսրովի անտառի մնացորդները:

Խոսրովի հաջորդները մի քանի դար շարունակել են մայրաքաղաքի կառուցապատումը:

Դվինը եղել է ժամանակի խոշորագույն քաղաքներից: Միջնաբերդն օղակված էր հզոր պարիսպներով, որոնց շուրջը կառուցված էր ստորին բերդը. դրանց միջև ընկած տարածքում բնակվում էին բարձրաշխարհիկ մարդիկ, պաշտոնյաներ ու զինվորականներ: Ստորին բերդի պարիսպներն ահռելի չափերի են եղել՝ 12–15 մ հաստությամբ և 15–20 մ բարձրությամբ, իսկ պարսպի չորս անկյուններում հզոր աշտարակներ էին: Յուրաքանչյուր 40 մետրի վրա կառուցված էին հսկա բուրգեր՝ ընդհանուր առմամբ 30–ից ավելի: Պարիսպներից դուրս եղել է 5–6 մ խորություն և 30–50 մ (տեղ–տեղ՝ 65–70 մ) լայնքով խրամ, որը լցվել է Ազատ գետի ջրերով: Բոլոր թաղամասերը շրջակա լեռներից կավե խողովակներով ջուր են ստացել:

Ծաղկման տարիներին քաղաքն ունեցել է 150 հազարից ավելի բնակչություն: Եղել է արհեստագործության զարգացած կենտրոն: Այստեղ արտադրվել և օտար երկրներ են արտահանվել բրդե ու մետաքսե գործվածքներ, գորգեր, բազմոցներ, հախճապակե առարկաներ, որդան կարմիր և այլն: Իսկ խեցեգործությունն ու բրուտագործությունն այնքան էին զարգացել, որ վարպետները պատրաստում էին նույնիսկ 1000 լիտր տարողության կարասներ:

Դվինը եղել է նաև Մարզպանական Հայաստանի (5–րդ դ. կեսերից), արաբական խալիֆության Արմինիա վարչամիավորման (7–9–րդ դդ.) մայրաքաղաքը:

Դվինը նոր տնտեսական վերելք է ապրել հայ Բագրատունի թագավորների օրոք (9–11–րդ դդ.): 1203–ին քաղաքն ազատագրել են Զաքարյան իշխանները:

Լիովին ավերվել է Ջալալ էդ Դինի 1255–ի արշավանքների ժամանակ: Այժմ նրա հողածածկ ավերակները փռված են Վերին Դվին, Ներքին Դվին, Բերդիկ, Հնաբերդ և այլ գյուղերի տարածքում:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Դվինի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Դվին» գրվածքում գտի՛ր կրավորական կառուցվածքով նախադասություններ և վերլուծի՛ր դրանք:

ԴԱՍ 30

ԶԵՂՉՈՒՄ

Նախադասության բաղադրիչների՝ անդամների և սպասարկու բառերի մի մասը (ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր, կապ, ստորադասական շաղկապ և այլն) անհրաժեշտ է քերականորեն կամ տրամաբանորեն, իսկ մյուսների առկայությունը կամայական է՝ կախված իրադրությունից և խոսողի ցանկությունից:

Սակայն անհրաժեշտ անդամներն ու սպասարկու բառերը նույնպես խոսքի մեջ կարող են բաց թողնվել, եթե՝

- ինքնըստինքյան հասկանալի են,
- հիշատակված են հարևան՝ նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ կամ նախընթաց խոսքում:

Այսպիսով՝ նախադասության անդամը կամ սպասարկու բառը կարելի է բաց թողնել, եթե մտքով կամ քերականորեն կռահելի և վերականգնելի է՝ *(**Դու**) Ասա՛ (**որ**) (**նա**) գա:*

Նախադասության անհրաժեշտ բաղադրիչի (անդամի կամ սպասարկու բառի) այն բացթողումը, որը մտքով կամ քերականորեն կռահելի և վերականգնելի է, կոչվում է զեղչում:

Ենթակայի և կամ ստորոգյալի զեղչում պարունակող նախադասությունը կոչվում է **թերի** նախադասություն:

ԵՆԹԱԿԱՅԻ ԶԵՂՉՈՒՄ

Ենթական սովորաբար զեղչվում է, եթե առաջին կամ երկրորդ դեմքի է, այսինքն՝ վերականգնելի է անձնական դերանվան **ես, դու, մենք, դուք** ձևերով: Այդ ձևերի կարիքը չի լինում, քանի որ ստորոգյալի դեմքը և թիվը լիովին փոխարինում են դրանց.

Քեզ համար մի հատ ականջավոր գլխարկ կբերեմ:

Զրույց եք անո՞ւմ:

Առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանունը չի զեղչվում միայն այն դեպքերում, երբ՝

- տրամաբանական շեշտ է կրում.

__Ես__ ցեխը կանեմ, իսկ __դու__ պատը կշարես:

- ստորոգյալը զեղչված է, հետևաբար չի արտահայտում ենթակայի դեմքն ու թիվը.

__Ես__՝ քեզ խրատ՝ հարսներիդ հետ լավ կլինես:

Երրորդ դեմքի ենթական էլ կարող է զեղչվել, եթե որևէ ձևով հիշատակված է նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ կամ նախընթաց խոսքում կամ էլ հայտնի է խոսքի մասնակիցներին.

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԶԵՂՉՈՒՄ

Ստորոգյալը զեղչվում է, եթե՝

- ինքնըստինքյան հասկանալի է և մոտավորապես վերականգնելի.

Հասկացողին՝ մեկ, չհասկացողին՝ հազար ու մեկ:

- նույն կամ տարբեր դեմքով ու թվով առկա է նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ.

Նա ութ հոդվածի __հեղինակ է__, ես՝ քսաներկու:

«Ո՞ւր __եք գնում__»: «Ես՝ դասի, ընկերս՝ մարզասրահ»:

Ստորոգյալի զեղչումը լինում է **լրիվ** կամ **մասնակի**:

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԻՎ ԶԵՂՉՈՒՄ

Զեղչումը լրիվ է, եթե զեղչված է ստորոգյալն ամբողջությամբ.

Տանտերը միակ դռնից __ներս մտավ__, և մենք՝ նրա հետևից:

Ստորոգյալի լրիվ զեղչումն արտահայտվում է յուրահատուկ բարձրացող հնչերանգով, գրավոր խոսքում՝ բութով, որը դրվում է՝

- զեղչման տեղում, եթե զեղչվել է միջադաս ստորոգյալը.

Նա գնաց դեպի դուռը, որի ճակատին __փակցրած էր__ գոմաղբ, դրա վրա՝ ձվերի ներկած կճեպներից խաչ:

- ենթակայի վրա (վերջինիս վերջադաս կամ զեղչված լինելու դեպքում՝ մեկ այլ անդամի վրա), եթե զեղչվել է վերջադաս ստորոգյալը.

Գնում է, անտառում մի ծառի բարձրանում, վրան տապ անում, որ ո՛չ ինքը վագրին __պատահի__, ո՛չ վագրը՝ իրեն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասության մեջ միաժամանակ լրիվ զեղչվել կարող են թե՛ ստորոգյալը, թե՛ ենթական.

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉՈՒՄ

Զեղչումը մասնակի է, եթե զեղչված է բաղադրյալ ստորոգյալի հանգույցը կամ պարզ ստորոգյալի օժանդակ բայը.

Կատուն բարձրացել ***էր*** *սեղանի վրա և կերել ձուկը:*

Ձորերը ***դառնում են*** *կիրճեր, և լեռների գագաթները՝ ապառաժներ:*

Խորշակն՝ այրում, իսկ բուքը ծեծում ***էր*** *նրա դեմքը:*

Ստորոգյալի մասնակի զեղչումը բարդ կամ պարզ նախադասության մեջ նշանակվում է բութով, եթե՝

- վերաբերում է նախադասության բոլոր ստորոգյալներին (կամ միակ ստորոգյալին).

Քեֆը՝ քոնը, գեղը՝ փանուփերինը:

Սար ու ձոր՝ փերփերի փոր:

- զեղչված և չզեղչված ստորոգյալների ենթակաները տարբեր են.

Իջնում ***է*** *գիշերն անգութ ու մթին, Եվ այգը՝ բացվում դառն ու մահահոտ:*

Խոսքդ ***պիտի լինի*** *դաշույն, սիրտդ՝ կրակ ահավոր:*

- զեղչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հակադրական հարաբերություն, որն արտահայտված է կամ կարող է արտահայտվել **իսկ**, երբեմն էլ՝ **ոչ թե** շաղկապով.

*Ժամը յոթին նախաճաշում եմ, մեկին՝ ճաշում, (****իսկ****) վեցին՝ ընթրում:*

Ես ուտում եմ ապրելու համար, ***ոչ թե*** *ապրում՝ ուտելու համար:*

- զեղչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հաջորդման հարաբերություն, որն արտահայտված է **ապա, հետո, այնուհետև, վերջապես** կամ ժամանակի այլ մակբայով.

Մի քիչ քայլում ***էինք****,* ***ապա****՝ նստում հանգստանալու:*

ՇԱՂԿԱՊԻ ԶԵՂՉՈՒՄ

Գլխավոր և երկրորդական նախադասությունների՝ շարահարությամբ կապակցության գրեթե բոլոր դեպքերն էլ կարելի է դիտարկել որպես շաղկապի զեղչում: Դրանցից բութով նշանակվում են ստորադասական **որ, թե, եթե, ինչ** շաղկապների և **երբ** շաղկապական բառի զեղչումները.

*Թո՛ւյլ տուր՝ [****որ****] սուզվեմ քո աչքերի անդունդը մութ:*

*Գրեթե երկու տարի է՝ [**ինչ**] իմ ծննդավայրում չեմ եղել:*
*Դու չասացիր՝ [**թե**] ով է այդ անծանոթը:*
*Եղբայրս բռնկուն է. [**եթե**] շատ զայրացնես՝ կպոռթկա:*
*[**Երբ**] Լույսը բացվի՝ մերոնք հարձակման կանցնեն:*

Վարժություններ

1. **Նշեք ստորոգյալի լրիվ զեղչումով նախադասությունները:**
   1) Երեկ ամպ էր, այսօր՝ պարզ արև:
   2) Ամբողջ գերդաստանը պառկում էր խսիրի վրա, ինչպես քարայրի գազանը՝ չոր տերևների վրա:
   3) Հրանտը իմ քրոջ որդին է և Խորենի քենակալը:
   4) Ծնվում էին նախշեր, նռան ճյուղեր, տերևներ, տերևների մեջ՝ երկու թև, որ աղջկան թվում էր երգող թռչուն:
2. **Նշեք ստորոգյալի մասնակի զեղչումով նախադասությունները:**
   1) Սարերից իջնող ջրերը արևամուտին վարարում են, կեսգիշերին՝ աղմկում խոր ձորերում:
   2) Անվերջ կարիքն է մեր դուռը բախում, Սովից մեր հոգնած սիրտը՝ նվաղում:
   3) Բայց տրտմությունս հիմա այլ է, կարոտս՝ ուրիշ:
   4) Լսվեց խուլ գվվոց, ինչպես հողմի շառաչն՝ անտառում:
3. **Նշեք շաղկապի զեղչումով նախադասությունները:**
   1) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում Որն է լավ, որը՝ վատ:
   2) Հիշում եմ՝ երեք օր տեղեկություն չունեի:
   3) Շուտով նրանք պիտի բաժանվեին, որովհետև Լևոնը գնալու էր Մոսկվա՝ սովորելու:
   4) Ճգնում էի իմանալ՝ ժպտաց աղջիկը, երբ հետ նայեցի:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ ժողովրդական ու հոգևոր երգերի լավագույն կատարողներից է:

Ծնվել է 1878 թ. ապրիլի 7–ին Մուշում: 8 տարեկանից երգել է ծննդավայրի եկեղեցում և սովորել վարժարանում: Հոր մահից հետո Մշո հոգևոր թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախա-

նյանը որդեգրել է նրան և ուղարկել սովորելու Մշո Սբ Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Եղել է երգահան Քրիստափոր Կարա–Մուրզայի երգչախմբի մենեղգիչ: Շուրջ 1,5 տարի աշակերտել է Կոմիտասին: 1897–ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, երգել Մակար Եկմալյանի երգչախմբում և եղել նրա օգնականը, ապա նշանակվել է եկեղեցու երգչախմբի ղեկավար:

1904–ին մեկնել է Փարիզ, մասնակցել նորակառույց Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցու օծմանը, նշանակվել է դպրապետ և ղեկավարել եկեղեցու երգչախումբը: Նրա գործունեությանը նյութապես օժանդակել է բարերար Ալեքսանդր Մանթաշյանը: 1904–1906–ին սովորել է Վենսան դ'Էնդիի՝ երգի մասնավոր դպրոցում, դասեր առել նշանավոր երգչուհի Պոլինա Վիարդոյից (նրան համարել է իր երկրորդ մայրը):

1910–ին ավարտել է Փարիզի երաժշտանոցը, հրավիրվել «Գրանդ օպերա». առաջին դերերգը եղել է Ֆաուստը (Շառլ Գունո, «Ֆաուստ»). Փարիզի մամուլի և երաժշտասեր հասարակայնության պահանջով օպերան ներկայացվել է մեկ ամիս շարունակ: Շահմուրադյանին անվանել են Հայկական Կարուզո և համարել Ֆրանսիայի «ամենաթովիչ տենորը»:

1912–ին թողել է իր հաջողակ աշխատանքը օպերային թատրոնում և զբաղվել համերգային գործունեությամբ՝ իրեն նվիրելով հայրենի երգարվեստի լավագույն նմուշների տարածման գործին: 1914–ին՝ Միջազգային երաժշտական ընկերության համագումարի օրերին, մասնակցել է Կոմիտասի կազմակերպած համերգին: Նույն թվականին Կոստանդնուպոլսում նրա կատարմամբ Կոմիտասի մշակած երգերը (հեղինակի նվագակցությամբ) ձայնագրվել են սկավառակների վրա: Նրան տրվել է «Տարոնի սոխակ» պատվանունը:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914–1918 թթ.) տարիներին տեղափոխվել է ԱՄՆ: 1930–ից ապրել է Փարիզում, որտեղ և վախճանվել է 1939 թ. սեպտեմբերի 14–ին:

Առաջադրանքներ

1. Համացանցում գտի՛ր հավելյալ տեղեկություններ Արմենակ Շահմուրադյանի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:

2. «Արմենակ Շահմուրադյան» գրվածքում գտի՛ր զեղչման դեպքեր և որոշի՛ր դրանց տեսակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊ

ԴԱՍ 1. ԿԱՊՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ: ԿԱՊԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ:
ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ 3
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ 6
ԴԱՍ 2. ԿԱՊԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:
ԿԱՊԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՐՈՀՈՒՄԸ 8
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: ԼՈՌՈՒ ԴԱՇՏ 11
ԴԱՍ 3. ԿԱՊԻ ՀՈԼՈՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ 12
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ԵՐՎԱՆԴԱՇԱՏ 15

ՇԱՂԿԱՊ

ԴԱՍ 4. ՇԱՂԿԱՊՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ: ՇԱՂԿԱՊԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ 17
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ 21
ԴԱՍ 5. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ: ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ 22
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: ՍԻՓԱՆ ԼԵՌ 26
ԴԱՍ 6. ՇԱՂԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐ: ՇԱՂԿԱՊԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 27
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ԶՎԱՐԹՆՈՑԻ ՏԱՃԱՐԸ 30

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

ԴԱՍ 7. ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ: ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ 31
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 34
ԴԱՍ 8. ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆԻ ՏՐՈՀՈՒՄԸ, ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 36
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ԵՐԱԶԳԱՎՈՐՍ 39

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 9. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՄԱՍ: ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՏՐՈՀՈՒՄԸ, ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 41
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ. ԾԻՐԱՆ 44

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 10. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 45
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ 49
ԴԱՍ 11. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:
ՊԱՐԶ ՀԱՄԱՌՈՏ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԵՆԹԱԿԱ 50
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ԿՈՇԻԿ 53
ԴԱՍ 12. ՍՏՈՐՈԳՅԱԼ: ՊԱՐԶ ՍՏՈՐՈԳՅԱԼ: ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՅԱԼ:
ՍՏՈՐՈԳԵԼԻ: ՀԱՆԳՈՒՅՑ 55
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ԲԱԳԱՐԱՆ 58
ԴԱՍ 13. ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ 60
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ 63
ԴԱՍ 14. ՊԱՐԶ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ: ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 65
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏ 67

ԴԱՍ 15. ՈՐՈՇԻՉ: ՈՐՈՇԻՉԻ ԵՎ ՈՐՈՇՅԱԼԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ 68
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ԾԻՐԱՆԱՓՈՂ 71
ԴԱՍ 16. ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ 73
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ԳԱՌԶՈՒ 76
ԴԱՍ 17. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ: ԲՈՒՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ 78
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: ՍԱՐԱԿՆ ՀՐԱԲՈՒԽ 81
ԴԱՍ 18. ՄԱՍՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ: ՄԱՍՆԱՎՈՐՈՂ
ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏԻՉ 83
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ 85
ԴԱՍ 19. ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ: ԽՆԴԻՐՆԵՐ: ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ 87
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՎԱՉԳԵՆ ՊԱԼՃՅԱՆ 89
ԴԱՍ 20. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ: ՆԵՐԳՈՐԾՈՂ, ՀԱՆԳՄԱՆ, ԱՆՋԱՏՄԱՆ,
ՄԻՋՈՑԻ, ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ 91
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՀԱՋԱՐԱՇԵՆ 94
ԴԱՍ 21. ՊԱՐԱԳԱՆԵՐ: ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿԻ,
ՁԵՎԻ, ՉԱՓԻ, ՊԱՅՄԱՆԻ 96
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԱՅԳԻ (ՊԱՐԿ) 99
ԴԱՍ 22. ՊԱՐԱԳԱՆԵՐ: ՆՊԱՏԱԿԻ, ՊԱՏՃԱՌԻ, ՀԻՄՈՒՆՔԻ, ՁԻՋՄԱՆ 101
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ՎԱՀԱԳՆ ԱՍՏՎԱԾ 103
ԴԱՍ 23. ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ 105
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՄՈՆԹԵ 108
ԴԱՍ 24. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՋՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ 110
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ԵՐԵՎԱՆԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔ 113
ԴԱՍ 25. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ: ՍՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐ: ՆԵՐԴՐՅԱԼ
ՄԻԱՎՈՐՆԵՐ: ՄԻՋԱՐԿՈՒՄ: ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻԱՎՈՐ: ԿՈՉԱԿԱՆ 114
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ԱՐՄԱՎԻՐ 117
ԴԱՍ 26. ՄԻԱԿԱՁՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԱՆԵՆԹԱԿԱ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:
ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 118
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ: ԱՍՏՂԻԿ ԱՍՏՎԱԾՈՒՀԻ 121
ԴԱՍ 27. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ:
ՀԱՄԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ 122
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ 125
ԴԱՍ 28. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: ԳԵՐԱԴԱՍ ԵՎ
ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒՄԸ,
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ՏՐՈՀՈՒՄԸ 127
ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀ: ԽՈՒՍՏՈՒՓ ԼԵՌ 131
ԴԱՍ 29. ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ: ՈՒՂՂԱԿԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ:
ԱՆՈՒՂՂԱԿԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԽՈՍՔ 133
ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐ: ԴՎԻՆ 135
ԴԱՍ 30. ՁԵՂՉՈՒՄ: ԵՆԹԱԿԱՅԻ ՁԵՂՉՈՒՄ: ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՁԵՂՉՈՒՄ:
ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԼՐԻՎ ՁԵՂՉՈՒՄ: ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉՈՒՄ:
ՇԱՂԿԱՊԻ ՁԵՂՉՈՒՄ 137
ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ 140

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ
ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 7

Սփյուռքի դպրոցների համար

(արևելահայերեն ուսուցմամբ)

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Անահիտ Պետրոսյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Ազնիվ Նասլյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 9 տպ. մամուլ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak